«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

«19» օգոստոսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Շահանե Գյուրջյան
3. Մարիամ Հայրապետյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան
7. Թագուհի Գրիգորյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով համակարգող Արմիդա Գևորգյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ.Պետրոսյան)
2. 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահի ընտրություն և կազմի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
3. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:
(զեկուցող՝ Մ.Պետրոսյան)
4. 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
6. Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. Օտար լեզուներից տրվող գրավոր աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
9. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-9-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
10. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
11. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
12. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման նախնական քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
13. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների

իրականացում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահի ընտրության և կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողն առաջարկեց չփոփոխել Օտար լեզուների մեթոդմիավորման կազմը և նախագահի պաշտոնում թողնել Մարգարիտա Պետրոսյանին՝ գնահատելով նրա պատասխանատվությունը և կազմակերպչական հմտությունները:

Նա նշեց, որ Օտար լեզուների մեթոդմիավորման կազմում ընդգրկված են «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն» և «Անգլերեն» առարկաները, որոնց շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգվում են արդյունավետորեն և նպաստում ուսումնական գործընթացի բարելավմանը:

Արտահայտվեցին՝ Լ. Բաղդասարյանը, Լ. Գրիգորյանը:

Արտահայտվողները միաձայն առաջարկեցին անփոփոխ թողնել Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահի պաշտոնը և 2025-2026 ուսումնական տարում ևս հաստատել Մարգարիտա Պետրոսյանի թեկնածությունը: Նրանք ընդգծեցին, որ վերջինս նախորդ ուսումնական տարում ցուցաբերել է պատասխանատու մոտեցում, արդյունավետ կազմակերպչական աշխատանք և նախաձեռնողականություն, ինչն էլ հիմք է տալիս շարունակելու նրա ղեկավարությամբ իրականացվող ծրագրերն ու նախաձեռնությունները:

Որոշեցին՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահ ընտրել Մարգարիտա Պետրոսյանին և հաստատել մեթոդմիավորման կազմը՝ ընդգրկելով «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն», «Անգլերեն» առարկաները դասավանդող ուսուցիչներին:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարում մեթոդմիավորման գործունեության արդյունքները, կարևորեց իրականացված աշխատանքների արդյունավետությունը, ձեռքբերումներն ու հաջողությունները: Նա նշեց, որ անցնող ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորումը նպաստել է ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը, ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և համագործակցային միջավայրի ամրապնդմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Մեթոդմիավորման անդամների մասնակցությամբ կազմակերպվեց բովանդակային և կառուցողական քննարկում, որի ընթացքում վերլուծվեցին ինչպես ձեռքբերումները, այնպես էլ նկատված բացթողումները:

Քննարկման ընթացքում ներկայացվեցին նաև նոր ուսումնական տարվա առաջնահերթությունները, սպասվող փոփոխությունները և դրանց արդյունավետ իրագործման ուղղությամբ նախատեսվող քայլերը, որոնք միտված են ուսումնական գործընթացի շարունակական կատարելագործմանը և նոր չափորոշչային պահանջների լիարժեք իրագործմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման 2024-2025

ուսումնական տարվա կատարողականը:

Լսեցին 4. 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարում 4-րդ և 9-րդ դասարաններում ուսուցումը ևս կիրականացվի նոր ՀՊՉ-ների պահանջներին համապատասխան, ինչը ենթադրում է ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոտեցումներ: Նա ընդգծեց, որ նախքան ուսումնական տարվա մեկնարկը անհրաժեշտ է խորը քննարկել առաջացած հարցերը, մանրամասն ուսումնասիրել երաշխավորված դասագրքերն ու նոր ծրագրերը, որպեսզի ուսուցիչները լիարժեք պատկերացնեն առաջիկա փոփոխությունները և կարողանան արդյունավետ իրականացնել դասավանդումը:

Զեկուցողը հավելեց, որ նման նախապատրաստական աշխատանքը կնպաստի հնարավոր խնդիրների կանխարգելմանը և կվերածի անցումնային փուլը համակարգված ու նպատակային գործընթացի:

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը, Գ. Գրիգորյան, Թ. Գրիգորյանը:

Արտահայտվողները կարևորեցին նախորդ ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներն ու դրանց արդյունքների ամփոփումը, հատկապես՝ նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացի համատեքստում՝ 4-րդ և 9-րդ դասարաններում իրականացված փորձի հիման վրա: Նրանք ընդգծեցին, որ ձեռք բերված փորձը պետք է ծառայեցվի առաջիկա ուսումնական տարվա ընթացքում աշխատանքի որակի բարձրացմանն ու կազմակերպվածության ապահովմանը:

Թագուհի Գրիգորյանը հավելեց, որ անհրաժեշտ է նախորդ տարվա փորձը կիրառել նաև գնահատման գործընթացում, որպեսզի այն իրականացվի նոր չափորոշչային պահանջներին համահունչ՝ ապահովելով աշակերտների իրական առաջադիմության արդար և ամբողջական գնահատում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի մասին քննարկման արդյունքները:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա վերջին նիստի ընթացքում ներկայացվել և քննարկվել է Օտար լեզուների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների՝ անգլերենի, ռուսերենի և ֆրանսերենի նախնական ժամաբաժանումը: Նա ընդգծեց, որ ժամաբաժանման նախնական տարբերակը քննարկվել է մեթոդմիավորման անդամների մասնակցությամբ՝ նպատակ ունենալով ապահովել ուսումնական բեռնվածության հավասարակշռված բաշխում և արդյունավետ կազմակերպում առաջիկա՝ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում:

Արտահայտվեցին՝ Ա.Առստամյանը, Մ. Հայրապետյանը:

Արաքսյա Առստամյանը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը, մանրամասն ներկայացրեց առարկայացանկը, շաբաթական ժամերի առավելագույն քանակը: Արաքսյա Առստամյանը նաև խոսեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին, առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ:

- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ:
- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ:
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ:
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ:
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ:
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ:
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ:
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ:

Արաքսյա Առստամյանն առաջարկեց նաև 1-9-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ):
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների

իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։

- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Որոշեցին՝ 1. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է)։

2. Դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը

հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։

- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

3. Անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
   - 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
   - 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
   - 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
     - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1

դասաժամ)։
- նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Լսեցին 6. Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը՝ ընդգծելով դրանով նախատեսված հիմնական ուղղությունները և իրականացվելիք աշխատանքները։ Նա նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են առարկայական չափորոշիչներին և հաստատված ծրագրերին համապատասխան, ապահովելով ուսումնական գործընթացի ամբողջականությունը և նպատակային կազմակերպումը։

Զեկուցողը հավելեց, որ արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները մշակվել են ուսուցիչների կողմից՝ հիմք ընդունելով երաշխավորված ծրագրերը, ինչը կնպաստի աշակերտների հաղորդակցական և լեզվական կարողությունների զարգացմանը դասարանական ուսուցման լրացուցիչ ձևաչափում։

Արտահայտվեցին՝ Լ. Գրիգորյանը, Լ. Բաղդասարյանը, Ս. Ավանեսյանը։

Արտահայտվողները ընդգծեցին, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են նախարարության կողմից հաստատված ծրագրերի հիման վրա, լիովին համապատասխանելով դպրոցում կիրառվող և հաստատված դասագրքերին, ինչպես նաև նոր չափորոշչային պահանջներին։ Նրանք հավելեցին, որ պլանների մշակման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 14-ի հրամանի պահանջները, ինչը հնարավորություն է տվել ապահովել ուսումնական գործընթացի իրավաչափ և կառուցվածքային կազմակերպում՝ ըստ գործող նորմատիվ

հիմքերի։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, օրացուցային-թեմատիկ պլանները, առարկայական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները և ուսումնական պլանը։

Լսեցին 7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց նախագծային աշխատանքների կազմակերպման և իրականացման փորձը 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում, ընդգծեց դրա արդյունավետությունը և առաջարկեց առաջիկա ուսումնական տարում առաջնորդվել նախորդ տարվա՝ 7-րդ և 8-րդ դասարաններում իրականացված հաջողված փորձով։ Նա հիշեցրեց նախագծային աշխատանքներ կատարելու կարգը՝ ներկայացնելով, որ մեթոդմիավորման անդամների կողմից 7-9-րդ դասարանների համար մշակվել և ներկայացվել են համապատասխան թեմաներ, որոնք արդեն ուղարկվել են աշակերտական խմբերին և ղեկավարներին։

Զեկուցողի խոսքով՝ աշակերտները բաժանվել են խմբերի, ընտրել իրենց հետաքրքրող թեմաներն ու ղեկավարներին, ինչը հնարավորություն է տվել աշխատանքների կազմակերպումը սկսել համակարգված ձևով։

Նա ներկայացրեց նաև Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության, ինչպես նաև ուսումնական նախագծերի իրականացման կարգը, ընդգծելով դրա կարևորությունը նախագծային ուսուցման արդյունավետ կազմակերպման տեսանկյունից։

Զեկուցողն առաջարկեց՝ հիմք ընդունելով վերոնշյալ կարգը, նախագծային աշխատանքների պաշտպանությունները կազմակերպել առարկայական հանձնաժողովներով, որոնց կազմում ընդգրկվեն տվյալ առարկայի կամ հարակից առարկաների ուսուցիչները, մեթոդմիավորման նախագահը և տնօրենի տեղակալը։

Վերջում զեկուցողը ներկայացրեց նաև նախագծային աշխատանքների գնահատման կարգը, որը սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված նախագծային ուսուցման հայեցակարգի և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի մասին հրամանով, ընդգծելով դրա կիրառման անհրաժեշտությունը՝ արդար, թափանցիկ և ձևավորող գնահատման ապահովման համար։

Արտահայտվեցին՝ Թ. Գրիգորյանը, Մ. Պետրոսյանը։

Արտահայտվողները կարևորեցին Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգի պահանջները՝ ընդգծելով դրանց հետևողական և արդյունավետ կիրարկման անհրաժեշտությունը։ Նրանք նշեցին, որ այդ կարգը նպաստում է ուսուցման գործընթացի անհատականացմանը, սովորողների հետազոտական և համագործակցային հմտությունների զարգացմանը։

Բոլորի ուշադրությունը հրավիրվեց նաև այն կարևոր պահանջին, ըստ որի՝ 7-9-րդ դասարաններում յուրաքանչյուր սովորող պետք է տարեկան իրականացնի առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից։ Այս մոտեցումը, ըստ արտահայտվողների, խթանում է աշակերտների ինքնուրույն մտածողությունը, պատասխանատվության զգացումը և ստեղծագործական կարողությունների դրսևորումը։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել նախագծային աշխատանքների թեմաները,

պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է):

Լսեցին 8. Օտար լեզուներից տրվող գրավոր աշխատանքների, թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը կարևորեց գրավոր աշխատանքների կազմակերպման և դրանց անաչառ անցկացման նշանակությունը, ընդգծելով, որ դրանք ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ են՝ աշակերտների գիտելիքների, հմտությունների և կարողությունների իրական մակարդակը գնահատելու համար:

Նա հիշեցրեց, որ գրավոր աշխատանքների քանակը ցանկալի է համապատասխանեցնել առարկայի շաբաթական ժամաքանակին՝ կիսամյակի կտրվածքով, ինչը թույլ է տալիս պահպանել գնահատման հավասարակշռված մոտեցումը: Միևնույն ժամանակ զեկուցողը հավելեց, որ գրավորների քանակը կարող է փոփոխվել՝ ելնելով ուսուցիչների հիմնավորված առաջարկություններից, ինչը հնարավորություն կտա առավել ճկուն ձևով կազմակերպել ուսումնական գործընթացը՝ հաշվի առնելով դասարանի առանձնահատկությունները և թեմատիկ բովանդակությունը:

Արտահայտվեցին՝ Լ. Գրիգորյանը, Ս. Ավանեսյանը, Գ. Գրիգորյանը:

Արտահայտվողները առաջարկեցին կատարել որոշ փոփոխություններ գրավոր աշխատանքների քանակի մեջ, հաշվի առնելով առարկաների առանձնահատկությունները և ուսումնական բովանդակության ծավալը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց գնահատման գործընթացի միասնական և համակարգված կազմակերպման անհրաժեշտությունը՝ նշելով, որ ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, այնպես էլ 2025-2026 ուսումնական տարում 1-9-րդ դասարանների բոլոր գրավոր աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը պետք է նախապես հաստատվեն մեթոդական միավորումների կողմից, և միայն այդ հաստատումից հետո կարող են կիրառվել ուսումնական գործընթացում:

Նա հիմնավորեց այս պահանջը այն հանգամանքով, որ զուգահեռ դասարաններում նույն առարկաներից պետք է կազմակերպվեն նույնաբովանդակ աշխատանքներ, ինչը հնարավորություն կտա ապահովել գնահատման հավասար պայմաններ բոլոր աշակերտների համար և հնարավորություն կտա պատշաճ կերպով հաշվարկել դասարանների միջին որակական ցուցանիշները:

Որոշեցին՝ Ապահովել ուսումնական տարվա ընթացքում սահմանված գրավոր աշխատանքների, թեմաների ամփոփումների քանակն ու բազմազանությունը՝ համապատասխան հավելվածի, ինչպես նաև 2025-2026 ուսումնական տարվա բոլոր առարկաներից տրվող գրավոր աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը հաստատել մեթոդմիավորման կողմից, որից հետո կիրառել (կցվում է):

Լսեցին 9. Ըստ նոր ՀՊՉ-ների 2-9-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2025-2026 ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան: Ըստ այդ չափանիշների 2025-2026 ուսումնական տարում 2-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել

28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը

Արտահայտվողը նշեց, որ նախորդ ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով ուսուցանվող դասարաններում կիրառված գնահատման չափանիշները արդյունավետ են եղել և լիովին արդարացրել են իրենց: Նա ընդգծեց, որ այս փորձը պետք է շարունակվի նաև 2025-2026 ուսումնական տարում, քանի որ այն նպաստում է գնահատման համակարգի թափանցիկությանը և արդարությանը:

Արտահայտվողն առաջարկեց, որ ուսուցիչները շարունակեն ձեռքի տակ ունենալ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները» և անհրաժեշտության դեպքում օգտվեն դրանցից՝ պահպանելով սահմանված սկզբունքներն ու մոտեցումները:

Նա նաև առաջարկեց հավանության արժանացնել առաջարկվող ձևերն ու մեթոդները, ընդգծելով, որ դրանք կնպաստեն գնահատման համակարգի կատարելագործմանը, և սույն հարցը քննարկել մանկավարժական խորհրդի առաջիկա նիստում, որպեսզի ընդունված մոտեցումները կիրառվեն միասնական և համակարգված ձևով ողջ ուսումնական հաստատությունում:

Որոշեցին՝ Հաստատել նոր ՀՊՉ-ների համաձայն 2-9-րդ, դասարաններում գնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ինչպես նաև Օտար լեզուների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2025-2026 ուսումնական տարում 2-9-րդ, դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել

28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 10. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածության մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն իրականացվում է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի

յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.

2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա, ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին հետ մնացող և ցածր առաջադիմություն ցուցաբերող աշակերտների հանդեպ նպատակային աշխատանքների կազմակերպումը: Նրանք առաջարկեցին, որ ուսումնառության ընթացքում՝ հայտորոշիչ և ձևավորող գնահատումներում, ինչպես նաև բանավոր հարցումներում ցածր արդյունքներ գրանցած աշակերտները, պարտադիր ներգրավվեն երկարօրյա խմբերի աշխատանքներում:

Ընդգծվեց, որ նման ձևաչափով աշխատանքը հնարավորություն կտա ապահովել անհատական մոտեցում յուրաքանչյուր սովորողի նկատմամբ, լրացնել ուսումնառության ընթացքում առաջացած բացերը և նպաստել նրանց առաջադիմության բարձրացմանը՝ ապահովելով կրթական հավասար հնարավորություններ բոլոր աշակերտների համար:

Որոշեցին՝ Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

Լսեցին 11. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ լրացման կարգը՝ մանրամասնելով դրանց կազմման փուլերն ու պահանջները: Նա ներկայացրեց նաև 2025-2026 ուսումնական տարում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) աշակերտների հետ նախատեսվող հիմնական աշխատանքների ուղղությունները՝ ընդգծելով ուսումնական գործընթացում պարզեցման և անհատական մոտեցման կիրառման անհրաժեշտությունը:

Զեկուցողը կոնկրետ օրինակներով ցուցադրեց ԱՈՒՊ-ների լրացման ձևաչափը, ներկայացրեց կիրառվող մեթոդները և արդյունավետության գնահատման եղանակները:

Նա նշեց, որ նոր ուսումնական տարվա սկզբին դպրոցում գրանցված է 18 ԿԱՊԿՈՒ աշակերտ, որոնց հետ աշխատանքը պետք է իրականացվի հատուկ սահմանված կարգով և ըստ հաստատված գրաֆիկի:

Զեկուցողը նաև առանձին անդրադարձ կատարեց յուրաքանչյուր աշակերտի անհատական կրթական կարիքներին, ներկայացրեց նրանց հետ տարվող աշխատանքների պլանավորված ժամանակացույցն ու պատասխանատուներին՝ կարևորելով համագործակցությունը ծնողների, դասղեկների և մասնագետների հետ:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ դպրոցում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքները մշտապես իրականացվել են պատշաճ մակարդակով, և նախորդ ուսումնական տարին ևս այդ առումով

բացառություն չի եղել: Նա առանձնահատուկ ուշադրություն հրավիրեց ծանր խնդիրներով աշակերտների հետ տարվող աշխատանքի վրա, ընդգծելով, որ այդ գործընթացը պահանջում է հատուկ հմտություններ, համբերատարություն և մասնագիտական մոտեցում:
Արտահայտվողը կարևորեց, որ ԱՈՒՊ-ները պետք է լրացվեն սահմանված կարգին համապատասխան, իսկ պարզեցումները կատարվեն՝ ելնելով ԿԱՊԿՈՒ աշակերտների անհատական կարողություններից և ընդունակություններից:
Սերգեյ Ավանեսյանը նաև շեշտեց դիտարկման թերթիկների պատշաճ լրացման, ինչպես նաև ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժի և հոգեբանի միջև համագործակցային աշխատանքի կարևորությունը՝ նպատակ ունենալով ապահովել այդ աշակերտների լիարժեք ընդգրկումը կրթական գործընթացում և նրանց անհատական առաջընթացի հետևողական դիտարկումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան, սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

Լսեցին 12. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի և դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտությունը, ընդգծելով, որ դասի այս տիպերը օրինակելի և ուսուցանող բնույթ ունեն, քանի որ դրանց ընթացքում մանրամասնորեն ցուցադրվում են դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման բոլոր փուլերն ու բաղադրիչները:
Կարևորվեց նաև բաց դասերի անցկացումը, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին կիսվել լավագույն փորձով, տարածել ձեռք բերած արդյունավետ մեթոդներն ու կազմակերպչական մոտեցումները՝ նպաստելով մասնագիտական զարգացմանը և համագործակցային միջավայրի ձևավորմանը:
Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների և միջոցառումների ժամանակացույցի նախագիծը, որը կոչված է ապահովելու դրանց համակարգված և նպատակային իրականացումը ուսումնական տարվա ընթացքում:

Արտահայտվեցին՝ Շ. Գյուրջյանը, Թ. Գրիգորյանը:

Արտահայտվողները առաջարկեցին, որ ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, 2025-2026 ուսումնական տարում ևս անհրաժեշտ է շարունակել գործել նույն սկզբունքով՝ բաց դասերն ու բաց դաս-միջոցառումները կազմակերպելով սահմանված ժամանակացույցի համաձայն: Նրանք կարևորեցին նաև, որ յուրաքանչյուր բաց դաս ունենա հստակ նպատակային ուղղվածություն և մեթոդական արժեք, որպեսզի արդյունքները հնարավոր լինի կիրառել մյուս ուսուցիչների աշխատանքում՝ փորձի փոխանակման և մասնագիտական զարգացման նպատակով:

Որոշեցին՝ Օտար լեզուների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

Լսեցին 13. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումները, իրականացվում և արձանագրվում են հատուկ ձևանմուշներով նախատեսված արձանագրությունների թղթերում, որտեղ

հստակ սահմանված են գնահատման չափանիշներ: Արաքսյա Առստամյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը լիովին համապատասխանում է սահմանված կարգին, ապահովում է դասապրոցեսի գնահատման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը: Նա առաջարկեց, որ յուրաքանչյուր ուսուցչի մոտ կիսամյակի ընթացքում իրականացվի առնվազն երեք դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսում, որը կծառայի փորձի փոխանակման նպատակին: Բոլոր դասալսումները պետք է արձանագրվեն հաստատված ձևանմուշներով, իսկ կիսամյակի ավարտին՝ արխիվացվեն սահմանված կարգով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ երկու ուսումնական տարիների ընթացքում դասալսումների կազմակերպման և արձանագրման փորձը եղել է դրական ու արդյունավետ: Նրանք նպատակահարմար համարեցին 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ևս պահպանել նույն սկզբունքը, շարունակել աշխատանքը հաստատված ձևանմուշներով և սահմանված կարգին համապատասխան՝ ապահովելով դասերի դիտարկման շարունակականությունն ու որակի բարձրացումը:

Որոշեցին՝ 2025-2026 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում դպրոցի կողմից մշակված ձևաթղթով, այդ թվում՝ փոխադարձ դասալսում: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհրդի ամփոփիչ նիստում:

Մ/Մ նախագահ՝ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

«24» սեպտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Մարիամ Հայրապետյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Թագուհի Գրիգորյան
7. Լիանա Գրիգորյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ՄԿԱ համակարգող Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Հաղորդում Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
4. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
6. Մեթոդմիավորման կողմից թեմատիկ, ամփոփումները բանավոր հարցման միջոցով իրականացնելու աշխատանքների հետ կապված հարցերի քննարկում և հանձնարարականներ:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ համակողմանիորեն ամփոփելով նիստի արդյունքներն ու արձանագրված ձեռքբերումները: Նա մանրամասն ներկայացրեց կատարված աշխատանքները՝ ընդգծելով, որ նախորդ նիստում ընդունված որոշումները և նախատեսված միջոցառումները իրականացվել են պատշաճ և սահմանված ժամկետներում:

Զեկուցողը նաև անդրադարձավ ընթացիկ գործընթացներին՝ շեշտադրելով իրականացված միջոցառումների արդյունավետությունն ու դրանց ազդեցությունը ուսուցման որակի բարձրացման վրա: Նա կարևորեց մեթոդմիավորման անդամների միջև ձևավորված համագործակցային միջավայրը՝ նշելով, որ փոխադարձ փորձի փոխանակումն ու թիմային աշխատանքը նպաստում են կրթական նպատակների ավելի հաջող իրագործմանը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների կազմակերպման գործընթացը՝ շեշտելով դրանց նշանակությունը ուսուցման որակի բարձրացման, մասնագիտական փորձի փոխանակման և մեթոդական համագործակցության ամրապնդման գործում: Նա հատուկ ուշադրություն դարձրեց 4-րդ և 9-րդ դասարաններում նախատեսվող դասալսումներին՝ ընդգծելով, որ անհրաժեշտ է արդյունավետորեն կիրառել նախորդ ուսումնական տարվա հաջող փորձը:

Զեկուցողի խոսքով՝ նախորդ շրջանում իրականացված դասալսումները հնարավորություն են տվել ժամանակին հայտնաբերել նոր չափորոշչային դասարաններում առաջացած դժվարությունները և գտնել դրանց արդյունավետ լուծումներ՝ համատեղ քննարկումների և վերլուծությունների միջոցով:

Նա առաջարկեց 4-րդ և 9-րդ դասարանների առաջիկա դասալսումներին մոտենալ առավել նպատակային և համակարգված ձևով՝ ապահովելով դիտարկումների խորքային վերլուծություն և արդյունքների համատեղ քննարկում: Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է դասալսումների ընթացքում արձանագրված խնդիրների հիման վրա մշակել գործնական առաջարկներ, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետության և մեթոդական աշխատանքի շարունակական բարելավմանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Գ. Գրիգորյանը, Լ. Բաղդասարյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց 4-րդ, 9-րդ դասարաններում իրականացվող դասալսումների նկատմամբ առավել նպատակային և համակարգված մոտեցման անհրաժեշտությունը՝ ընդգծելով դրանց դերը ուսուցման որակի և մեթոդական աշխատանքի բարձրացման գործում: Նա առաջարկեց շարունակաբար աջակցել ուսուցիչներին՝ հատկապես նոր չափորոշչային դասագրքերի և ծրագրային պահանջների արդյունավետ իրականացման հարցում: Ավանեսյանի համոզմամբ՝ փոխադարձ դասալսումները պետք է դառնան համագործակցային աշխատանքի ամրապնդման կարևոր միջոց. դրանց արդյունքում ուսուցիչները պետք է համատեղ վերլուծեն առաջացած խնդիրները և կազմակերպեն հետագա աշխատանքը՝ հիմնվելով ընդհանուր և մասնագիտական որոշումների վրա:

Լուսինե Բաղդասարյանը հավելեց, որ դասալսման հիմնական նպատակը պետք է լինի ոչ թե վերահսկողությունը, այլ մասնագիտական աջակցությունն ու փորձի փոխանակումը: Նրա խոսքով՝ այդ գործընթացը նպաստում է ուսուցչի ինքնազարգացմանը, ստեղծագործական մտածողության ձևավորմանը և դասի որակի բարձրացմանը: Նա նաև կարևորեց դասալսումների արդյունավետության բարձրացումը հատկապես 2-9-րդ դասարաններում՝ ընդգծելով նոր չափորոշչային պահանջներին հետևելու անհրաժեշտությունը: Բաղդասարյանը նշեց, որ նպատակահարմար է շարունակել աշխատել նախորդ ուսումնական տարում ձևավորված

համագործակցային և գործընկերային սկզբունքներով։
Գայանե Գրիգորյանը ևս բարձր գնահատեց դասալսումների դերը՝ նշելով, որ դրանք նպաստում են ինչպես դասալսողի, այնպես էլ դասալսվողի մասնագիտական աճին։ Նրա կարծիքով՝ դասալսումները հնարավորություն են տալիս բացահայտել նոր մեթոդներ և արդյունավետ ուսուցման մոտեցումներ, որոնք կարելի է ներդնել դասապրոցեսում։ Գրիգորյանը շեշտեց նաև դասալսումներից հետո կազմակերպվող քննարկումների կարևորությունը՝ ընդգծելով, որ անհրաժեշտ է ապահովել բաց, կառուցողական և գործընկերային մթնոլորտ՝ խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ միասնական քայլերի մշակման համար։

Որոշեցին՝ 2025-2026 ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը երեք դասալսում՝ մշակված դասալսման թերթիկի պահանջներին համապատասխան, հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ հատկապես ուշադրություն դարձնելով 9-րդ դասարանում ուսումնասիրվող առարկաներին։

Լսեցին 4. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչ–ուսուցչի օգնական–հատուկ մանկավարժ–հոգեբան համագործակցության նշանակությունը՝ ընդգծելով, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքը պետք է լինի բոլոր մասնագետների ուշադրության և մշտական համագործակցության առանցքում։ Նա նշեց, որ անհրաժեշտ է ապահովել յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ աշակերտի լիարժեք ընդգրկվածությունը դասապրոցեսում՝ հաշվի առնելով նրանց անհատական կարողությունները, զարգացման առանձնահատկությունները և ուսուցման տեմպը։
Զեկուցողը ներկայացրեց նաև 2025-2026 ուսումնական տարում կատարված փոփոխությունները՝ նշելով, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթության կազմակերպումը շարունակում է մնալ դպրոցի առաջնահերթ ուղղություններից մեկը։ Նա տեղեկացրեց, որ ուսումնական տարվա մեկնարկից սկսած իրականացվում է ԱՈՒՊ-ների նոր ձևաչափով լրացման գործընթացը, որը, իր կառուցվածքով և հստակ ցուցանիշներով, դարձրել է աշխատանքը ավելի համակարգված, արդյունավետ և հասկանալի բոլոր մասնակիցների համար։ Զեկուցողի խոսքով՝ ուսուցիչները կարողանում են ավելի հստակ ձևակերպել կրթական նպատակներն ու սպասվող արդյունքները՝ ապահովելով անհատական մոտեցման սկզբունքի իրագործումը։
Նա առանձնահատուկ ուշադրություն դարձրեց նաև ուսուցիչ–ծնող համագործակցության ամրապնդմանը՝ կարևորելով կանոնավոր շփումների և համատեղ քննարկումների կազմակերպումը ուսուցչի, ուսուցչի օգնականի, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ծնողի միջև։ Զեկուցողի կարծիքով՝ նման փոխգործակցությունը թույլ է տալիս ժամանակին հայտնաբերել և կանխել հնարավոր խնդիրները, ինչպես նաև ստեղծել աջակցող միջավայր, որն ապահովում է ԿԱՊԿՈՒ աշակերտների հաջող ինտեգրումն ու առաջընթացը ուսումնական գործընթացում։

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը, Մ. Հայրապետյանը։

Արտահայտվողները նշեցին, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում հաճախ առաջանում են տարբեր դժվարություններ, որոնք պահանջում են անհատական մոտեցում և թիմային համագործակցային ջանքեր։ Նրանց կարծիքով՝ նման իրավիճակներում անհրաժեշտ է ցուցաբերել առավել զգայուն և նպատակային վերաբերմունք յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ՝ ապահովելով մասնագետների՝ ուսուցչի, ուսուցչի օգնականի,

հոգեբանի և հատուկ մանկավարժի արդյունավետ փոխգործակցությունը:
Մարիամ Հայրապետյանը նշեց, որ առկա են ԿԱՊԿՈւ աշակերտներ, որոնց հետ աշխատանքը երբեմն դժվար է ոչ միայն ուսուցչի, այլև ուսուցչի օգնականի համար: Նա առաջարկեց խորացնել համագործակցությունը ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ՝ նպատակ ունենալով բարձրացնել այդ աշակերտների ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին և ապահովել ԱՈՒՊ-ով ու դասի պլանով սահմանված կրթական նպատակների ամբողջական իրականացումը:
Պետրոսյանը կարևորեց նաև ծնողների դերակատարությունը և նրանց հետ շարունակական համագործակցության անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ ծնողի ներգրավվածությունը ուսումնական գործընթացում կարևոր նախապայման է ԿԱՊԿՈւ աշակերտների լիարժեք ներառման, հուզական կայունության և կրթական առաջընթացի ապահովման համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն զեկույցը, ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել հանդիպումներ ուսուցիչ-ուսուցչի օգնական-հոգեբան-հատուկ մանկավարժ-ծնող ձևաչափով և փորձել աշխատաել թիմային:

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյանը)
Զեկուցողը հիշեցրեց մատենավարության իրականացման կարգը՝ նշելով, որ 2025-2026 ուսումնական տարում այն պետք է կազմակերպել նոր պահանջներին և գործող կարգավորումներին համապատասխան: Նա կարևորեց մատենավարության գործընթացի պատասխանատվության բարձր մակարդակի պահպանումը՝ ընդգծելով, որ աշխատանքը պետք է իրականացվի համակարգված, ճշգրիտ և սահմանված ժամկետներում:
Զեկուցողն առանձնահատուկ ուշադրություն դարձրեց նաև նոր չափորոշչային դասարաններում կիրառվող գնահատման համակարգում կատարված փոփոխություններին՝ շեշտելով դրանց հետևողականորեն կիրառելու անհրաժեշտությունը: Նրա խոսքով՝ գնահատման գործընթացը պետք է լինի օբյեկտիվ, թափանցիկ և լիովին համապատասխան հաստատված չափորոշիչներին՝ ապահովելով յուրաքանչյուր աշակերտի ձեռքբերումների արդար ու հավաստի գնահատումը:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը, Շ. Գյուրջյանը:
Առստանյանը նշեց, որ անհրաժեշտ է գրանցումները կատարել հաստատված և ներբեռնված ՕԹՊ-ներին (օրինակելի թղթային փաստաթղթերին) համապատասխան՝ ապահովելով փաստաթղթերի միասնականությունը, ճշգրտությունը և ձևավորման պահանջներին համապատասխանությունը: Նա հանձնարարեց մեթոդմիավորման նախագահին իրականացնել շաբաթական պարբերական ստուգումներ՝ վերահսկելու մատենավարական աշխատանքների ընթացքը, ապահովելու դրանց որակը և ամփոփ տվյալները ներկայացնելու ուսումնական մասին:
Գյուրջյանը կարևորեց աշխատանքի կարգապահության և պատասխանատվության բարձր մակարդակի պահպանումը՝ հորդորելով ուսուցիչներին լինել առավել ուշադիր փաստաթղթերի վարումն ու ժամկետների պահպանումը կազմակերպելիս: Նա հավելեց, որ առաջացած խնդիրների, անորոշությունների կամ տեխնիկական դժվարությունների դեպքում անհրաժեշտ է անմիջապես դիմել ուսումնական մասին՝ ապահովելու ժամանակին տրված խորհրդատվությունը և կանխելու հնարավոր բացթողումները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մատյանների ընթացիկ ստուգման արդյունքները: Մեթոդմիավորման նախագահին պարտավորեցնել իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել տնօրենի պաշտոնակատարին: Կազմակերպել խորհրդատվություն և անհրաժեշտ

աջակցություն ուսուցիչներին՝ առաջացած խնդիրների արդյունավետ լուծման նպատակով։

Լսեցին 6. Մեթոդմիավորման կողմից թեմատիկ, ամփոփումները բանավոր հարցման միջոցով իրականացնելու աշխատանքների հետ կապված հարցերի քննարկման և հանձնարարականների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց 2-9-րդ դասարաններում թեմատիկ գրավոր աշխատանքների կազմակերպման և իրականացման հարցերի քննարկումը՝ ընդգծելով դրանց համապատասխանության անհրաժեշտությունը նոր չափորոշչային պահանջներին։ Նա նշեց, որ թեմատիկ աշխատանքները պետք է դառնան ոչ միայն գնահատման, այլև ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց՝ հնարավորություն տալով բացահայտել սովորողների գիտելիքների խորությունը, գործնական հմտությունները և ստեղծագործական մտածողությունը։

Առստամյանն ընդգծեց, որ նպատակահարմար է շարունակել կիրառել նախորդ ուսումնական տարվա արդյունավետ փորձը՝ զարգացնելով սովորողների աշխատելու հմտությունները և ընդլայնելով կիրառվող մեթոդների ու հնարքների շրջանակը բոլոր դասարաններում։ Նրա խոսքով՝ այս մոտեցումը կնպաստի գնահատման գործընթացի բազմակողմանիությանը և թույլ կտա ստանալ առավել ամբողջական պատկեր սովորողների առաջադիմության, կարողությունների և ուսումնառական դինամիկայի մասին։

Արտահայտվեցին՝ Գ. Գրիգորյանը, Թ. Գրիգորյանը։

Գայանե Գրիգորյանն ընդգծեց, որ իրականացվող բոլոր աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է ցուցաբերել առավելագույն ուշադրություն նոր չափորոշչային պահանջների պահպանման նկատմամբ՝ դրանք դիտարկելով որպես ուսումնական գործընթացի որակի բարձրացման և արդյունավետության ապահովման հիմնարար պայման։ Նա նշեց, որ չափորոշչային դրույթների հետևողական կիրառումը հնարավորություն է տալիս ապահովել գնահատման միասնական մոտեցումներ և բարձրացնել ուսուցման համակարգվածությունը։

Թագուհի Գրիգորյանը հավելեց, որ բանավոր հարցման կազմակերպման ժամանակ կարևոր է ապահովել առաջադրանքների ձևերի և բովանդակության բազմազանությունը՝ ներառելով հարցաշարեր, քարտային և բանավոր թեստային առաջադրանքներ, ինչպես նաև ուսուցչի կողմից ընտրված այլ նպատակահարմար ձևաչափեր։ Նրա խոսքով՝ նման բազմազան մոտեցումը հնարավորություն է տալիս առավել ամբողջական և հավաստի կերպով գնահատել սովորողների գիտելիքները, հաղորդակցական կարողությունները, տրամաբանական մտածողությունը և արտահայտվելու հմտությունները։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ամփոփումները բանավոր հարցման միջոցով իրականացնելու աշխատանքների հետ կապված հարցերի քննարկման և հանձնարարականների մասին զեկուցումը։

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) շրջանակում սեպտեմբեր ամսվա ընթացքում նախատեսված և իրականացված միջոցառումները։ Նա ընդգծեց, որ ինչպես սեպտեմբեր, այնպես էլ նախորդ՝ օգոստոս ամսվա ընթացքում, բոլոր պլանային

աշխատանքները կատարվել են սահմանված կարգով՝ համաձայն հաստատված ժամանակացույցի և նպատակների։

Բոլոր ծրագրավորված գործողությունները իրականացվել են համակարգված, նպատակային և համագործակցային մոտեցմամբ, ինչը ապահովել է ուսումնական տարվա արդյունավետ մեկնարկը, կրթական գործընթացի բնականոն կազմակերպումը և ուսուցման միջավայրի ներդաշնակ զարգացումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈւԴԱՏՊ) նախատեսված բոլոր գործառույթներն ու միջոցառումները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ և ժամանակին։ Նրանք ընդգծեցին, որ աշխատանքների իրականացման ընթացքում բացթողումներ կամ թերակատարումներ չեն արձանագրվել, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում, ինչն ապահովել է պլանի արդյունավետ և նպատակային իրականացումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

«20» հոկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Շահանե Գյուրջյան
3. Մարիամ Հայրապետյան
4. Աննա Թելունց
5. Լուսինե Բաղդասարյան
6. Լիանա Գրիգորյան
7. Թագուհի Գրիգորյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը և տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Հաղորդում Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպում։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
5. 9-րդ դասարանում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքներ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ մանրամասն անդրադառնալով իրականացրած աշխատանքներին, դրանց ընթացքին ու ստացված արդյունքներին։ Նրա խոսքով՝ նախորդ նիստում ընդունված բոլոր որոշումները կատարվել են ամբողջությամբ և սահմանված ժամկետներում։
Ամփոփելով կատարվածը՝ զեկուցողը ընդգծեց, որ գործընթացը ընթացել է կազմակերպված, պատասխանատու և արդյունավետ ձևով, իսկ իրականացված քայլերը նպաստել են ծրագրային պահանջների կայուն և նպատակային իրագործմանը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը առաջարկեց օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցող աշակերտների հետ տարվող աշխատանքները կազմակերպել ճիշտ, համակարգված և շարունակական ձևով։ Նա կարևորեց, որ արդյունավետ արդյունքի համար անհրաժեշտ է շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ վերահսկել տրված հանձնարարությունների կատարման ընթացքը՝ ապահովելով աշակերտների պատրաստության բարձր մակարդակը և կայուն առաջադիմությունը։

Նրա խոսքով՝ աշխատանքները պետք է իրականացվեն ըստ նախապես մշակված, փուլային և հստակ կառուցված պլանի, որը կընդգրկի թեմատիկ պատրաստություն, փորձնական հանձնարարությունների իրականացում, գիտելիքների ամրապնդում և արդյունքների վերլուծություն։

Զեկուցողը նաև նշեց, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը կիրականացվի 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում սահմանված նոր կարգի համաձայն՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունն, արդյունավետությունը և հավասար հնարավորությունները բոլոր մասնակիցների համար։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ա. Առստամյանը

Արտահայտվողները կարևորեցին աշակերտների հետ տարվող աշխատանքների պատշաճ կազմակերպումն ու արդյունավետ իրականացումը՝ նշելով, որ շարունակական և նպատակային ջանքերը հանգեցնում են կարևոր արդյունքների ու նոր ձեռքբերումների։ Նրանք ընդգծեցին, որ դպրոցական փուլում արձանագրված հաջողությունները հանդիսանում են կայուն հիմք օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցելու համար, ինչն իր հերթին աշակերտներին հնարավորություն է տալիս առավել լայնորեն ներկայացնելու, զարգացնելու և ամրապնդելու իրենց գիտելիքներն ու կարողությունները։

Արաքսյա Առուստամյանը հավելեց, որ անհրաժեշտ է ժամանակին, համակարգված և նպատակային կերպով նախապատրաստվել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով աշակերտների անհատական առանձնահատկություններին, հետաքրքրություններին և պատրաստության մակարդակին։ Նրա խոսքով՝ նման մոտեցումը հնարավորություն կտա յուրաքանչյուր աշակերտի առավելագույնս բացահայտել ու ցուցադրել իր կարողությունները։

Որոշեցին՝ Տալ հանձնարարականներ Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահին և անդամ ուսուցիչներին՝ աշակերտների հետ աշխատանքները կազմակերպել ըստ մշակված անհատական պլանի։

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց ստուգումների արդյունքները՝ մանրամասն անդրադառնալով հայտնաբերված դիտարկումներին և դրանց լուծման համար արված առաջարկություններին։ Նա առանձնակի կարևորեց էլեկտրոնային մատենավարության իրականացման կարգի պահպանումը՝ նշելով, որ անհրաժեշտ է մշտապես հետևել համակարգում կատարվող փոփոխություններին, ուսումնասիրել դրանք և կիրառել աշխատանքում՝ ապահովելով գրանցումների ճշգրտությունն ու միասնականությունը։

Զեկուցողի խոսքով՝ մատենավարության գործընթացում անհրաժեշտ է

օգտվել հստակ, մասնագիտական և համապատասխան խորհրդատվությունից՝ բացառելու գրառումների սխալ մեկնաբանություններն ու տեխնիկական խնդիրները: Նա նաև հիշեցրեց, որ բոլոր գրանցումները պետք է կատարվեն ՕԹՊ-ների՝ օրական թեմատիկ պլանների հիման վրա, պահպանելով սահմանված ժամկետները և խուսափելով որևէ խախտումից:
Այս մոտեցումը, ըստ զեկուցողի, կնպաստի աշխատանքի թափանցիկությանը, պատասխանատվության բարձրացմանը և գնահատման միասնական չափանիշների ապահովմանը:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը, Թ. Գրիգորյանը:

Արաքսյա Առուստամյանը նշեց, որ անհրաժեշտ է պահպանել շարունակական վերահսկողություն ուսուցիչների կողմից մատենավարության ոլորտում իրականացվող ամենօրյա աշխատանքների նկատմամբ՝ կանխելու հնարավոր թերացումները և ապահովելու գործընթացի անխափան ընթացքը: Նա կարևորեց, որ վերահսկողությունը պետք է ուղեկցվի նաև ժամանակին ցուցաբերվող աջակցությամբ:
Նրա խոսքով՝ ուսուցիչներին անհրաժեշտ է տրամադրել խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն մատենավարության ճիշտ և լիարժեք վարման հարցում՝ օգնելով նրանց կողմնորոշվել փոփոխվող պահանջների և կարգերի մեջ: Բացի այդ, նա ընդգծեց, որ անհրաժեշտության դեպքում պետք է կատարել հստակ, կառուցողական դիտողություններ ու առաջարկություններ, որոնք կնպաստեն էլեկտրոնային մատենավարության հաստատված կարգի պահպանմանը, աշխատանքների որակի բարձրացմանը և գործընթացի միասնականությանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները, կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում:

Լսեցին 5. 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ Օտար լեզուների և այլ մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացված դասալսումների և դիտարկումների արդյունքում պարզվել է. 4-րդ և 9-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Նրա խոսքով՝ ուսուցիչներն ունեն պատշաճ մշակված օրացուցային-թեմատիկ պլաններ (ՕԹՊ-ներ), համակարգում առկա են օրվա դասի պլանները, որոնք ձևավորվում են ինքնաշխատ եղանակով, և մատենավարությունը կազմակերպվում է դրանց համապատասխան:
Զեկուցողը ընդգծեց, որ թեմատիկ պլաններում ըստ պահանջի հստակ սահմանված են թեմայի նպատակը և վերջնարդյունքը, ինչը թույլ է տալիս ուսուցիչներին գործել ավելի գիտակցված, նպատակային և պլանավորված:
Քանի որ յուրաքանչյուր օրվա պլանում նշված է դասի ակնկալվող վերջնարդյունքը, ուսուցիչները հստակ պատկերացնում են դասի նպատակն ու արդյունքն՝ ապահովելով սովորողների գիտելիքների և հմտությունների զարգացումը, ինչին, ըստ դիտարկումների, նրանք մեծ մասամբ հաջողությամբ հասնում են:
Հատուկ ուշադրության արժանացել է նաև աշակերտների ներգրավվածությունն ու գնահատման գործընթացը: Արտահայտվել է, որ ներգրավվածության խնդիրներ առավելապես ունեն այն աշակերտները, որոնց մոտ առկա են առաջադիմության բացեր. նրանք ներառվում են երկարօրյա խմբերի աշխատանքներում, որտեղ ուսուցիչներն ու օգնականները համապատասխան աջակցություն են ցուցաբերում՝ առաջնորդվելով ԱՈՒՊ-ներով:
Գնահատման հետ կապված՝ զեկուցողը հիշեցրեց նախորդ տարվա հաջողված

փորձը և առաջարկեց այն կիրառել նաև ընթացիկ ուսումնական տարում՝ ապահովելու նոր գնահատման համակարգի արդյունավետ իրականացումը։ Նա կարևորեց ձևավորող, ամփոփիչ և հայտորոշիչ գնահատման գործիքների ճիշտ ու համաչափ կիրառումը, որոնք հնարավորություն են տալիս ստանալ ամբողջական և օբյեկտիվ պատկերացում յուրաքանչյուր աշակերտի առաջընթացի մասին։

Ամփոփելով՝ զեկուցողը առաջարկեց, որ ուսուցիչները հատուկ ուշադրություն դարձնեն.

- առարկայական ծրագրով նախատեսված կարողությունների զարգացմանը,
- դասերի ընթացքում սահմանված վերջնարդյունքների լիարժեք իրագործմանը,
- աշակերտների ներգրավվածության բարձրացմանը,
- նոր գնահատման համակարգի արդյունավետ կիրառմանը։

Նա կոչ արեց այս ուղղություններով կազմակերպել մեթոդական քննարկումներ՝ փորձի փոխանակման, մասնագիտական համագործակցության և կատարվող աշխատանքի որակի բարձրացման նպատակով։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները միաձայն համաձայնեցին զեկուցողի ներկայացրած դիտարկումներին՝ նշելով, որ դրանք լիովին համահունչ են ուսումնական գործընթացում առկա իրավիճակին և ճիշտ արտացոլում են դրա իրական պատկերը։ Նրանք կարևորեցին մեթոդական քննարկումների և փորձի փոխանակման պարբերական կազմակերպումը՝ ընդգծելով, որ նման համագործակցային հարթակները նպաստում են ուսուցիչների մասնագիտական աճին, գիտելիքների արդիականացմանը և նոր մոտեցումների արդյունավետ կիրառմանը։

Նրանք հավելեցին, որ մեթոդական հանդիպումները հնարավորություն են տալիս ուսուցիչներին մշտապես թարմացնել իրենց մասնագիտական գիտելիքները, ծանոթանալ կրթության ոլորտում ներդրվող նոր պահանջներին ու մեթոդներին, ինչպես նաև ապահովել դասապրոցեսի ավելի ժամանակակից, արդյունավետ և սովորողակենտրոն կազմակերպում

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում կատարված փորձը և աշխատանքները կազմակերպել ՀՊՉ պահանջների համապատասխան:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ միջոցառումների ամփոփ պատկերը։ Նա նշեց, որ ամսվա ընթացքում պլանով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են սահմանված կարգով՝ համապատասխանեցնելով հաստատված ժամանակացույցին և նախանշված նպատակներին։

Զեկուցողը ընդգծեց, որ միջոցառումները կազմակերպվել են համակարգված, նպատակային և համագործակցային ձևով՝ ներգրավելով ուսուցիչների, սովորողների և ծնողների ակտիվ մասնակցությունը։ Նման մոտեցումը նպաստել է կրթական գործընթացի շարունակական զարգացմանը, արդյունավետ հաղորդակցությանը և դպրոցի համայնքային կյանքի ակտիվացմանը։

Արդյունքում՝ հոկտեմբեր ամիսը առանձնացել է նպատակային,

բովանդակալից և արդյունավետ աշխատանքներով, որոնք ապահովել են ուսումնական տարվա կայուն ընթացքը և կրթական ծրագրերի հաջող իրականացումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ՈւԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումները և գործառույթները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ, ժամանակին և արդյունավետ ձևով։ Նրանց խոսքով՝ աշխատանքների իրականացման ընթացքում որևէ բացթողում կամ թերակատարություն չի արձանագրվել, ինչը վկայում է ուսուցիչների բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և մասնագիտական նվիրվածության մասին։

Ավելին՝ ընդգծվեց, որ մեթոդմիավորման գործունեությունը կազմակերպվել է համագործակցային և ստեղծարար միջավայրում, ինչը նպաստել է փորձի արդյունավետ փոխանակմանը, նոր մեթոդների ներդրմանը և կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը։ Արդյունքում ապահովվել է տարեկան պլանի նպատակային և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև դպրոցի մանկավարժական համայնքի միասնական աշխատանքը՝ համատեղ նպատակների հասնելու ուղղությամբ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №4

«24» նոյեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Շահանե Գյուրջյան
3. Մարիամ Հայրապետյան
4. Աննա Թելունց
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան
7. Թագուհի Գրիգորյան

Նիստին ներկա էին տնօրենի պաշտոնակատար Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ներառական կրթության բաժնի աշխատակիցները, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցություն, ընթացիկ աշխատանքների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
5. Փոխադարձ դասալսումների անհրաժեշտության և քննարկման մասին։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիրակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) նոյեմբեր ամսվա աշխատանքներ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Հաղորդում՝Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկույցի ընթացքում ներկայացվեց Օտար լեզուների մեթոդմիավորման վերջին նիստում ընդունված օրակարգային հարցերի իրագործման ընթացքը։ Արձանագրվեցին նիստի հիմնական արդյունքները, վերլուծվեցին իրականացված աշխատանքները, ինչպես նաև շեշտվեց, որ սահմանված բոլոր քայլերն ու ընդունված որոշումները իրականացվել են կազմակերպված և ժամանակացույցին համապատասխան։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության, ընթացիկ աշխատանքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցման ընթացքում առանձնակի շեշտադրվեց հատուկ մանկավարժի և ուսուցչի օգնականների միջև ամենօրյա աշխատանքային քննարկումների կարևորությունը: Նշվեց, որ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը անմիջականորեն պայմանավորված է շարունակական դիտարկումներով, իրավիճակների վերլուծությամբ և առաջացող դժվարությունների ժամանակին արձագանքմամբ: Ընդգծվեց, որ նման քննարկումները պետք է իրականացվեն բոլոր մասնագետների համատեղ ներգրավմամբ՝ յուրաքանչյուր սովորողի կրթական առանձնահատկություններին համապատասխան անհատական մոտեցում ապահովելու նպատակով:

Զեկուցողի խոսքով՝ հաշվետու ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) և դիտարկման թերթիկների կազմումն ու լրացումն իրականացվել են սահմանված պահանջներին և գործող կարգերին համապատասխան: Նա նաև տեղեկացրեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքները կազմակերպվում են ԳՏՄԱԿ-ի մասնագետների մասնակցությամբ, իսկ սահմանված ընթացակարգով՝ յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անցկացվում են բազմակողմանի քննարկումներ: Այդ հանդիպումներին մասնակցում են ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչները, առարկայական ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժը, աշակերտների ծնողները և դպրոցի ղեկավար կազմը:

Զեկուցողը նշեց, որ նման համագործակցային հանդիպումները հնարավորություն են տալիս առավել ամբողջական գնահատելու աշակերտների կրթական կարիքները, ապահովելու նպատակային աջակցություն և շարունակական վերահսկողություն ուսումնական առաջընթացի նկատմամբ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանն իր խոսքում կարևորեց երեխաների տարիքային առանձնահատկությունների պարտադիր հաշվառումը աշխատանքային գործընթացում՝ նշելով, որ վարքագծային դրսևորումների զգալի մասը պայմանավորված է զարգացման փուլային փոփոխություններով: Նա անդրադարձավ նաև աշխատանքի գրագետ կազմակերպման անհրաժեշտությանը և առանձնահատուկ ընդգծեց ծնողների, ուսուցիչների ու աջակցության թիմի միջև արդյունավետ համագործակցության դերը:

Միևնույն ժամանակ քննարկման մասնակիցները շեշտեցին անհատական ուսուցման պլանով (ԱՈՒՊ) սահմանված նպատակների համակարգված և ամբողջական իրագործման կարևորությունը՝ արձանագրելով, որ այն նպաստում է յուրաքանչյուր սովորողի անհատական առաջընթացին և աջակցման գործընթացի ճիշտ պլանավորմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկույցում ներկայացվեցին հաշվետու ժամանակահատվածում իրականացված էլեկտրոնային մատյանների վերահսկման արդյունքները: Անդրադարձ կատարվեց ինչպես իրականացված աշխատանքներին, այնպես էլ ի հայտ եկած թերություններին: Առանձնահատուկ շեշտադրվեց ամփոփիչ աշխատանքների, գործնական առաջադրանքների և ընթացիկ

գնահատականների ժամանակին մուտքագրումը համակարգ, քանի որ նման տվյալների ուշացումը բացասաբար է անդրադառնում գնահատման գործընթացի ամբողջական և թափանցիկ կազմակերպման վրա։

Բացի այդ, զեկուցողը մատնանշեց համակարգի կիրառման ընթացքում արձանագրված որոշ տեխնիկական դժվարություններ։ Նա նաև կարևորեց արդեն գրանցված գնահատականների կրկնակի ստուգման անհրաժեշտությունը՝ տվյալների ճշգրտությունն ապահովելու և սահմանված չափորոշիչներին համապատասխանությունը վերահսկելու նպատակով։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանն իր խոսքում կարևորեց մատենավարության ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի գիտակցված և պատասխանատու մոտեցումը։ Նա տեղեկացրեց, որ իրականացվող ընթացիկ վերահսկումների ընթացքում պարբերաբար բացահայտվում են տարբեր թերություններ, ինչը պայմանավորում է արագ արձագանքի և կազմակերպչական կարգապահության բարձրացման անհրաժեշտությունը։

Նա նաև հորդորեց առավել ուշադրությամբ և հետևողականությամբ մոտենալ տվյալների մուտքագրմանը, գնահատականների փոխանցմանը և էլեկտրոնային մատյանի վարումը սահմանված պահանջներին համապատասխան կազմակերպելուն՝ նշելով, որ այս գործընթացների որակը նշանակալի ազդեցություն ունի ուսումնական աշխատանքի թափանցիկության և արդյունավետության ապահովման վրա։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները

Լսեցին 5. Փոխադարձ դասալսումների անհրաժեշտության և քննարկման մասին հարցը։
(զեկուցող՝ Մ.Պետրոսյան)

Զեկուցման ընթացքում շեշտադրվեց փոխադարձ դասալսումների դերը՝ որպես ուսուցիչների մասնագիտական զարգացման և համագործակցային միջավայրի ձևավորման կարևոր բաղադրիչ։ Նշվեց, որ ուսուցիչները պետք է առավել ակտիվորեն կիրառեն բազմազան մեթոդներ և մոտեցումներ՝ նպաստելու աշակերտների ուսումնառության նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը, ինքնուրույն մտածողության խթանմանը և վերլուծական կարողությունների զարգացմանը։

Զեկուցողը կարևոր համարեց յուրաքանչյուր դասալսումից հետո կազմակերպել նպատակային քննարկումներ մեթոդմիավորման ուսուցիչների մասնակցությամբ՝ ուղղված դասի արդյունավետության բարձրացմանը, կիրառվող մեթոդների կատարելագործմանը և աշակերտների ինքնուրույն կարողությունների ու հմտությունների զարգացման ապահովմանը։

Միևնույն ժամանակ հիշեցվեց նոր ՀՊՉ-ների ներդրման գործնական փուլին առավել մեծ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը։ Ընդգծվեց, որ պետք է շարունակական դարձնել 2-9-րդ դասարաններում կազմակերպվող դասալսումների ընթացքում արձանագրված հարցերի և խնդիրների շուրջ մասնագիտական քննարկումները՝ ապահովելով դրանց համակարգված լուծումը և ուսումնական գործընթացի որակի բարձրացումը։

Արտահայտվեցին՝ Մ. Հայրապետյանը, Լ. Գրիգորյանը։

Քննարկման մասնակիցները կարևորեցին յուրաքանչյուր դասի ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքներն ու փորձը սեփականացնելու, դրանք արդիական մոտեցումներով հարստացնելու և արդյունավետ մեթոդների կիրառման միջոցով առարկայական նպատակների ու նախատեսված վերջնարդյունքների ապահովման անհրաժեշտությունը։

Մարիամ Հայրապետյանն ընդգծեց աշակերտների բանավոր խոսքի մշակույթի ձևավորմանն ուղղված աշխատանքների շարունակականության կարևորությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գրագետ, հստակ արտահայտվելու կարողությունների զարգացմանը և ուղղագրական

դժվարությունների հաղթահարմանը։
Արտահայտվողները նաև արձանագրեցին, որ իրականացված վերլուծություններն ու մասնագիտական քննարկումները ունեցել են դրական ազդեցություն, քանի որ հաջորդ դասալսումների ընթացքում նախկինում նկատված թերություններն ու վրիպումները մեծ մասամբ շտկված էին։
Լիանա Գրիգորյանը նշեց, որ դասապրոցեսը կազմակերպվել է համագործակցային և ժամանակակից մեթոդների կիրառմամբ։ Դասերի ընթացքում իրականացվել են բազմաբնույթ աշխատանքներ՝ խմբային և անհատական ձևաչափերով, ինչի արդյունքում ակնհայտ են եղել սովորողների համագործակցելու, քննադատական մտածողություն դրսևորելու և հանդուրժողականություն ցուցաբերելու կարողություններն ու հմտությունները։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև այլ մ/մ ուսուցիչների հետ։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիրակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) նոյեմբեր ամսվա աշխատանքների կատարման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցման ընթացքում մանրամասն ներկայացվեցին 2025–2026 ուսումնական տարվա նոյեմբեր ամսվա ընթացքում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքները՝ համապատասխան տարվա ուսումնադաստիարակչական պլանի շրջանակին։ Հատուկ շեշտադրվեց, որ ծրագրավորված բոլոր նախաձեռնությունները կազմակերպվել և իրականացվել են նախապես հաստատված ժամանակացույցին համապատասխան, պահպանելով գործող կանոններն ու ընթացակարգերը։
Նշվեց, որ իրականացված աշխատանքները եղել են համակարգված, նպատակային և համագործակցային՝ ապահովելով ուսումնական տարվա արդյունավետ մեկնարկ և կրթական գործընթացի սահուն կազմակերպում։ Վերլուծության ընթացքում բացահայտվեցին նաև որոշ հնարավորություններ գործողությունների արդյունավետությունը ավելի բարձրացնելու համար։
Քննարկումների արդյունքում ընդունվեց որոշում՝ տնօրենության գրավոր աշխատանքները տեղափոխել ուսումնական տարվա երկրորդ կիսամյակ։ Որոշման հիմքում կայանում է այն փաստը, որ դասապրոցեսը կազմակերպվում է երկու հերթով, և ներկայիս պայմաններում հնարավոր չէ պատշաճորեն իրականացնել այդ աշխատանքները՝ պահպանելով արդյունավետության և կազմակերպվածության պահանջները։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Քննարկման մասնակիցները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ ծրագրով նախատեսված բոլոր գործառույթներն ու միջոցառումները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման ուսուցիչներին, իրականացվել են լիարժեք և ժամանակին՝ առանց որևէ բացթողման կամ թերակատարության։ Նրանց գնահատմամբ, ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում, ինչը ապահովել է ծրագրի նպատակների ամբողջական իրագործումը։
Հատուկ շեշտվեց, որ աշխատանքը կազմակերպվել է կանխատեսելի և համակարգված եղանակով՝ կիրառելով արդյունավետ մեթոդաբանական մոտեցումներ։ Սա, իր հերթին, նպաստել է միջոցառումների բարձր որակով անցկացմանը և նախատեսված արդյունքների հասնելուն։
Արտահայտվողները ընդգծեցին, որ նման պլանավորված և համակցված մոտեցումը անհրաժեշտ է պահպանել նաև հետագա ամիսներին՝ ամրապնդելու ձեռք բերված դրական դինամիկան և մասնագիտական մշակույթը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

«22» դեկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Մարիամ Հայրապետյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան
7. Թագուհի Գրիգորյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Հաղորդում Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. Դպրոցական առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. Օտար լեզուների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
9. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
10. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
11. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դոկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
12. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորում, տարակարգ, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներ:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
13. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների

ամսական և կիսամյակային հաշվետվություններ։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

14. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորում։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

15. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցվել է Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգային հարցերի կատարման վերաբերյալ։ Արձանագրվել է, որ բոլոր նախատեսված աշխատանքներն ու ընդունված որոշումները իրականացվել են սահմանված ժամկետներում՝ պահպանելով հաստատված ընթացակարգերն ու պահանջները։ Զեկուցողն ամփոփել է նախորդ քննարկումների արդյունքները, գնահատել կատարված աշխատանքների ամբողջականությունը և արդյունավետությունը՝ շեշտելով համակարգված և պատասխանատու մոտեցման կարևորությունը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը մեկնարկել է 2025 թվականի նոյեմբերի 17-ին՝ ըստ հաստատված ժամանակացույցի։ Նա ներկայացրեց դպրոցի մակարդակում իրականացված նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները՝ կարևորելով օլիմպիադաների անցկացման թափանցիկությունը, արդարությունը և գնահատման օբյեկտիվությունը։

Հիշատակվեց նաև անցկացման կարգը. այս ուսումնական տարում առաջադրանքները կազմվել են կենտրոնացված ձևով և ուղարկվել դպրոցներին պատրաստի տարբերակներով, ինչը նպաստել է գնահատման միասնականությանը և անաչառությանը։ Առանձնահատուկ ընդգծվեց «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն» և «Անգլերեն» առարկաների դպրոցական փուլերի բարձրակարգ կազմակերպումը, ինչպես նաև իրականացված համակարգված և հետևողական աշխատանքները։

Նշվեց, որ olymp.am կայքում արդյունքները հրապարակվում են փուլ առ փուլ, և ամբողջական պատկերի ստացմանը հաջորդող ժամանակահատվածում անհրաժեշտ է համակարգված աշխատանքներ իրականացնել մարզային փուլ անցած աշակերտների հետ՝ բարձրացնելու նրանց պատրաստվածությունը և ապահովելու առավելագույն ցուցանիշների հասնելը։

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը, Թ. Գրիգորյանը

Մարգարիտա Պետրոսյանը կարևորեց առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման արդարությունը, թափանցիկությունն ու անկողմնակալությունը՝ ընդգծելով, որ վերջին տարիներին դպրոցի մակարդակով անցկացման ձևաչափը գրեթե համապատասխանում է մարզային փուլին: Նա առանձնակի շեշտեց օլիմպիադաների կանոնակարգում կատարված փոփոխությունները, ինչպես նաև դրանց պահպանման և հետևողական կիրառման կարևորությունը: Նշվեց նաև, որ անցկացման ողջ ընթացքը վերահսկվել է ոչ մասնագետների կողմից, ինչը ապահովել է գործընթացի լիարժեք օբյեկտիվությունը:

Իր հերթին, Թագուհի Գրիգորյանն ընդգծեց, որ փոփոխությունները դրական ազդեցություն են ունեցել աշակերտների ակտիվության վրա, նպաստել են ավելի լայն մասնակցությանը և հավասար հնարավորությունների ստեղծմանը՝ ամրապնդելով օլիմպիադաների թափանցիկ ու արդյունավետ կազմակերպումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացումը և առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն ամփոփել արդյունքները olymp.am կայքում հրապարակելուց հետո:

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարված գրավոր աշխատանքները համընկնում են հաստատված քանակի և տեսակների հետ: Նա ընդգծեց, որ իրականացված աշխատանքները պետք է համապատասխանեն ուսուցիչների գրանցումներին, ինչպես նաև կատարված ամփոփումների թվին: Համապատասխան ուշադրություն դարձվեց նաև ՕԹՊ-ների կատարողականին՝ գնահատման գործընթացի լիարժեքությունն ապահովելու նպատակով:

Նրա խոսքով՝ նոր չափորոշչային դասարաններում, մասնավորապես 2-9-րդ դասարաններում, աշակերտների գնահատումն իրականացվում է թեմաների ամփոփումների ընթացքում, որոնք կարող են ներառել բանավոր հարցումներ, գրավոր և թեստային աշխատանքներ: Զեկուցողը շեշտեց, որ ամփոփումների քանակն ու տեսակը նույնպես պետք է համապատասխանեն ՕԹՊ-ներին և ՄՄ նիստում հաստատված պահանջներին՝ ապահովելու գնահատման միասնականությունն ու արդարությունը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Լ. Գրիգորյանը:

Սերգեյ Ավանեսյանը ընդգծեց, որ ամփոփիչ գրավոր աշխատանքներ նշանակելիս անհրաժեշտ է խստորեն հետևել չափորոշչային պահանջներին՝ ապահովելով, որ դրանք լիովին համապատասխանեն ՕԹՊ-ներին: Նա տեղեկացրեց, որ մեթոդական միավորումներում հաստատվում են ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքների տեսակներն ու քանակները, և ուսուցիչներն ուսումնական տարվա ընթացքում պարտավոր են իրականացնել դրանք սահմանված ձևով:

Ավանեսյանը միաժամանակ ուշադրություն հրավիրեց աշխատանքի համապատասխանության վրա՝ շեշտելով, որ այս համապատասխանությունը կարևոր նախապայման է էլեկտրոնային մատյաններում գնահատումների և գրանցումների ճշգրիտ ու ճիշտ կատարման համար:

Իր հերթին, Լիանա Գրիգորյանը նշեց, որ ուսուցիչները կարող են ցուցաբերել ստեղծագործական մոտեցում գործնական աշխատանքների ձևերի և բնույթի ընտրության հարցում՝ պահպանելով հաստատված չափորոշիչներն ու պահանջները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի ամփոփիչ գրավոր և գործնական

աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել ստուգումներ ամփոփումների, ամփոփիչ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում օտար լեզուների շրջանակում իրականացված դասալսումների ընթացքը, նպատակները, դիտարկումները և արձանագրված արդյունքները: Նա անդրադարձավ դասալսումների ընթացքում ձեռք բերված դրական փորձին, ժամանակակից և արդյունավետ ուսուցման մեթոդների կիրառմանը, ինչպես նաև ուսումնառության կազմակերպման ընթացքում նկատված դժվարություններին և բարելավման անհրաժեշտ ոլորտներին:

Նշվեց փոխադարձ դասալսումների ավելի հաճախ կազմակերպելու անհրաժեշտությունը, մասնագիտական քննարկումների և դիտարկումների իրականացումը, առկա թերությունների ընդգծումն ու շտկման նպատակով համապատասխան միջոցառումների ձեռնարկումը՝ ուսուցիչների մասնագիտական աճն ու ուսուցման որակի բարձրացումը ապահովելու համար: Զեկուցողը ներկայացրեց նաև առաջին կիսամյակի դասալսումների արդյունքների ամփոփումը:

Բացի այդ, անդրադարձ կատարվեց բաց դասերին և դաս-միջոցառումներին ուսուցիչների մասնակցության մակարդակին, ինչպես նաև դրանց արդյունքների քննարկման և վերլուծության կարևորությանը՝ հետագա աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Մ. Հայրապետյան, Գ. Գրիգորյանը:

Արտահայտվողներն իրենց դիտարկումներում գնահատեցին դասերի կազմակերպման բարձր մակարդակը, ուսուցման մեթոդների բազմազանությունը և աշակերտների ակտիվ մասնակցությունը: Նրանք առաջարկություններ ներկայացրին ուսումնական գործընթացի որակի բարելավման և մեթոդական աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Կարևոր համարվեց դասավանդման մեթոդների ու ռազմավարությունների նպատակային և տեղին կիրառումը, որոնք հնարավորություն են տալիս ներգրավել բոլոր աշակերտներին և մեծացնել ուսումնառության արդյունքաբերությունը:

Բացի այդ, մասնակիցները շեշտեցին համագործակցային մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը դասալսումների ընթացքում: Արդյունքների ամփոփման ընթացքում առանձնակի ուշադրություն դարձվեց ուսուցիչների ցուցաբերած նախաձեռնությանը, առաջարկներին և այն մեթոդներին, որոնց միջոցով վեր հանված խնդիրները քննարկվել և լուծման ուղի են առաջարկվել:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման արդյունքները՝ ըստ առարկաների և դասարանների: Նա նշեց, որ նախագծերը նպատակաուղղված են եղել սովորողների ստեղծագործական, հետազոտական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջառարկայական կապերի

ամրապնդմանը, ինչպես նաև կրթական չափորոշիչների պահանջների իրագործմանը: Անդրադարձ կատարվեց, որ առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 26 նախագծային աշխատանք, որոնցից 7-րդ դասարաններում՝ 9, 8-րդ դասարաններում՝ 9, իսկ 9-րդ դասարաններում՝ 8 աշխատանք, որոնք իրականացվել են հետևյալ առարկաներից՝ «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Աշխարհագրություն», «Գրականություն», «Կերպարվեստ», «Հայոց լեզու», «Արվեստ», «Տեխնոլոգիա», «Երաժշտություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Անգլերեն», «Կենսաբանություն», «Ռուսաց լեզու», «Քիմիա» և «Ֆիզիկա»:

Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները, իսկ իրականացրել են 7–9-րդ դասարանների այն աշակերտները, որոնք ընդգրկված են եղել համապատասխան խմբերում: Հիմք ընդունելով «Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը», մեթոդմիավորման որոշումն ու մանկավարժական խորհրդի որոշումը, նախագծերի պաշտպանությունները կազմակերպվել են առարկայական հանձնաժողովների միջոցով, որոնց կազմում ընդգրկվել են տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները և տնօրենի տեղակալը:

Զեկուցողը հավելեց, որ կարգի համաձայն՝ բոլոր նախագծերն ու դրանց արդյունքները հրապարակվել են դպրոցի կայքում՝ ստեղծելով առանձին էջ, հասանելիության և հանրայնացման նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ և նախագծային աշխատանքների ղեկավարներ

Նախագծային աշխատանքների ղեկավարները մանրամասն ներկայացրին իրենց հաշվետվությունները, աշխատանքի արդյունքները, իրականացման ընթացքում առկա դժվարությունները և ձեռքբերումները:

Մեթոդական միավորման անդամները քննարկեցին ներկայացված տեղեկատվությունը՝ ուշադրություն դարձնելով նախագծերի թեմատիկ համապատասխանությանը, ուսումնական նպատակների իրականացման աստիճանին, սովորողների ակտիվ ներգրավվածությանը, կիրառված մեթոդներին և արձանագրված արդյունքներին: Շեշտադրվեց նախագծերի նպատակային բնույթը, խմբային աշխատանքի արդյունավետ կազմակերպումը և տարբեր ներկայացման ձևաչափերի օգտագործումը, որոնք նպաստեցին աշակերտների ստեղծագործական ու գործնական հմտությունների առավել համակարգված զարգացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում էլեկտրոնային մատենավարության ընթացքի ստուգման արդյունքները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով մատյանում արձանագրված թերությունների վրա: Նա շեշտեց գնահատման գործընթացում կատարված փոփոխություններին խստորեն հետևելու, գնահատականները սահմանված ժամկետներում տալու և դրանք իրականացնել միայն ամփոփիչ աշխատանքների ժամանակ անհրաժեշտությունը:

Առստամյանն առաջարկեց պարբերաբար բանավոր կերպով տեղեկացնել

մեթոդմիավորման անդամներին մատենավարության ընթացքում հայտնաբերված բացթողումների մասին, ինչը կբարձրացնի գրանցումների ճշգրտությունը և կնպաստի գնահատման գործընթացի թափանցիկության ապահովմանը։

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը, Ս. Ավանեսյանը։

Արտահայտվողներն ընդգծեցին, որ անհրաժեշտ է հետևողականորեն վերահսկել ուսուցիչների ամենօրյա աշխատանքը, որը կապված է էլեկտրոնային մատենավարության հետ։ Նրանք հորդորեցին լինել առավել ուշադիր, չշեղվել ՕԹՊ-ներից, ավարտին հասցնելուց հետո կրկնակի ստուգել մատյանը և խնդիրների դեպքում համագործակցել մեթոդական միավորման նախագահի, տնօրենի տեղակալի և անհրաժեշտության դեպքում ԷԿԴԱՄ-ների հետ։

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց, որ անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել գնահատականների ժամանակին մուտքագրմանը, ուսուցանվող թեմաների համապատասխանեցմանը օրացուցային-թեմատիկ պլաններին, ինչպես նաև գրանցումների ճիշտ և ժամանակին կատարմանը՝ ապահովելու գնահատման ճշգրտությունն ու տվյալների ամբողջականությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները։

Լսեցին 8. Օտար լեզուների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար Օտար լեզուների մեթոդմիավորման ժամաբաժանման սխեման՝ նշելով, որ փոփոխություններ չեն նախատեսվում և այն կիրականացվի նախապես հաստատված ձևաչափով։ Շեշտվեց, որ ժամաբաժանման հիմքում ընկած է ուսումնական տարվա հաստատված պլանը, և ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ կիսամյակի համար փոփոխություններ չեն նախատեսված։

Ընդգծվեց նաև, որ Մարիամ Հայրապետյանի կողմից դասավանդվող 7-րդ «Բ» դասարանի 3 դասաժամն առաջարկվում է փոխանցել Մարգարիտա Պետրոսյանին՝ հաշվի առնելով, որ Մարիամ Հայրապետյանը ծանրաբեռնված է և չի կարող լիարժեք իրականացնել դասավանդումը երկու հերթերի ընթացքում։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը տեղեկացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա սկզբում և նախնական դասաբաշխման ժամանակ քննարկվել է ժամաբաժանման հարցը՝ հաշվի առնելով 2–9-րդ դասարանների առարկայացանկի հնարավոր փոփոխությունները և նոր ՀՊՉ պահանջները։ Նշվեց, որ դրանց համապատասխան կազմվել և հաստատվել է ուսումնական տարվա ուսումնական պլանը՝ ժամաբաժանման համար։

Սերգեյ Ավանեսյանը նաև նշեց, որ դեմ չէ Մարիամ Հայրապետյանի 7-րդ «Բ» դասարանի երեք դասաժամի փոխանցմանը Մարգարիտա Պետրոսյանին, հաշվի առնելով, որ տվյալ խնդրանքով դիմում է ներկայացրել Մարիամ Հայրապետյանը։

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է)։

Լսեցին 9. 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների և դիտարկման

թերթիկների լրացման ընթացքը, շեշտելով, որ դրանք իրականացվել են սահմանված պահանջների և չափորոշիչների համապատասխան: Նա հավելեց, որ աշակերտների հետ տարվող աշխատանքներում ընդգծված է ակտիվ համագործակցությունը ԳՏՄԱԿ-ի հետ:

Նշվեց, որ երկու ամիսը մեկ անցկացվող քննարկումների ընթացքում, որոնց մասնակցում են ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչները, ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժը և աշակերտների ծնողները, մանրամասն դիտարկվում են փաստաթղթերը, գնահատվում իրականացված աշխատանքները, և առանձնակի ուշադրություն է դարձվում աշակերտների ձեռքբերումներին ու առաջընթացին: Այս հանդիպումներին մասնակցում է նաև տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, ինչը նպաստում է գործընթացի համակարգվածությանը և արդյունավետությանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց աշխատանքների ճիշտ կազմակերպման և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմի արդյունավետ համագործակցության կարևորությունը: Նա ընդգծեց, որ ԱՈՒՊ-ի շրջանակում նախատեսված նպատակների իրականացումը և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը հանդիսանում են ուսուցման որակի բարձրացման և աշակերտների զարգացման ապահովման կարևոր նախապայմաններ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 10. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ տնօրենի, մեթոդմիավորման նախագահի և մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացված դասալսումների ընթացքում պարզվել է, որ 2–9-րդ դասարանների ուսուցիչները հիմնականում կատարում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլաններ և օրվա դասի պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով, իսկ մատենավարությունը կազմակերպված էր պլանների համապատասխանությամբ: Օրվա թեմաների նպատակներն ու վերջնարդյունքները հստակ սահմանված էին, ինչը հնարավորություն է տալիս ուսուցիչներին պատկերացնել դասի ավարտին հասանելիք արդյունքները:

Միաժամանակ նշվեց, որ որոշակի դժվարություններ շարունակում են մնալ այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեծ է. ուսուցիչները դժվարանում են բոլոր աշակերտներին հավասարապես ներգրավել դասապրոցեսում և ուշադրություն դարձնել նրանց ինքնուրույն աշխատանքի արդյունքներին: Փոքր խմբերում դասի վերջնարդյունքների ապահովումը հաջողվում է ՕԹՊ-ների պահանջներին համապատասխան:

Զեկուցողը կրկին ուշադրություն հրավիրեց գնահատման հարցերի վրա՝ նշելով, որ նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են նոր գնահատման համակարգին և հետևում սահմանված պահանջներին, իսկ աշակերտները գնահատվում են բացառապես ամփոփիչ աշխատանքների ժամանակ:

Վերջում զեկուցողն առաջարկեց շարունակել կենտրոնացած աշխատանքը՝ շեշտը դնելով աշակերտների կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների ապահովման, դասապրոցեսում նրանց ակտիվ ներգրավվածության և գնահատման նոր համակարգի կիրառման վրա, որպեսզի բարձրացվեն դասի արդյունավետությունը և սովորողների ձեռքբերումները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասալսումների ընթացքում պարզվել է՝ ուսուցիչները հիմնականում կատարում են նոր ՀՊՉ-ների պահանջները, իսկ օրացուցային-թեմատիկ պլանների և մատենավարության ճիշտ կազմակերպումը նպաստում է դասի արդյունավետությանը: Միաժամանակ նկատվեց, որ մեծ խմբերում առկա են դժվարություններ աշակերտների հավասար ներգրավվածությունն ու կարողությունների զարգացման ապահովման հարցում, ուստի անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ մեթոդներ՝ բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությունը բարձրացնելու համար:

Արտահայտվողները կարևորեցին նաև գնահատման նոր համակարգի ճիշտ կիրառումը և ընդգծեցին, որ ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, վերջնարդյունքների ապահովման և ուսուցման արդյունավետության շարունակական վերահսկողությունը կմնա առաջնահերթություն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան:

Լսեցին 11. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի և դեկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հղումով ուսումնական տարվա տարեկան պլանին: Նշվեց, որ օտար լեզուների մեթոդմիավորման շրջանակում նախատեսված միջոցառումներն իրականացվել են հիմնականում ամբողջական, նպատակային և սահմանված ժամկետներում:

Մասնավորապես, իրականացվել են հայրենասիրական, իրավական, մշակութային, ճանաչողական, լեզվամտածողական և քաղաքացիական դիրքորոշում ձևավորող բաց դասեր, դաս-միջոցառումներ, քննարկումներ, այցելություններ, գործնական աշխատանքներ, դասալսումներ, ինչպես նաև աշխատանքային տետրերի և դասագրքերի ստուգումներ՝ համաձայն գործող կրթական չափորոշիչների:

Ներկայացվեց նաև, որ ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են պատշաճ կերպով, իսկ նյութերը հրապարակվել են դպրոցի պաշտոնական կայքում, ապահովելով թափանցիկություն և հանրայնացում:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ժամանակակից մեթոդների և նոր մոտեցումների կիրառմանը ուսուցման ընթացքում, ինչպես նաև աշակերտների ուսումնառության որակի բարձրացմանն ուղղված իրականացված աշխատանքներին: Միաժամանակ հնչեցին առաջարկություններ առանձին գործողությունների արդյունավետության բարձրացման և հետագա բարելավման ուղղությունների վերաբերյալ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները շեշտեցին, որ իրականացված միջոցառումները զգալիորեն նպաստել են աշակերտների ակտիվության, խոսքային և վերլուծական հմտությունների զարգացմանը: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև ընթացիկ աշխատանքների արդյունավետությանը, առկա դժվարություններին և դրանց հաղթահարման հնարավոր ուղիներին՝ երկրորդ կիսամյակում:

Նշվեց, որ աշխատանքներն իրականացվել են առանց բացթողումների կամ թերակատարումների, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում՝ ապահովելով ծրագրի նպատակների լիարժեք իրագործումը: Միաժամանակ ընդգծվեց, որ ուսումնադաստիարակչական գործունեությունն

իրականացվել է կանխատեսելի, կազմակերպված և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչը նպաստել է միջոցառումների որակյալ կազմակերպմանը և սահմանված արդյունքների ապահովմանը:
Արտահայտվողները նպատակահարմար համարեցին պահպանել նման համակարգված և հետևողական մոտեցումը նաև հետագա ամիսներին՝ պահպանելով ձեռք բերված դրական դինամիկան և ձևավորված աշխատանքային մշակույթը: Հատուկ կարևորվեց նաև առաջին կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումների համապատասխանությունը տարեկան պլանին և դրանց ընդհանուր արդյունավետությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը (կցվում է):

Լսեցին 12. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների հերթական վերապատրաստման գործընթացին ակտիվ մասնակցությունը, ընդգծելով, որ ինչպես 2024–2025, այնպես էլ 2025–2026 ուսումնական տարում կատարվել է ուսուցիչների կարիքի գնահատում, որի արդյունքում 2024–2025 ուսումնական տարում հերթական ատեստավորման է մասնակցել 15 ուսուցիչ, ովքեր հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը և 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում մասնակցել 2-րդ շրջափուլին: 2025–2026 ուսումնական տարում հերթական ատեստավորմանը մասնակցել է 11 ուսուցիչ, որոնք նույնպես հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը:
Զեկուցողը նաև նշեց, որ 2025 թվականին դպրոցի մանկավարժական անձնակազմը ակտիվ մասնակցություն է ունեցել ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող դասընթացներին՝ ընդհանուր առմամբ իրականացվել է 12 դասընթաց, որոնց մասնակցել է 33 մանկավարժ: Նա անդրադարձավ նաև «Էսսեագրություն» թեմայով վերապատրաստման դասընթացին, որի նպատակն էր մեթոդմիավորման ուսուցիչներին նախապատրաստել 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից միասնական ավարտական քննությանը:
Կամավոր ատեստավորման արդյունքների վերաբերյալ զեկուցողը նշեց, որ 2025 թվականին դպրոցի ուսուցիչները արձանագրել են բարձր արդյունքներ: Առաջին անգամ մասնակցած Կարինե Մալխասյանը, Տաթևիկ Փարսադանյանը, Ռիտա Շալունցը, Կարինե Արզումանյանը, Ռուզաննա Խաչատրյանը և Հայկ Օհանյանը ցուցաբերել են բարձր արդյունքներ, ինչը հաստատեց դպրոցի ուսուցչական կազմի բարձր մասնագիտական ներուժը:
Զեկուցողը ներկայացրեց նաև 2023–2025 թվականներին կամավոր ատեստավորմանը մասնակցած դպրոցի 18 ուսուցիչներին՝ մանրամասն ընդգծելով նրանց մասնագիտական ուղղվածությունը. Մալխասյան Կարինե – դասվար, Փարսադանյան Տաթևիկ – դասվար, Շալունց Ռիտա – դասվար, Արզումանյան Կարինե – «Տեխնոլոգիա», Խաչատրյան Ռուզաննա – «Հասարակագիտություն», Օհանյան Հայկ – «Ֆիզիկա», Ղուլյան Օլյա – «ԹԳՀԳ», Գրիգորյան Թագուհի – «Անգլերեն», Հայրապետյան Մարիամ – «Ռուսաց լեզու», Գյուրջյան Շահանե – «Ռուսաց լեզու», Առստամյան Ալլա – «Մաթեմատիկա», Սարգսյան Լիլիթ – «Հայոց լեզու», Սարգիսջանյան Անուշ – «Հայոց լեզու», Պողոսյան Կարինե – դասվար, Ջավահիրյան Իրինա – դասվար, Պետրոսյան Մարգարիտա – «Ռուսաց լեզու», Հարությունյան Սոնա – «Հայոց լեզու», Աբգարյան Աննա – «Ֆիզկուլտուրա»:
Նշվեց, որ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչները 2023-2025 թվականներին ցուցաբերել են բարձր ակտիվություն և

բարձր արդյունքներ կամավոր ատեստավորման գործընթացում: Ընդհանուր առմամբ, դպրոցի ուսուցչական անձնակազմի 41 տոկոսը մասնակցել է կամավոր ատեստավորմանը, ստանալով բարձր գնահատականներ: Արդյունքների հիման վրա ուսուցիչների համար սահմանվել է 200 000 դրամ դրույքաչափ, ինչպես նաև 30–50 տոկոս հավելավճար:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ուսուցիչների տարակարգի շնորհմանը՝ նշելով, որ 2025 թվականի ընթացքում դպրոցի մանկավարժներից 3-րդ աստիճանի տարակարգ են ստացել «ԹԳՀԳ» առարկայի ուսուցչուհի Օլյա Ղուլյանը և «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչուհի Ալլա Զեյնալյանը, իսկ ավելի վաղ 1-ին աստիճանի տարակարգ էր ստացել «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Սոնա Հարությունյանը:

Զեկուցողն ընդգծեց, որ ուսուցիչների կամավոր ատեստավորումը ծառայում է նրանց մասնագիտական գիտելիքների բացահայտմանը, մինչդեռ տարակարգը չափանիշ է, որը ցույց է տալիս այդ գիտելիքների կիրառումը դասարանում՝ նկատի ունենալով մանկավարժական մոտեցումների և համապատասխան հմտությունների առկայությունը:

Զեկուցողն ընդգծեց, որ 2025 թվականի կամավոր ատեստավորմանը մասնակցել են նաև «Պատմություն» առարկայի ուսուցչուհի Մերի Դանիելյանն ու դասվար Արուս Դոլունցը, որոնք չեն հաղթահարել 60 տոկոսի շեմը, ուստի 2026 թվականին նրանց համար նախատեսվում է իրականացնել կարիքի գնահատում, որից հետո նրանք պետք է մասնակցեն հերթական ատեստավորմանը՝ 1-ին մակարդակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները շեշտեցին, որ ժամանակակից մեթոդների և դասավանդման նորարար հնարքների կիրառումը հատկապես կարևոր է դասի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նրանք կարևորեցին պարտադիր վերապատրաստումների նշանակությունը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս ծանոթանալ նորամուծություններին, հետևել կատարվող փոփոխություններին և արդյունավետ փորձի փոխանակում ապահովել:

Կարևորություն տրվեց նաև ուսուցիչների ակտիվ մասնակցությանը կամավոր ատեստավորման գործընթացին, քանի որ այն նպաստում է մասնագիտական կարողությունների զարգացմանը, ինքնակրթությանը և դասավանդման որակի բարելավմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին զեկուցումը (կցվում է):

Լսեցին 13. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի №216-Ն որոշման՝ դպրոցի բոլոր խմբավարները ներկայացրել են ամսական և կիսամյակային հաշվետվություններ, որտեղ մանրամասն նկարագրվել են 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքները:

Ընդհանուր առմամբ՝ յուրաքանչյուր խմբավար ներկայացրել է 4 ամսական հաշվետվություն սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների համար և 1 կիսամյակային հաշվետվություն, որտեղ ամփոփված են եղել տվյալ չորս ամիսների ընթացքում իրականացված միջոցառումները, ձեռքբերումները և արձանագրված առաջընթացը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ խմբավարների հաշվետվություններն ունեն կարևոր նշանակություն՝ ուսումնական գործընթացի

արդյունավետությունը գնահատելու և հետագա պլանավորումները առավել նպատակային կազմակերպելու համար: Նրանք առանձնացրին նաև աշխատողի աշխատանքի ընթացքի մոնիտորինգի կարևորությունը և նկատեցին, որ հաշվետվությունների միջոցով արձանագրված ձեռքբերումներն ու բարելավման հնարավոր ուղղությունները կարևորվում են ուսումնական ծրագրերի որակի բարձրացման տեսանկյունից:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները:

Լսեցին 14. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից դպրոցում նախատեսվում է ձևավորել երեխաների պաշտպանության խումբ, որի կազմում ընդգրկվելու են դպրոցի տնօրինության և մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչներ, ներառական կրթության բաժնի աշխատակիցներ, ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներ, ծնողներ և շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչներ: Խմբի հիմնական նպատակն է ապահովել երեխաների իրավունքների պաշտպանությունը, ստեղծել անվտանգ և աջակցող ուսումնական միջավայր, արձագանքել ցանկացած ռիսկային կամ խնդիր ստեղծող իրավիճակի և կանխարգելիչ աշխատանքներ իրականացնել՝ միաժամանակ բարձրացնելով ուսուցիչների և ծնողների գիտակցությունը երեխաների իրավունքների մասին:

Զեկուցողը շեշտեց, որ խմբի գործունեությունը հիմնված է երեխաների պաշտպանությունը առաջնահերթություն դարձնելու վրա՝ ապահովելով նրանց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգությունը: Նույն մոտեցումը ներկայում պիլոտային սկզբունքով իրականացվում է հանրապետության մի շարք այլ դպրոցներում, որտեղ փորձարկվում են երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված նոր մեթոդներ և ստուգվում է դրանց արդյունավետությունը: Պիլոտային փորձարկումները հաջողությամբ ավարտելուց հետո նախատեսվում է այս սկզբունքը ընդլայնել և ներդնել հանրապետության բոլոր դպրոցներում, ինչի նպատակն է ստեղծել անվտանգ, ներառական և պաշտպանված կրթական միջավայր՝ բոլոր աշակերտների համար:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ երեխաների պաշտպանության խմբի ստեղծումը կարևոր նախաձեռնություն է՝ ապահովելու երեխաների իրավունքների պաշտպանությունը և ապահով, անվտանգ ուսումնական միջավայր ձևավորելը: Նրանց կարծիքով, այս քայլը կնպաստի երեխաների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգության ամրապնդմանը, կուժեղացնի ուսուցիչների, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի համագործակցությունը, ինչպես նաև կխթանի կրթական գործընթացում ներառական և աջակցող մոտեցումների ընդլայնումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին զեկուցումը:

Լսեցին 15. 2025-2026 ուսումնական տարվա նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցման ընթացքում անդրադարձ կատարվեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում նախագծային ուսուցման կազմակերպման արդյունքներին՝ դրանք դիտարկելով որպես ուսումնական գործընթացի կատարելագործման կարևոր բաղադրիչ: Ընդգծվեց, որ ձեռք բերված փորձը

թույլ է տալիս ավելի նպատակային պլանավորել նախագծային գործունեությունը և համապատասխանեցնել այն գործող կարգավորումների պահանջներին։ Ներկայացվեցին նաև ընթացիկ ուսումնական տարվա համար նախատեսված նոր մոտեցումները և նախագծային աշխատանքների իրականացման ընթացակարգային փոփոխությունները՝ նշելով դրանց կիրառման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը։

Զեկուցողը տեղեկացրեց, որ մասնագիտական խմբերի կողմից նախապես մշակվել են նախագծային թեմաների փաթեթներ 7–9-րդ դասարանների սովորողների համար, որոնք համապատասխանում են հաստատված կարգին։ Թեմաների ժամանակին հրապարակումը հնարավորություն է տվել ապահովելու ընտրության բաց և հասանելի գործընթաց, ինչպես նաև խթանել սովորողների հետաքրքրվածությունն ու նախաձեռնողականությունը։

Ներկայացվեց, որ նախագծային աշխատանքները իրականացվում են փոքր խմբերով՝ երեքից յոթ անդամ կազմով, ինչը նպաստում է համագործակցության զարգացմանը, դերերի բաշխմանը և յուրաքանչյուր սովորողի ակտիվ ներգրավվածությանը։ Խմբերի ձևավորման գործընթացն իրականացվել է նախապես առաջարկված թեմաների հիման վրա. ուսուցիչները թեմաները փոխանցել են սովորողներին հաղորդակցման թվային հարթակների միջոցով, ինչի արդյունքում իրականացվել է խմբերի կազմավորումը, ինչպես նաև նախագծերի թեմաների և ղեկավարների ընտրությունը։

Զեկույցում անդրադարձ կատարվեց նաև հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների գործունեության կազմակերպման և նախագծային աշխատանքի իրականացման կարգին։ Առաջարկվեց նախագծային աշխատանքների ամփոփիչ պաշտպանությունները իրականացնել առարկայական հանձնաժողովների միջոցով՝ ապահովելով գնահատման մասնագիտական մոտեցում և բազմակողմանի դիտարկում։ Հանձնաժողովների կազմը նախատեսվում է ձևավորել տվյալ և հարակից առարկաների ուսուցիչների, մեթոդական միավորման նախագահի և տնօրենի տեղակալի մասնակցությամբ։

Զեկուցման եզրափակիչ հատվածում ներկայացվեց նախագծային աշխատանքների գնահատման ընթացակարգը՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված նախագծային ուսուցման հայեցակարգի և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հաստատման մասին իրավական ակտերի։ Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց գնահատման հստակ չափանիշների կիրառմանը, դրանց միասնական մեկնաբանմանը և սովորողների նկատմամբ հավասար ու արդար մոտեցման ապահովմանը։

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը, Գ. Գրիգորյանը։

Քննարկման ընթացքում խոսնակները շեշտադրեցին, որ ուսումնական խմբակների և նախագծային գործունեության կազմակերպումը պետք է իրականացվի գործող կարգավորումների շրջանակում՝ դիտարկելով դրանք որպես կրթական գործընթացի համակարգված և արդյունավետ կազմակերպման կարևոր գործիք։ Նշվեց, որ սահմանված չափորոշիչների հետևողական պահպանումը հնարավորություն է տալիս ստեղծել ուսուցման բազմազան միջավայր, որտեղ սովորողները հանդես են գալիս ոչ միայն որպես տեղեկատվության սպառողներ, այլ նաև որպես ակտիվ և նախաձեռնող մասնակիցներ։

Միևնույն ժամանակ ուշադրություն հրավիրվեց նախագծային աշխատանքների իրականացման ընթացակարգում իրականացված նոր փոփոխություններին՝ դրանք գնահատելով որպես ժամանակակից կրթական պահանջներին համահունչ քայլեր։ Ընդգծվեց, որ փոփոխությունները միտված են սովորողների ուսումնառությունը դարձնել առավել գործնական,

հետազոտական և ստեղծագործական՝ խրախուսելով ինքնուրույն որոշումների կայացումը և համատեղ աշխատանքի մշակույթի ձևավորումը: Ընդհանուր գնահատմամբ՝ նշված նորամուծությունները նպաստում են ուսումնական գործընթացի որակական զարգացմանը և կրթության արդյունավետության բարձրացմանը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №6

«26» հունվար 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Լուսինե Հայրյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան
7. Թագուհի Գրիգորյան
8. Աննա Թելունց

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Հաղորդում Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնոյին մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
5. 2-9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկաների դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. ԱՈՒՊ-ներ, դիտարկման թերթիկներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝
Որոշեցին՝ Հաստատել Օտար լեզուների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման դեկտեմբեր ամսվա օրակարգի կատարողականը՝ համապարփակ կերպով անդրադառնալով իրականացված աշխատանքներին: Նա ամփոփեց նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման ընթացքը, ներկայացրեց ձեռքբերումներն ու արձանագրված արդյունքները: Զեկուցողը նշեց, որ ծրագրավորված բոլոր

աշխատանքները իրականացվել են սահմանված ժամկետներում և պատշաճ մակարդակով՝ ապահովելով մեթոդմիավորման գործունեության արդյունավետ կազմակերպումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները ընդգծեցին քննարկված հարցերի կարևորությունն ու արդիականությունը՝ նշելով, որ իրականացվող բազմաբնույթ աշխատանքները էական նշանակություն ունեն ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար։ Նրանք կարևորեցին կատարված դասալսումների արդյունքների համակողմանի քննարկումը, դպրոցական առարկայական օլիմպիադաների պատշաճ կազմակերպումը, ուսումնական ծրագրերի կատարողականի վերահսկումը, ինչպես նաև էլեկտրոնային մատենավարության ստուգումների վերլուծությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2–9-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման գործընթացն իրականացվում է գործող իրավական և մեթոդական փաստաթղթերի պահանջներին լիարժեք համապատասխան։ Նա ներկայացրեց դասավանդման ընթացքում կիրառվող ժամանակակից ուսուցման մեթոդները՝ ընդգծելով չափորոշչային պահանջներին համահունչ ուսումնառության արդյունքների ապահովման կարևորությունը, ինչպես նաև ուսուցիչների կողմից կիրառվող ձևավորող գնահատման արդյունավետ մեխանիզմները։

Ընդգծվեց, որ ուսումնական գործընթացում լայնորեն կիրառվում են սովորողակենտրոն ուսուցման մոտեցումներ, կազմակերպվում են ինտեգրված դասեր, իրականացվում նախագծային և հետազոտական աշխատանքներ, որոնք հանդիսանում են նոր չափորոշչի առանցքային բաղադրիչներ։

Զեկուցողը նաև կարևորեց առարկայական ծրագրերի և ՕԹՊ-ների համապատասխանությունը ՀՊՉ պահանջներին՝ շեշտադրելով ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպման և դրանց իրականացման պատշաճ մակարդակի ապահովման անհրաժեշտությունը։

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը

Մարգարիտա Պետրոսյանը կարևորեց ուսուցիչների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման անհրաժեշտությունը՝ ընդգծելով վերապատրաստումների, մեթոդական խորհրդատվությունների և փորձի փոխանակման կարևոր դերը կրթության որակի բարձրացման գործում։ Նա նշեց, որ ընթացիկ վերահսկողության շրջանակում պարբերաբար իրականացվում են դասալսումներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու ուսումնական գործընթացի արդյունավետությունը և արձանագրելու առկա խնդիրները։

Անդրադառնալով նոր ՀՊՉ ներդրման գործընթացին՝ Մարգարիտա Պետրոսյանը ընդգծեց, որ նկատվում են ինչպես դրական առաջընթացներ, այնպես էլ որոշակի դժվարություններ։ Նրա խոսքով՝ առկա խնդիրները հիմնականում պայմանավորված են նոր մոտեցումների լիարժեք յուրացման անհրաժեշտությամբ, ժամանակի արդյունավետ կառավարման բարդություններով և ուսումնական բովանդակության նպատակային ու ճշգրիտ պլանավորման հետ կապված հարցերով, որոնց լուծումը պահանջում է հետևողական և համակարգված աշխատանք։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան։

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը բարձր գնահատեց ուսուցիչների կողմից մատենավարության ոլորտում իրականացված հետևողական և պատասխանատու աշխատանքը՝ ընդգծելով դրա կարևորությունը ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման և փաստաթղթավորման որակի բարձրացման տեսանկյունից:

Նշվեց, որ մշտական վերահսկողության և համակարգված աշխատանքի արդյունքում օտար լեզուների մեթոդմիավորման ուսուցիչների շրջանում զգալիորեն նվազել են առկա բացթողումները, բարձրացել է աշխատանքների արդյունավետությունը և ապահովվել է սահմանված պահանջների առավել ամբողջական և որակյալ կատարումը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները նշեցին, որ հետևողական և նպատակաուղղված աշխատանքները էականորեն նպաստում են ուսուցիչների կարողությունների զարգացմանը էլեկտրոնային մատենավարության ոլորտում՝ ապահովելով մասնագիտական հմտությունների աստիճանական կատարելագործում: Նրանք ընդգծեցին, որ կանոնավոր գործելակերպի և շարունակական վերահսկողության պայմաններում էապես բարձրանում է գրանցումների ճշգրտությունն ու համակարգվածությունը:

Միաժամանակ կարևորեցվեց ամենօրյա գրանցումների իրականացումը, քանի որ դա նվազեցնում է անճշտությունների հավանականությունը, ապահովում է տեղեկատվության ժամանակին և ամբողջական մուտքագրումը, ինչպես նաև նպաստում է կրթական գործընթացի թափանցիկության և ընդհանուր արդյունավետության բարձրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 5. 2-9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողն առաջարկեց փետրվար ամսվա ընթացքում 2–9-րդ դասարաններում իրականացնել «Ռուսաց լեզու» առարկայի ուսումնառության նպատակային դիտարկում և համակողմանի վերլուծություն՝ նպատակ ունենալով գնահատել սովորողների գիտելիքների մակարդակը, բացահայտել առկա դժվարությունները և աջակցել ուսուցիչներին դրանց արդյունավետ հաղթահարման գործում:

Նախաձեռնության շրջանակում նախատեսվում է նաև քննարկել դասավանդման մեթոդների կատարելագործման հնարավորությունները, դասերի կազմակերպման արդյունավետ ուղիները և կիրառվող մեթոդների նպատակահարմարությունը՝ միտված ուսումնական գործընթացի որակի բարձրացմանն ու շարունակական բարելավմանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ «Ռուսաց լեզու» առարկայի դրվածքի ուսումնասիրման ընթացքում նպատակահարմար է կազմակերպել փոխադարձ դասալսումներ՝ ներգրավելով ոչ միայն օտար լեզուների մեթոդմիավորման ուսուցիչներին, այլև այլ մեթոդմիավորումների ներկայացուցիչներին: Ընդգծվեց, որ այս մոտեցումը կնպաստի փորձի փոխանակմանը, արդյունավետ մեթոդների բացահայտմանը և լավագույն փորձի տարածմանը:

Միաժամանակ կարևորվեց դասապրոցեսում սովորողների ակտիվ մասնակցության ապահովումը, նրանց ինքնուրույն աշխատելու կարողությունների և հմտությունների զարգացումը, բանավոր խոսքի կատարելագործումը: Նշվեց նաև, որ անհրաժեշտ է հետևողականորեն ապահովել Հանրակրթական պետական չափորոշիչների պահանջների լիարժեք իրականացումը՝ բարձրացնելով ուսումնական գործընթացի ընդհանուր

արդյունավետությունը:

Որոշեցին՝ Հաջորդիվ ժամանակահատվածում «Ռուսաց լեզու» առարկայից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց ՈւԴԱՏՊ-ին համապատասխան հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց համակարգված, նպատակաուղղված և հետևողական բնույթը: Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսումնական գործընթացի կազմակերպման շարունակական վերահսկողություն, ինչպես նաև կազմակերպվել են նախապատրաստական աշխատանքներ՝ մարզային օլիմպիադաներին սովորողների պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով:

Անվտանգ և ապահով կրթական միջավայրի տարվա միջոցառումների ժամանակացույցին համապատասխան կազմակերպվել է «Ճանաչենք մեր դպրոցը. անվտանգ մուտք և ելք» թեմայով բաց դաս: Այն իրականացվել է դպրոցի Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանի և «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյանի նախաձեռնությամբ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի հետ համագործակցությամբ:

Բացի այդ, անցկացվել է Հայոց բանակի օրվան նվիրված դաս-միջոցառում, ինչպես նաև իրականացվել են կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանն ուղղված բազմաբնույթ աշխատանքներ, որոնք նպաստել են կրթության որակի բարձրացմանը և ուսումնական միջավայրի շարունակական զարգացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ ՈւԴԱՏՊ-ի շրջանակում իրականացված աշխատանքները զգալիորեն նպաստել են դասավանդման որակի բարձրացմանը և ուսումնական գործընթացի առավել համակարգված ու նպատակային կազմակերպմանը: Նրանք առանձնահատուկ կարևորեցին ուսուցիչներին ցուցաբերվող մեթոդական աջակցությունը, հատկապես՝ օրացուցային-թեմատիկ պլանների կազմման, ուսումնական նպատակների հստակ և չափելի ձևակերպման, ինչպես նաև ժամանակի արդյունավետ բաշխման հարցերում:

Միաժամանակ ընդգծվեց, որ իրականացված խորհրդատվությունները ևս ունեցել են դրական ազդեցություն՝ նպաստելով դասավանդման որակի շարունակական բարելավմանը և ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը, ինչը, իր հերթին, ապահովում է ուսումնական գործընթացի առավել արդյունավետ իրականացում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները:

Լսեցին 7. ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների մշակման, իրականացման և վերահսկման, ինչպես նաև դիտարկման թերթիկների պատշաճ լրացման վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Նա ընդգծեց, որ նշված աշխատանքներն իրականացվել են

սահմանված չափորոշիչներին, ընթացակարգերին և մասնագիտական պահանջներին համապատասխան, ինչը ապահովում է յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքների ճիշտ հաշվառում և կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպում։

Միաժամանակ նշվեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են ուսումնական առաջադիմության շարունակական մշտադիտարկմանը, խնդիրների ժամանակին հայտնաբերմանն ու գնահատմանը, ինչպես նաև նպատակային աջակցող միջամտությունների պլանավորմանը, ինչն ուղղված է ներառական կրթության որակի շարունակական բարձրացմանը և ուսումնական միջավայրի արդյունավետ կառավարմանը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի արդյունավետ և նպատակային կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև ծնող-ուսուցիչ-աջակցության թիմի սերտ համագործակցության կարևորությունը ուսումնական գործընթացի հաջողության ապահովման համար։ Նա ընդգծեց օրացուցային-թեմատիկ պլաններով սահմանված նպատակների ամբողջական և համակարգված իրագործումը ԱՈՒՊ-ի շրջանակներում, ինչպես նաև դիտարկման թերթիկների ճշգրիտ և նպատակային լրացման անհրաժեշտությունը։

Անդրադառնալով այս մոտեցումներին՝ Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց, որ դրանք ապահովում են աշակերտների ուսումնական առաջընթացի շարունակական և հետևողական գնահատում, աջակցում անհատական զարգացմանը և նպաստում կրթական գործընթացի ընդհանուր արդյունավետության և որակի բարձրացմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը։

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների մանրամասն հաշվետվությունները։ Ներկայացվեց աշխատանքների ընթացքը, անցկացված դասալսումները, տրամադրված մեթոդական աջակցությունները և իրականացված տարբեր նախաձեռնությունները՝ շեշտադրելով դրանց նպատակային և արդյունավետ բնույթը։

Անդրադարձ կատարվեց նոր ՀՊՉ ներդրման արդյունքներին՝ ըստ կրթական աստիճանների, ինչպես նաև էսսեագրության ոլորտում իրականացված աշխատանքներին և ուսումնական նախագծերի իրականացման ընթացքին։ Բացի այդ, առանձնակի ուշադրություն դարձվեց դպրոցի կառավարման արդյունավետությանը՝ ընդգծելով դրա կարեւոր դերը ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպման, ուսումնական ծրագրերի որակի ապահովման և կրթության ամբողջական արդյունավետության բարձրացման գործում։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքները մեծ մասամբ իրականացվել են նախապես հաստատված պլանի համաձայն, ինչը ապահովել է ուսումնական գործընթացի նպատակային, հետևողական և համակարգված կազմակերպումը։ Նրանց գնահատմամբ, միջոցառումների արդյունավետությունը մեծապես պայմանավորված է եղել ուսուցիչների պատասխանատու, ակտիվ և հետևողական մոտեցմամբ՝ ինչպես նախապատրաստական աշխատանքների, այնպես էլ իրականացման

փուլերում։

Միաժամանակ կարևորվեց, որ այս մոտեցումը նպաստել է աշակերտների համար արդյունավետ և ապահով ուսումնադաստիարակչական միջավայրի ստեղծմանը, բարձրացրել դասերի որակը, աջակցել անձի բազմակողմանի զարգացմանը և ամրապնդել կրթական ծրագրերի համընդհանուր արդյունավետությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունը (կցված է)։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7

«23» փետրվարի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Լուսինե Հայրյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան
7. Թագուհի Գրիգորյան
8. Աննա Թելունց

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Հաղորդում Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
4. 2-9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝Ա.Գևորգյան)
6. Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
7. 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ ընդգծելով նախորդ նիստի արդյունքների ամփոփումը և կատարված աշխատանքների մանրամասն ներկայացումը: Նա նշեց, որ բոլոր նախատեսված աշխատանքներն ու ընդունված որոշումները կատարվել են պատշաճ ձևով և սահմանված ժամկետներում, ինչը ապահովել է մեթոդմիավորման գործունեության շարունակականությունը և արդյունավետությունը: Զեկուցման ընթացքում շեշտվեց աշխատանքների

հետևողական պլանավորման և համակարգված իրականացման կարևորությունը՝ դասավանդման գործընթացի որակի բարձրացման և ուսուցիչների մասնագիտական կարողությունների ամրապնդման նպատակով։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները ընդգծեցին, որ նախորդ նիստի ընթացքում կատարված աշխատանքներն ու որոշումների իրագործումը եղել է արդյունավետ և նպատակային։ Նրանք գնահատեցին մեթոդմիավորման հանդիպումների կարևորությունը՝ որպես ուսուցիչների փորձի փոխանակման, դասավանդման մեթոդների կատարելագործման և ուսուցման արդյունքների հետևողական վերահսկման հարթակ։ Նշվեց, որ համակարգված աշխատանքների և պլանավորված միջոցառումների արդյունքում հնարավոր է եղել ժամանակին բացահայտել առաջացած խնդիրները և կազմակերպել նպատակային միջամտություններ դրանց լուծման համար, ինչը նպաստում է կրթական գործընթացի որակի և ուսուցիչների մասնագիտական զարգացման բարձրացմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա փետրվար ամսվա ընթացքում էլեկտրոնային մատյանների վարման ընթացքը՝ համեմատությամբ նախորդ ուսումնական տարիների հետ։ Նա ընդգծեց, որ անցյալ տարվա համեմատ թերությունները զգալիորեն նվազել են և այս պահին չեն նկատվում բոլոր ուսուցիչների մոտ։ Այնուամենայնիվ, զեկուցողը շեշտեց հետևողականության և աշխատանքների ժամանակին իրականացման անհրաժեշտությունը՝ նշելով, որ այդ մոտեցումը թույլ է տալիս ապահովել էլեկտրոնային մատյանների պատշաճ և համակարգված վարումը, ինչպես նաև խուսափել հետագա դժվարություններից ու խնդիրներից։

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը, ՄՄ անդամները։

Սերգեյ Ավանեսյանը շեշտեց ուսուցիչների աշխատանքի բարեխղճությունն ու պատասխանատվությունը։ Նա ընդգծեց, որ մշտապես պատրաստ է աջակցել մանկավարժներին՝ արձանագրված թերություններն ու բացթողումները ժամանակին ուղղելու, ինչպես նաև ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ։

Նա նաև նկատեց, որ կարևոր է մատենավարությունը կազմակերպել թեմատիկ հաջորդականությանը համապատասխան՝ հետևելով սահմանված պահանջներին և պահպանելով նախատեսված ժամկետները։ Սերգեյ Ավանեսյանը մեկ անգամ ևս հավաստիացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում արձանագրված բացթողումները զգալիորեն նվազել են նախորդ տարիների համեմատ, և այս տարի վարչական միջամտությունների անհրաժեշտություն չի առաջացել։

Արտահայտվողները համաձայնեցին, որ էլեկտրոնային մատյանների համակարգված և հետևողական վարումը ունի մեծ նշանակություն ուսումնական գործընթացի կազմակերպման համար։ Նրանք ընդգծեցին, որ կանոնավոր և համակարգված գրանցումները նպաստում են դասավանդման հետևողական մոնիտորինգին, ուսուցման արդյունավետության բարձրացմանը և աշակերտների առաջընթացի ճշգրիտ գնահատմանը։ Միաժամանակ նշվեց, որ անհրաժեշտ է շարունակել հետևողական վերահսկողությունը և մեթոդական աջակցությունը, որպեսզի էլեկտրոնային մատյանների վարումը լինի միանշանակ և հուսալի բոլոր ուսուցիչների համար, ինչը կխթանի ուսումնական միջավայրի ընդհանուր արդյունավետությունը և ուսուցիչների պրոֆեսիոնալ հմտությունների

ամրապնդումը:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

Լսեցին 4. 2-9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց «Ռուսաց լեզու» առարկայի դասավանդման գործընթացի ուսումնասիրման արդյունքները՝ ընդգծելով դասերի կազմակերպման համապատասխանությունը ուսումնական ծրագրին և թեմատիկ պլաններին: Նշվեց, որ դասերը իրականացվում են նոր չափորոշչային պահանջներին համապատասխան մեթոդների և հնարների կիրառմամբ, որոնք ներառում են խմբային աշխատանքներ, քննարկումներ, բանավեճեր, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) գործիքների արդյունավետ օգտագործում:

Անդրադարձ կատարվեց սովորողների մասնակցության մակարդակին, նրանց հետաքրքրվածությանը և արժեքային դիրքորոշումների ձևավորման գործընթացին: Զեկուցողը ընդգծեց, որ անհրաժեշտ է շարունակական ուշադրություն դարձնել սովորողների վերլուծական և քննադատական մտածողության զարգացումը, ինչպես նաև դասերի ընթացքում քննարկումների հաճախականությունը՝ առաջացող դժվարություններին և բացթողումներին անմիջապես անդրադառնալու նպատակով:

Ուսումնասիրության շրջանակում կազմակերպված քննարկումներին և դասալսումներին մասնակցել են տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, մեթոդմիավորման նախագահը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը և օտար լեզուների մեթոդմիավորման անդամ ուսուցիչները: Դասալսումների հիմնական նպատակներն էին՝ ծանոթանալ սովորողների գիտելիքների մակարդակին և աջակցել ուսուցիչներին առկա խնդիրների լուծման և դասերի արդյունավետության բարձրացման գործընթացում:

Անդրադարձ կատարվեց նաև ուսուցիչների կողմից նոր չափորոշչային պահանջների կիրառումին և դասերի վերջնարդյունքների ապահովմանը, ինչը կարևոր է ուսումնական գործընթացի համահունչ իրականացման և նպատակային արդյունքների հասնելու համար:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, ՄՄ անդամները:

Արտահայտվողները գնահատեցին դասալսումների և քննարկումների արդյունավետությունը՝ նշելով, որ դրանք հնարավորություն են տալիս հետևողականորեն գնահատել սովորողների գիտելիքների մակարդակը, բացահայտել դժվարություններն ու թերությունները, ինչպես նաև աջակցել ուսուցիչներին դրանց հաղթահարման գործում:

Նրանք ընդգծեցին խմբային աշխատանքների, բանավեճերի և ՏՀՏ գործիքների կիրառման կարևորությունը, որը նպաստում է սովորողների ակտիվ մասնակցությանը և քննադատական մտածողության զարգացմանը: Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ դասերի ընթացքում քննարկումների պարբերականությունը և անդրադարձը խնդիրներին նպաստում են ուսուցման որակի բարձրացմանը և աշակերտների բազմակողմանի զարգացմանը:

Արտահայտվողները նաև կարևորեցին նոր չափորոշչային պահանջների ճիշտ և հետևողական կիրառում ուսուցիչների կողմից՝ ընդգծելով, որ այս մոտեցումը ապահովում է վերջնարդյունքների ապահովումն ու ուսումնական գործընթացի համահունչ իրականացումը:

Սերգեյ Ավանեսյանը ընդգծեց, որ ուսուցման արդյունավետությունը

բարձրացնելու նպատակով դպրոցում կարևոր է ակտիվորեն կիրառել լրացուցիչ մեթոդական նյութեր և կիրառել բազմազան ուսուցման մեթոդներ, ինչը հնարավորություն է տալիս աշակերտներին ավելի լավ յուրացնել գիտելիքը և մասնակցային լինել ուսուցման գործընթացին։

Նա նաև անդրադարձավ այն դժվարություններին, որոնք երբեմն առաջանում են դպրոցում ընթացող հիմնանորոգման աշխատանքների և երկհերթ ուսուցման պայմաններում, հատկապես կապված պաստառների, տեսադասընթացների և ՏՀՏ գործիքների օգտագործման հետ։ Սերգեյ Ավանեսյանը նկատեց, որ այդ պարագայում ուսուցիչները ստիպված են լինում հնարամիտ մոտեցումներ կիրառել՝ պահպանելով դասերի որակը և ուսուցման արդյունավետությունը։

Այնուամենայնիվ, նրա խոսքով՝ դպրոցական անձնակազմը շարունակում է իդեալականորեն կազմակերպել դասապրոցեսը, ապահովել թեմաների հստակ փոխանցումը և աշակերտների ակտիվ մասնակցությունը, անգամ արտակարգ պայմաններում, ինչը վկայում է ուսուցիչների բարձր մասնագիտական պատրաստվածության և պատասխանատվության մասին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2-9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում փետրվար ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ աշխատանքների ամփոփ պատկերը։ Նշվեց, որ օտար լեզուների ուսուցիչները փետրվարի ընթացքում իրականացրել են բազմազան կազմակերպչական, ուսումնական և դաստիարակչական միջոցառումներ, որոնց նպատակն էր ոչ միայն գիտելիքի ամրապնդումը, այլև աշակերտների անձնային և ինտելեկտուալ զարգացման խթանումը։

Հատուկ ուշադրություն է դարձվել սովորողների ընթերցանության մշակույթի ձևավորմանը, խոսքի զարգացմանը, վերլուծական մտածողության և ստեղծագործական կարողությունների բարձրացմանը։ Միաժամանակ զեկուցման մեջ անդրադարձ կատարվեց աշակերտների մասնակցությանը առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին, ինչպես նաև դպրոցի ղեկավար կազմի՝ տնօրենի, տնօրենի տեղակալի, մեթոդմիավորման նախագահի և զեկուցողի կողմից իրականացված վերահսկողական աշխատանքներին։

Ընդհանուր առմամբ ընդգծվեց, որ փետրվար ամսվա ընթացքում նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են պլանավորված ծավալով և նպաստել են ոչ միայն աշակերտների գիտելիքների ամրապնդմանը, այլև նրանց արժեքային համակարգի ձևավորմանը, ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը և մոտիվացիայի ակտիվացմանը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Մ.Պետրոսյանը

Արտահայտվողները կարևորեցին աշակերտների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը առարկայական օլիմպիադաների մարզային փուլին՝ նշելով, որ արձանագրվել է առաջադիմության նկատելի դրական տեղաշարժ։ Նրանք բարձր գնահատեցին նաև փետրվար ամսվա ընթացքում կազմակերպված միջոցառումների արդյունավետությունը և դրանց դաստիարակչական նշանակությունը, որոնք նպաստում են ոչ միայն գիտելիքների ամրապնդմանը, այլև աշակերտների արժեքային և ստեղծագործական կարողությունների զարգացմանը։

Մարգարիտա Պետրոսյանն իր խոսքում անդրադարձավ աշխատանքի ընթացքում հանդիպած որոշ դժվարություններին և ներկայացրեց դրանց հաղթահարման հնարավոր ուղիները։ Նա նաև առաջարկություններ արեց ուսումնադաստիարակչական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման և հետագա գործունեության կատարելագործման ուղղությամբ, շեշտելով համագործակցության և հետևողական պլանավորման կարևորությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Լսեցին 6. Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի սովորողները ցուցաբերել են բարձր ակտիվություն և նպատակասլացություն՝ մասնակցելով առարկայական օլիմպիադաներին։

Դպրոցական փուլի արդյունքներով 26 սովորող հաջողությամբ հաղթահարել են մրցույթը և իրավունք ստացել մասնակցելու մարզային փուլին։ Այդ սովորողներն են.

«Ֆրանսերեն» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Արզումանյան Արման, 9-րդ «Ա» դասարան
2. Ղասումյան Մանուշակ, 9-րդ «Ա» դասարան
3. Մալինցյան Ավետ, 9-րդ «Ա» դասարան
4. Միխայելյան Լիլիա, 9-րդ «Գ» դասարան

«Հայ գրականություն» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան
2. Միխայելյան Լիլիա, 9-րդ «Ա» դասարան

«Մաթեմատիկա» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Տատինցյան Ալետա, 6-րդ «Ա» դասարան
2. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան
3. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
4. Հովհաննիսյան Նարե, 7-րդ «Ա» դասարան
5. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
6. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան
7. Ղասումյան Հրաչիկ, 8-րդ «Գ» դասարան
8. Մելքումյան Միլենա, 8-րդ «Գ» դասարան
9. Պողոսյան Գագիկ, 8-րդ «Գ» դասարան
10. Ջավադյան Ալբերտ, 8-րդ «Գ» դասարան
11. Ջհանգիրյան Հայկ, 8-րդ «Բ» դասարան

«Մայրենի» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

«Հայոց լեզու» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Մինասյան Անի, 9-րդ «Գ» դասարան
2. Բաղդագյուլյան Ինեսա, 9-րդ «Ա» դասարան
3. Բակունց Լիա, 9-րդ «Ա» դասարան
4. Մալինցյան Լիլի, 9-րդ «Գ» դասարան
5. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան
6. Մարտիրոսյան Մարի, 9-րդ «Ա» դասարան

«Քիմիա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Բաղդագյուլյան Ինեսա, 9-րդ «Ա» դասարան

«Ինֆորմատիկա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան։

Սովորողներից 6-ը մարզային փուլի արդյունքներով, դրսևորելով բարձր գիտելիքներ և մրցունակ պատրաստվածություն, անցել են նաև օլիմպիադայի հանրապետական փուլ: Այդ սովորողներն են.

«Մաթեմատիկա» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
2. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
3. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան

«Հայոց լեզու» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Մալինցյան Լիլի, 9-րդ «Գ» դասարան
2. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան

«Ինֆորմատիկա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան:

Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի այն սովորողները, որոնք մարզային փուլի ընթացքում դրսևորել են բարձր գիտելիքներ և մրցունակ պատրաստվածություն, Սյունիքի մարզպետի կողմից արժանացել են գովասանագրերի: Այդ սովորողներն են.

«Մայրենի» առարկայից.

1. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

«Մաթեմատիկա» առարկայից.

1. Տատինցյան Ալետա, 6-րդ «Ա» դասարան
2. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
3. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
4. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

Այս ցուցանիշները վկայում են դպրոցի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ուսուցիչների հետևողական աշխատանքի և սովորողների պատասխանատու մոտեցման մասին: Օլիմպիադաներին մասնակցությունը նպաստում է սովորողների գիտելիքների խորացմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը և առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը:

Զեկուցողն արտահայտեց ափսոսանքը, որ 2025–2026 ուսումնական տարում օտար լեզուներից օլիմպիադայի հանրապետական փուլին որևէ աշակերտ չի անցել: Նա հույս հայտնեց, որ հաջորդ ուսումնական տարում նման բացթողումներ չեն կրկնվի և դպրոցը կկարողանա ապահովել աշակերտների ակտիվ մասնակցությունը և հաջողությունները նաև հանրապետական մակարդակում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները բարձր գնահատեցին սովորողների և ուսուցիչների ձեռքբերումները՝ ընդգծելով, որ դրանք վկայում են դպրոցի կրթական գործընթացի կազմակերպման բարձր մակարդակի և հետևողական մոտեցման մասին: Նրանք նաև կոչ արեցին շարունակել աջակցել ակտիվ սովորողներին և խրախուսել նրանց մասնակցությունը տարբեր մրցույթների, ինչը նպաստում է ոչ միայն գիտելիքների խորացմանը, այլև աշակերտների մրցունակության և անձնական զարգացման բարձրացմանը:

Որոշեցին՝ Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփման մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին 7. 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2–9-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման ընթացքը՝ ընդգծելով, որ այն իրականացվում է գործող իրավական և մեթոդական փաստաթղթերի պահանջներին լիակատար համապատասխանությամբ: Ներկայացվեցին դասավանդման ընթացքում

կիրառվող ժամանակակից ուսուցման մեթոդները, ուսուցման չափորոշչային պահանջներին համապատասխան ուսումնառության արդյունքների ապահովման գործիքները, ինչպես նաև ուսուցիչների կողմից կիրառվող ձևավորող գնահատման մեխանիզմները։

Զեկուցողը շեշտեց, որ ուսումնական գործընթացում առաջնահերթ է կիրառվում սովորողակենտրոն մոտեցումը, իրականացվում են ինտեգրված դասեր և կազմակերպվում նախագծային ու հետազոտական աշխատանքներ, որոնք համարվում են նոր չափորոշչի առանցքային բաղադրիչներ։ Նա կարևորեց առարկայական ծրագրերի և ուսուցչի կողմնորոշիչ ծրագրերի (ՕԹՊ) համապատասխանությունը ազգային հանրակրթության պետական չափորոշչին, ինչպես նաև ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպումը և դրանց իրականացման մակարդակի հետևողական վերահսկումը ու գնահատումը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, ՄՄ անդամները։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների մասնագիտական կարողությունների մշտական զարգացումը՝ շեշտելով շարունակական վերապատրաստումների, մեթոդական խորհրդատվությունների և փորձի փոխանակման արդյունավետությունը։ Նա ընդգծեց, որ ընթացիկ վերահսկողության շրջանակում իրականացվում են դասալսումներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել ուսուցման գործընթացը և ապահովել նոր մոտեցումների որակյալ իրականացման վերահսկողություն։

Նոր ՀՊՉ ներդրման գործընթացում նկատելի են ինչպես դրական առաջընթացներ, այնպես էլ որոշակի մարտահրավերներ։ Դրանք հիմնականում առնչվում են նոր ուսուցողական մոտեցումների լիարժեք յուրացման, ուսումնական ժամանակի արդյունավետ բաշխման և ուսումնառության բովանդակության ճիշտ պլանավորման հետ։

Արտահայտվողները բարձր գնահատեցին դասավանդման ժամանակ կիրառվող սովորողակենտրոն մոտեցումները, շեշտեցին, որ դրանք նպաստում են աշակերտների ակտիվ մասնակցությանը, ինքնուրույն ուսուցման հմտությունների զարգացմանը և քննադատական մտածողության ձևավորմանը։

Նրանք կարևորեցին ինտեգրված դասերի և նախագծային աշխատանքների ներդրումը՝ ընդգծելով, որ դա ոչ միայն բարելավում է ուսուցման արդյունավետությունը, այլև նպաստում է ուսուցիչների մասնագիտական կարողությունների ամրապնդմանը։ Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպումը և դրանց հետևողական գնահատումը կարևոր գործոններ են ուսումնական գործընթացի որակի և չափորոշիչներին համապատասխանության ապահովման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան։

Մ/Մ նախագահ՝ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

«23» մարտի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Լուսինե Հայրյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան

Նիստին ներկա էին տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Հաղորդում Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ մանրամասն և համակարգված կերպով անդրադառնալով իրականացված աշխատանքների ողջ շրջանակին: Նա հանգամանորեն վերլուծեց կատարված քայլերը՝ ներկայացնելով դրանց արդյունավետությունն ու ազդեցությունը ուսումնական գործընթացի կազմակերպման և որակի բարելավման վրա:
Ամփոփելով նախորդ նիստի արդյունքները՝ զեկուցողը ընդգծեց, որ ծրագրավորված բոլոր միջոցառումները՝ ներառյալ դասալսումները, մասնագիտական քննարկումները, մեթոդական աշխատանքներն ու փորձի փոխանակման նախաձեռնությունները, իրականացվել են լիարժեք,

նպատակային և բարձր պատասխանատվությամբ: Հատկապես կարևորվեց համագործակցային աշխատանքի մթնոլորտը, որը նպաստել է ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը և նորարարական մոտեցումների կիրառմանը:

Զեկուցողը նաև նշեց, որ նիստի ընթացքում ընդունված բոլոր հանձնարարականներն ու որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում և պատշաճ որակով: Դրանց իրականացումը էականորեն նպաստել է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, դասավանդման մեթոդների կատարելագործմանը և սովորողների կրթական արդյունքների բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները ընդհանուր առմամբ բարձր գնահատեցին մեթոդմիավորման կատարած աշխատանքները՝ ընդգծելով դրանց կազմակերպվածությունն ու նպատակային ուղղվածությունը: Նշվեց, որ նախատեսված միջոցառումները իրականացվել են համակարգված և արդյունավետ կերպով՝ ապահովելով ուսումնական գործընթացի կայուն զարգացումը:

Մասնակիցները հատկապես կարևորեցին այն հանգամանքը, որ իրականացված աշխատանքներն էականորեն նպաստել են դասերի արդյունավետության բարձրացմանը, սովորողների ակտիվ ներգրավվածության ապահովմանը, ինչպես նաև դասավանդման որակի շարունակական բարելավմանը: Արձանագրվեց նաև, որ կիրառված մեթոդներն ու մոտեցումները նպաստել են սովորողների հետաքրքրվածության աճին և ուսումնական նյութի առավել արդյունավետ յուրացմանը:

Միաժամանակ առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ և պատասխանատվությամբ՝ առավել ուշադրություն դարձնելով նորարարական մեթոդների ներդրմանը, ժամանակակից կրթական գործիքների կիրառմանը և ուսուցիչների միջև փորձի փոխանակման ընդլայնմանը, ինչը կնպաստի կրթական գործընթացի հետագա զարգացմանն ու կատարելագործմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների դերը՝ ընդգծելով, որ դրանք հանդիսանում են արդյունավետ և գործնական նշանակություն ունեցող գործիք ուսուցիչների մասնագիտական զարգացման, փորձի փոխանակման և համագործակցային առողջ մթնոլորտի ձևավորման համար: Նա շեշտեց, որ անհրաժեշտ է ձևավորել փոխվստահության, բացության և աջակցման վրա հիմնված միջավայր, որտեղ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է ազատորեն ներկայացնել իր փորձը, քննարկել առկա դժվարությունները և ստանալ կառուցողական մասնագիտական աջակցություն:

Զեկուցողը նաև ընդգծեց, որ ժամանակակից կրթական պահանջներին համահունչ՝ ուսուցիչները պետք է կիրառեն բազմազան և նորարարական մեթոդներ ու մոտեցումներ՝ նպաստելով սովորողների հետաքրքրությունների ձևավորմանը, նրանց ինքնուրույն մտածողության, վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Նշվեց, որ ուսումնական գործընթացում առաջնային պետք է լինի սովորողի ակտիվ և գիտակցված ներգրավվածությունը, ինչը պայմանավորում է ուսուցման արդյունավետությունը:

Միաժամանակ առաջարկվեց յուրաքանչյուր փոխադարձ դասալսումից հետո պարտադիր կազմակերպել մասնագիտական քննարկումներ՝

մեթոդմիավորման ուսուցիչների ակտիվ մասնակցությամբ: Ընդգծվեց, որ նման քննարկումները հնարավորություն են տալիս համակողմանի վերլուծել դասի ընթացքը, բացահայտել ուժեղ կողմերն ու բարելավման ենթակա ոլորտները, ինչպես նաև մշակել հստակ և գործնական քայլեր՝ դասավանդման որակի շարունակական բարձրացման նպատակով:

Զեկուցողը նաև անդրադարձավ նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացին՝ կարևորելով դրանց արդյունավետ և նպատակային կիրառումը ուսումնական գործընթացում: Առանձնահատուկ ընդգծվեց 2-9-րդ դասարաններում դասալսումների պարբերական կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև դրանց ընթացքում արձանագրված հարցերի և խնդիրների շուրջ շարունակական, խորքային քննարկումների իրականացումը՝ ապահովելու կրթական գործընթացի կայուն զարգացումն ու բարձր արդյունավետությունը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները կարևորեցին փոխադարձ դասալսումների դերը՝ նշելով, որ դրանք արդյունավետ միջոց են ուսուցիչների մասնագիտական զարգացման, փորձի փոխանակման և համագործակցային մթնոլորտի ձևավորման համար: Նրանք ընդգծեցին, որ նման ձևաչափը հնարավորություն է տալիս ոչ միայն դիտարկել տարբեր դասավանդման մոտեցումներ, այլև փոխադարձաբար սովորել միմյանցից՝ նպաստելով ուսուցման որակի բարձրացմանը:

Մասնակիցները շեշտեցին նաև փոխվստահության և աջակցող միջավայրի կարևորությունը՝ նշելով, որ այն ստեղծում է պայմաններ բաց և կառուցողական քննարկումների համար, որտեղ ուսուցիչները կարող են ազատորեն ներկայացնել իրենց փորձը, բարձրաձայնել խնդիրները և ստանալ մասնագիտական աջակցություն:

Արտահայտվողները համակարծիք էին, որ ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան անհրաժեշտ է կիրառել բազմազան և նորարարական մեթոդներ՝ խթանելու սովորողների հետաքրքրությունը, ակտիվ մասնակցությունն ու ստեղծագործական մտածողությունը: Նշվեց, որ սովորողակենտրոն մոտեցումների կիրառումը նպաստում է նաև նրանց ինքնուրույն մտածողության և վերլուծական կարողությունների զարգացմանը:

Միաժամանակ առաջարկվեց յուրաքանչյուր դասալսումից հետո պարտադիր կազմակերպել քննարկումներ՝ ապահովելով դրանց արդյունավետությունը և նպատակային ուղղվածությունը: Ընդգծվեց, որ նման քննարկումները կարևոր են դասի վերլուծության, ուժեղ և թույլ կողմերի բացահայտման, ինչպես նաև հետագա բարելավման քայլերի հստակեցման տեսանկյունից:

Արտահայտվողները նաև կարևորեցին նոր ՀՊՉ-ների արդյունավետ ներդրումը՝ նշելով, որ անհրաժեշտ է շարունակաբար անդրադառնալ դրանց գործնական կիրառմանը: Նշվեց, որ դասալսումների ընթացքում արձանագրված խնդիրների շուրջ պարբերական և խորքային քննարկումները կնպաստեն ուսումնական գործընթացի առավել նպատակային կազմակերպմանը և շարունակական զարգացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև մյուս մեթոդական միավորումների ուսուցիչների հետ:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները՝ դրանք ներկայացնելով համակողմանի և վերլուծական մոտեցմամբ: Նա նշեց, որ ստուգումների ընթացքում արձանագրվել են մի շարք թերություններ, որոնք հիմնականում կապված են եղել մատյանների ոչ լիարժեք և ոչ ժամանակին լրացման հետ: Մասնավորապես ընդգծվեց, որ

մինչև մարտ ամիսը որոշ ուսուցիչների մոտ առկա են եղել բացթողումներ՝ կապված դասերի թեմաների չլրացման կամ ոչ պատշաճ ձևակերպման հետ։

Զեկուցողը շեշտեց, որ էլեկտրոնային մատենավարությունը հանդիսանում է ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և գնահատման կարևորագույն գործիք, ուստի դրա ճշգրիտ և ժամանակին վարումը պարտադիր պայման է կրթության որակի ապահովման համար։ Նա ընդգծեց, որ արձանագրված թերությունները պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում վերացվեն՝ բացառելով դրանց կրկնությունը հետագա աշխատանքներում։

Միաժամանակ զեկուցողը անդրադարձավ նոր չափորոշչային դասարաններում ամփոփիչ գնահատականների մուտքագրման հետ կապված խնդիրներին։ Նշվեց, որ առկա են եղել դեպքեր, երբ գնահատականները չեն փոխանցվել սահմանված ժամկետներում, ինչը բացասաբար է անդրադառնում ուսումնական գործընթացի կազմակերպվածության, ինչպես նաև գնահատման թափանցիկության և հետևողականության վրա։

Զեկուցողը հատուկ կարևորեց կարգապահության և սահմանված պահանջների խիստ պահպանման անհրաժեշտությունը՝ հիշեցնելով գործող նորմերը։ Նա ընդգծեց, որ թեմաների ամփոփման գնահատականները պետք է մուտքագրել 5 աշխատանքային օրվա ընթացքում։ Վերջում նա հորդորեց բոլոր ուսուցիչներին ցուցաբերել առավել բարձր պատասխանատվություն և հետևողականություն՝ ապահովելու էլեկտրոնային մատենավարության պատշաճ վարումը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց էլեկտրոնային մատենավարության նկատմամբ ամենօրյա վերահսկողության անհրաժեշտությունը՝ նշելով, որ համակարգված և հետևողական հսկողությունը կօգնի ժամանակին բացահայտել և շտկել հնարավոր թերությունները՝ խուսափելով հետագա խնդիրներից։ Նա ընդգծեց, որ նման մոտեցումը նպաստում է նաև կարգով սահմանված պահանջների լիարժեք պահպանմանը։

Միաժամանակ Ավանեսյանը հիշեցրեց մատենավարության վարման կարգի հիմնական դրույթները և հորդորեց ուսուցիչներին լինել առավել ուշադիր և պատասխանատու գրանցումների իրականացման ընթացքում՝ ապահովելով տվյալների ճշգրտությունն ու ամբողջականությունը։

Արտահայտվողները կարևորեցին ներկայացված խնդիրների արդիականությունը՝ նշելով, որ էլեկտրոնային մատենավարության պատշաճ վարումը հանդիսանում է ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնասյուներից մեկը։ Նրանք ընդգծեցին, որ արձանագրված թերությունները, թեև համակարգային բնույթ չեն կրում, սակայն պահանջում են արագ և նպատակային արձագանք։

Մասնակիցները համակարծիք էին, որ դասերի թեմաների չլրացման և գնահատականների ուշ մուտքագրման դեպքերը պետք է բացառվեն, քանի որ դրանք կարող են խաթարել ինչպես ներքին վերահսկողությունը, այնպես էլ սովորողների առաջադիմության օբյեկտիվ գնահատումը։

Արտահայտվողները նաև կարևորեցին սահմանված ժամկետների պահպանման անհրաժեշտությունը՝ շեշտելով, որ կարգապահ մոտեցումը և պատասխանատվության բարձր մակարդակը յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի անբաժանելի մասն են։ Նշվեց, որ էլեկտրոնային մատենավարության ճիշտ կազմակերպումը նպաստում է ուսումնական գործընթացի թափանցիկությանն ու արդյունավետությանը։

Միաժամանակ առաջարկվեց պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ և խորհրդատվություններ՝ ուսուցիչների համար՝ էլեկտրոնային մատենավարության վարման հմտությունները

կատարելագործելու նպատակով: Կարևորվեց նաև ներքին վերահսկողության մեխանիզմների շարունակական կիրառումը՝ նմանատիպ բացթողումների կանխարգելման և աշխատանքի որակի բարձրացման համար:

Վերջում արտահայտվողները հորդորեցին գործընկերներին ցուցաբերել առավել հետևողական և պատասխանատու մոտեցում՝ ապահովելու սահմանված պահանջների լիարժեք իրականացումը և կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) շրջանակում մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը՝ այն ներկայացնելով վերլուծական և համակողմանի մոտեցմամբ: Նա հանգամանորեն անդրադարձավ կատարված գործունեությանը՝ ընդգծելով իրականացված միջոցառումների բովանդակային հագեցվածությունն ու դաստիարակչական ուղղվածությունը:

Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են բազմաբնույթ ուսումնադաստիարակչական միջոցառումներ, որոնք միտված են եղել սովորողների հայրենասիրական, գեղագիտական, բարոյական և քաղաքացիական արժեքների ձևավորմանն ու զարգացմանը: Մասնավորապես իրականացվել են դասղեկական ժամեր, թեմատիկ զրույցներ, ճանաչողական և դաստիարակչական միջոցառումներ՝ նվիրված Մարտի 8-ին, ինչպես նաև կազմակերպվել են առարկայական շաբաթներ և տարբեր կրթական նախաձեռնություններ՝ ապահովելով սովորողների բազմակողմանի ներգրավվածությունը:

Զեկուցողը կարևորեց նաև արտադասարանական աշխատանքների ակտիվ իրականացումը՝ նշելով, որ ուսուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվել են քննարկումներ, մրցույթներ, ստեղծագործական և ճանաչողական գործունեություններ, որոնք նպաստել են սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը, ստեղծագործական մտածողության զարգացմանը և ինքնարտահայտման խթանմանը:

Առանձնահատուկ ընդգծվեց կարգապահության ամրապնդմանն ուղղված հետևողական աշխատանքը, սովորողների հաճախելիության նկատմամբ իրականացվող մշտադիտարկումը, ինչպես նաև ծնողների հետ համագործակցության արդյունավետության բարձրացումը: Նշվեց, որ այս ուղղություններով իրականացված քայլերը նպաստել են ուսումնական գործընթացի կազմակերպվածության և արդյունավետության ապահովմանը:

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ իրականացված աշխատանքները եղել են նպատակային, համակարգված և արդյունավետ՝ զգալիորեն նպաստելով կրթական գործընթացի որակի բարձրացմանը, սովորողների ակտիվ ներգրավվածության ապահովմանը և դաստիարակչական խնդիրների լուծմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները դրական գնահատեցին մարտ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները՝ ընդգծելով

դրանց բազմաբովանդակությունն ու նպատակային ուղղվածությունը: Նրանք նշեցին, որ իրականացված միջոցառումները նպաստել են սովորողների համակողմանի զարգացմանը և կրթական գործընթացի ակտիվացմանը:
Մասնակիցները կարևորեցին հատկապես հայրենասիրական, բարոյական և քաղաքացիական դաստիարակությանն ուղղված նախաձեռնությունները՝ ընդգծելով դրանց դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում: Նշվեց, որ նման միջոցառումները խթանում են սովորողների մասնակցությունը և բարձրացնում նրանց հետաքրքրվածությունը դպրոցական կյանքի նկատմամբ:
Արտահայտվողները նաև ընդգծեցին արտադասարանական աշխատանքների կարևորությունը՝ նշելով, որ դրանք հնարավորություն են տալիս բացահայտել սովորողների անհատական կարողությունները, զարգացնել ստեղծագործական մտածողությունը և խթանել ինքնուրույնությունը:
Միաժամանակ կարևորվեց կարգապահության պահպանման, հաճախելիության վերահսկման և ծնողների հետ համագործակցության շարունակական ապահովումը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևոր բաղադրիչներ:
Վերջում առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ միաժամանակ ընդլայնելով միջոցառումների շրջանակը, կիրառելով նորարարական մոտեցումներ և առավել ակտիվ ներգրավելով սովորողներին կրթադաստիարակչական գործընթացներում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մարտ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատել լավ: Շարունակել աշխատանքները ըստ հաստատված տարեկան պլանի՝ առավել ուշադրություն դարձնելով սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը, կարգապահության ամրապնդմանը և դաստիարակչական միջոցառումների բազմազանությանը:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում հունվար-փետրվար ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների մանրամասն հաշվետվությունները՝ դրանք ներկայացնելով համակարգված և վերլուծական մոտեցմամբ: Նա հանգամանորեն անդրադարձավ իրականացված գործունեության հիմնական ուղղություններին՝ ընդգծելով դրանց նպատակային կազմակերպվածությունն ու արդյունավետությունը:
Ներկայացվեց աշխատանքների ընդհանուր ընթացքը՝ ներառելով անցկացված դասալսումները, տրամադրված մեթոդական աջակցությունները, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական զարգացմանը միտված տարբեր նախաձեռնությունները: Զեկուցողը կարևորեց, որ նշված աշխատանքները նպաստել են ուսուցման գործընթացի որակի բարձրացմանը և դասավանդման մեթոդների կատարելագործմանը:
Անդրադարձ կատարվեց նաև նոր ՀՊՉ-ների ներդրման ընթացքին և արդյունքներին՝ ըստ կրթական աստիճանների: Նշվեց, որ իրականացվել են հետևողական աշխատանքներ՝ ապահովելու նոր չափորոշիչների արդյունավետ կիրառումը, միաժամանակ բացահայտվել են որոշակի խնդիրներ, որոնք գտնվում են մշտական քննարկման և կարգավորման փուլում:
Զեկուցողը առանձնահատուկ կարևորեց էսսեագրության զարգացման

ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ ընդգծելով դրանց դերը սովորողների վերլուծական և ստեղծագործական մտածողության ձևավորման գործում: Նա նաև անդրադարձավ ուսումնական նախագծերի իրականացման ընթացքին՝ նշելով, որ դրանք նպաստել են սովորողների ինքնուրույնության, հետազոտական կարողությունների և թիմային աշխատանքի զարգացմանը:

Բացի այդ, ընդգծվեց դպրոցի կառավարման արդյունավետության կարևորությունը՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացների հաջող կազմակերպման առանցքային գործոն: Նշվեց, որ արդյունավետ կառավարման շնորհիվ հնարավոր է ապահովել ուսումնական ծրագրերի որակի բարձր մակարդակ, գործընթացների համակարգված իրականացում և կրթության ընդհանուր արդյունավետության աճ:

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ իրականացված աշխատանքները եղել են նպատակային, համակարգված և արդյունքակենտրոն՝ նպաստելով կրթական գործընթացի կայուն զարգացմանն ու կատարելագործմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները բարձր գնահատեցին ներկայացված հաշվետվությունը՝ ընդգծելով դրա ամբողջականությունն ու վերլուծական բնույթը: Նրանք նշեցին, որ հունվար-փետրվար ամիսներին իրականացված աշխատանքները եղել են կազմակերպված և նպատակային՝ ապահովելով ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքը:

Մասնակիցները կարևորեցին դասալսումների և մեթոդական աջակցությունների դերը՝ նշելով, որ դրանք նպաստել են ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը և դասավանդման որակի բարելավմանը:

Արտահայտվողները դրական գնահատեցին նաև նոր ՀՊՉ-ների ներդրման ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ ընդգծելով, որ շարունակական քննարկումները և վերլուծությունները հնարավորություն են տալիս ժամանակին արձագանքել առաջացող խնդիրներին և ապահովել գործընթացի արդյունավետ իրականացումը:

Նշվեց նաև էսսեագրության և ուսումնական նախագծերի կարևորությունը՝ որպես սովորողների ստեղծագործական, վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացման արդյունավետ միջոցներ:

Միաժամանակ մասնակիցները կարևորեցին դպրոցի կառավարման արդյունավետությունը՝ ընդգծելով դրա առանցքային դերը կրթական գործընթացների կազմակերպման և ընդհանուր արդյունքների բարելավման գործում:

Վերջում առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ առավել խորացնելով նորարարական մոտեցումների կիրառումը, ուժեղացնելով համագործակցային միջավայրը և ապահովելով կրթական գործընթացի շարունակական զարգացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունը (կցվում է):

ՄՄ նախագահ՝ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9

«27» ապրիլ 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Լուսինե Հայրյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Հաղորդում՝Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ.Պետրոսյան)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ.Պետրոսյան)
4. 9-րդ դասարանների ավարտական քննությունների քննական տոմսերի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննութուններից ազատել:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
8. Այլ երկրից Հայաստան տեղափոխված սովորողների գիտելիքների գրավոր ստուգման գրավոր աշխատանքների տարբերակների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
9. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ընդգծելով նախորդ նիստի արդյունքների

ամփոփումը և կատարված աշխատանքների մանրամասն ներկայացումը: Նա նշեց, որ բոլոր նախատեսված աշխատանքները և ընդունված որոշումները կատարվել են պատշաճ ձևով, սահմանված ժամկետներում, ինչը ապահովել է մեթոդմիավորման գործունեության շարունակականությունը և արդյունավետությունը::

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները ընդգծեցին, որ նախորդ նիստի ընթացքում կատարված աշխատանքներն ու որոշումների իրագործումը եղել է արդյունավետ և նպատակային: Նրանք գնահատեցին մեթոդմիավորման հանդիպումների կարևորությունը՝ որպես ուսուցիչների փորձի փոխանակման, դասավանդման մեթոդների կատարելագործման և ուսուցման արդյունքների հետևողական վերահսկման հարթակ: Նշվեց, որ համակարգված աշխատանքների և պլանավորված միջոցառումների արդյունքում հնարավոր է եղել ժամանակին բացահայտել առաջացած խնդիրները և կազմակերպել նպատակային միջամտություններ դրանց լուծման համար, ինչը նպաստում է կրթական գործընթացի որակի և ուսուցիչների մասնագիտական զարգացման բարձրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկույցում ներկայացվեցին հաշվետու ժամանակահատվածում իրականացված էլեկտրոնային մատյանների վերահսկման արդյունքները: Անդրադարձ կատարվեց ինչպես իրականացված աշխատանքներին, այնպես էլ ի հայտ եկած թերություններին: Առանձնահատուկ շեշտադրվեց ամփոփիչ աշխատանքների, գործնական առաջադրանքների և ընթացիկ գնահատականների ժամանակին մուտքագրումը համակարգ, քանի որ նման տվյալների ուշացումը բացասաբար է անդրադառնում գնահատման գործընթացի ամբողջական և թափանցիկ կազմակերպման վրա:

Նա նաև կարևորեց արդեն գրանցված գնահատականների կրկնակի ստուգման անհրաժեշտությունը՝ տվյալների ճշգրտությունն ապահովելու և սահմանված չափորոշիչներին համապատասխանությունը վերահսկելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանն իր խոսքում կարևորեց մատենավարության ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի գիտակցված և պատասխանատու մոտեցումը: Նա տեղեկացրեց, որ իրականացվող ընթացիկ վերահսկումների ընթացքում պարբերաբար բացահայտվում են տարբեր թերություններ, ինչը պայմանավորում է արագ արձագանքի և կազմակերպչական կարգապահության բարձրացման անհրաժեշտությունը:

Նա նաև հորդորեց առավել ուշադրությամբ և հետևողականությամբ մոտենալ տվյալների մուտքագրմանը, գնահատականների փոխանցմանը և էլեկտրոնային մատյանի վարումը սահմանված պահանջներին համապատասխան կազմակերպելուն՝ նշելով, որ այս գործընթացների որակը նշանակալի ազդեցություն ունի ուսումնական աշխատանքի թափանցիկության և արդյունավետության ապահովման վրա:

Որոշեցին՝

- Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն:
- ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում,
- տնօրենի տեղակալի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում:

Լսեցին 4. 9-րդ դասարանների ավարտական քննությունների քննական տոմսերի

քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարում դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները քննություն են հանձնելու «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն», «Անգլերեն» առարկաներից: Զեկուցողը հավելեց, որ ուսուցիչների կողմից կազմվել են «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն», «Անգլերեն» առարկաների քննական տոմսերը, որոնք համապատասխանում եմ ԳԹԿ-ի կողմից սահմանված բոլոր պահանջներին:

Արտահայտվեցին՝ Շ. Գյուրջյանը, Լ. Բաղդասարյանը, Լ. Գրիգորյանը:

Արտահայտվողները փաստեցին, որ կազմված հարցաշարերն ու հարցատոմսերը լիովին համապատասխանում են Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) կողմից սահմանված չափանիշներին, պահանջներին և կարգավորումներին՝ ապահովելով գնահատման գործընթացի օբյեկտիվությունը, թափանցիկությունն ու որակը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների հարցատոմսերը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը: Զեկուցողը նշեց նաև, որ կազմված է քննական առարկաների խորհրդատվությունների ժամանակացույցը:

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը, Լ. Բաղդասարյանը, Լ. Գրիգորյանը:

Արտահայտվողները նշեցին, որ պետք է քննություններին նախապատրաստվել ամբողջ տարվա ընթացքում, պարբերաբար իրականացնել առարկայական նախաքննական խորհրդատվություններ, ինչը կնպաստի ավարտական քննությունները սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:

Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմում առաջադրվել են բոլոր ցանկացողները, ինչպես նաև հաշվի են առնվել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22 ապրիլի 2026 թվականի 675-Ա/2 հրամանը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, ժամանակացույցը, խորհրդատվությունների ժամանակացույցը (կցվում է):

Լսեցին 6. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Բ», «Գ» դասարանների աշակերտներ Ալեքս Սահակյանի, Էդիկ Ստեփանյանի, Արթուր Ալումյանի ծնողները դիմում են

ներկայացրել, որով խնդրել են իրենց երեխաներին ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից։ Զեկուցողը շեշտեց, որ այս որոշման ընդունման համար հիմք է այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին։ Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների։

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Արտահայտվողը նշեց, որ Ալեքս Սահակյանի, Էդիկ Ստեփանյանի և Արթուր Ալումյանի ծնողների կողմից ներկայացված դիմումների համաձայն՝ անհրաժեշտ է նշված սովորողներին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նրանք ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք։

Արտահայտվողը նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, համաձայն որի՝ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին։

Նշված կարգավորման համաձայն՝ այդ սովորողներին տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ՝ հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ՝ առանց քննական գնահատականների։

Որոշեցին՝ Հավանություն տալ համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ ԿԱՊԿՈՒ աշակերտներ Ալեքս Սահակյանին, Էդիկ Ստեփանյանին, Արթուր Ալումյանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից։

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ապրիլ ամսվա ընթացքում օտար լեզուների մեթոդմիավորման կողմից ամբողջությամբ իրականացվել են պլանավորված ուսումնադաստիարակչական և

մեթոդական աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել օտար լեզուների դասավանդման որակի ուսումնասիրմանը, էլեկտրոնային մատյանների վարման կարգի պահպանմանը, ինչպես նաև թեմատիկ պլանների և ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգմանը:

Նշվեց, որ մեթոդական աշխատանքի շրջանակում կազմակերպվել և իրականացվել են փոխադարձ դասալսումներ, որոնք նպաստել են ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, փորձի փոխանակմանը և նոր չափորոշչային պահանջների առավել արդյունավետ կիրառմանը ուսումնական գործընթացում:

Դաստիարակչական աշխատանքների համատեքստում կարևորվել են ազգային հիշատակի օրերը: Մասնավորապես, կազմակերպվել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված քննարկումներ, ինչպես նաև իրականացվել է այցելություն հուշարձան՝ զոհերի հիշատակը հարգելու և սովորողների մեջ ազգային արժեքների, պատմական հիշողության և հարգանքի ձևավորման նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Քննարկման մասնակիցները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր գործառույթներն ու միջոցառումները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման ուսուցիչներին, իրականացվել են լիարժեք և ժամանակին՝ առանց որևէ բացթողման կամ թերակատարության: Նրանց գնահատմամբ, ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում, ինչը ապահովել է ծրագրի նպատակների ամբողջական իրագործումը:

Հատուկ շեշտվեց, որ աշխատանքը կազմակերպվել է կանխատեսելի և համակարգված եղանակով՝ կիրառելով արդյունավետ մեթոդաբանական մոտեցումներ: Սա, իր հերթին, նպաստել է միջոցառումների բարձր որակով անցկացմանը և նախատեսված արդյունքների հասնելուն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն՝ 2025-2026 ուսումնական տարվա ապրիլ ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարողականը:

Լսեցին 8. Այլ երկրից Հայաստան տեղափոխված սովորողների գիտելիքների գրավոր ստուգման գրավոր աշխատանքների տարբերակների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը նշեց, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի ծնողը դիմում է ներկայացրել՝ խնդրելով երեխաների ուսումը շարունակել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի համապատասխան դասարաններում:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ հիմք ընդունելով «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգի» 21-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ կետերի պահանջները՝ նշված սովորողները ենթակա են ընդունման դպրոց՝ մեկ դասարան ցածր՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ դասարաններ:

Զեկուցողը ընդգծեց, որ գործընթացը սահմանված կարգով կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է նախապես գնահատել Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի գիտելիքների մակարդակը: Այդ նպատակով տվյալ դասարանների ուսումնական պլանով նախատեսված առարկաներից նրանք պետք է գրեն գրավոր աշխատանքներ:

Նշվեց, որ այդ ստուգմանը հաջորդելու է նույն կարգի 30-րդ կետի պահանջի համաձայն գործընթացի շարունակությունը, որի շրջանակում, սովորողների

փաստացի առարկայական գիտելիքների վերաբերյալ մասնագիտական խմբի գրավոր եզրակացության հիման վրա, տնօրենը կընդունի որոշում սովորողների համապատասխան դասարան ընդունելու վերաբերյալ։
Միաժամանակ տնօրենը կհաստատի ուսումնական պլանով նախատեսված առարկաների վերաբերյալ մեթոդմիավորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, ինչպես նաև լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, որի համաձայն սովորողների համար կկազմակերպվի նպատակային ուսուցում՝ բաց թողնված ծրագրային նյութի յուրացման ապահովման համար։
Զեկուցողը հավելեց, որ մասնագիտական եզրակացությունը կտրվի բոլոր առարկաներից գրավոր ստուգումների արդյունքների համապարփակ վերլուծության հիման վրա՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունն ու կարգի պահանջների լիարժեք կատարումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները քննարկեցին Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե և Արթուր Դանիելյանների՝ դպրոց ընդունվելու գործընթացին առնչվող հարցը և ծանոթացան գործող իրավական կարգավորումներին։
Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ սովորողների ընդունման գործընթացը պետք է իրականացվի սահմանված կարգի պահանջներին լիարժեք համապատասխան՝ ապահովելով թափանցիկ, օբյեկտիվ և արդար մոտեցում։
Արտահայտվողները կարևորեցին գիտելիքների ստուգման և գրավոր աշխատանքների միջոցով սովորողների կրթական պատրաստվածության գնահատումը՝ նշելով, որ նման մեխանիզմը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ որոշել նրանց գիտելիքների մակարդակը և հիմնավորված որոշում կայացնել համապատասխան դասարաններում ընդգրկելու վերաբերյալ։
Միաժամանակ առանձնահատուկ ուշադրություն դարձվեց մասնագիտական խմբի կողմից տրվող եզրակացությանը՝ այն դիտարկելով որպես ընդունման գործընթացի կարևոր բաղադրիչ, որը նպաստում է սովորողների կրթական կարիքների, կարողությունների և պատրաստվածության մակարդակի համակողմանի գնահատմանը։
Արտահայտվողները նաև կարևորեցին սովորողների կրթական շարունակականության ապահովման նպատակով լրացուցիչ աջակցող միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ անհատական ուսումնական պլանների մշակումը, լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների կազմակերպումը՝ բաց թողնված ուսումնական նյութի արդյունավետ յուրացման և նոր կրթական միջավայրին առավել արագ ու հաջող հարմարվելու նպատակով։
Ամփոփելով՝ արտահայտվողները նշեցին, որ գործընթացը համապատասխանում է գործող կարգավորումներին և պատշաճ կազմակերպման դեպքում կնպաստի սովորողների կրթության անընդհատության, հաջող ինտեգրման և հետագա ուսումնական առաջադիմության ապահովմանը։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 7-րդ և 8-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաների գրավոր աշխատանքները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է էլ. տարբերակը)։

Լսեցին 9. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ իրականացվել է 2–9-րդ դասարաններում օտար լեզուների դասավանդման գործընթացի համակողմանի ուսումնասիրություն՝ հանրակրթության պետական չափորոշչի (ՀՊՉ) պահանջների

համապատասխանության տեսանկյունից։

Նշվեց, որ ուսուցիչների գերակշիռ մասը արդյունավետորեն կիրառում է ժամանակակից և նորարարական մանկավարժական մեթոդներ՝ ուսուցման գործընթացում առաջնահերթ ուշադրություն դարձնելով սովորողների կարողունակությունների, քննադատական մտածողության, հաղորդակցական հմտությունների և ինքնուրույն աշխատանքի կարողությունների զարգացմանը։ Ընդգծվեց, որ դասավանդման ընթացքում լայնորեն կիրառվում են գործնական առաջադրանքներ, համագործակցային ուսուցման տարրեր, հետազոտական աշխատանքներ և խաչվող հասկացությունների փոխկապակցված ներկայացում, ինչը նպաստում է գիտելիքների առավել խորքային ընկալմանը և դրանց կիրառմանը տարբեր իրավիճակներում։

Զեկուցողը կարևորեց նաև գնահատման գործընթացի պատշաճ կազմակերպումը՝ նշելով, որ ուսուցիչների կողմից հիմնականում պահպանվում են ձևավորող և միավորային գնահատման սկզբունքները։ Դրանց կիրառումը հնարավորություն է տալիս ապահովել սովորողների առաջընթացի շարունակական մշտադիտարկում, ժամանակին արձագանքել առաջացած դժվարություններին և տրամադրել արդյունավետ հետադարձ կապ։

Միաժամանակ ուսումնասիրության արդյունքներով արձանագրվեց, որ 7–9-րդ դասարաններում առկա են որոշակի մարտահրավերներ՝ հատկապես նախագծային աշխատանքների պլանավորման, կազմակերպման և իրականացման գործընթացներում։ Որոշ դեպքերում նկատվել է նաև ավանդական ուսուցման մեթոդների գերակշռություն, ինչը սահմանափակում է սովորողների ակտիվ մասնակցությունն ու նախաձեռնողականության դրսևորումը։

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ օտար լեզուների դասավանդման ընդհանուր մակարդակը բավարար է և համապատասխանում է ՀՊՉ հիմնական պահանջներին, սակայն առկա խնդիրների հաղթահարման և ուսուցման արդյունավետության հետագա բարձրացման նպատակով անհրաժեշտ է շարունակական մեթոդական աջակցություն, փորձի փոխանակման խթանում և նպատակային աշխատանք ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման ուղղությամբ։

Արտահայտվեցին՝ Գայանե Գրիգորյանը, Արաքսյա Առստամյանը

Արտահայտվողները նշեցին, որ հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրումը կրթական գործընթացում ստեղծել է առավել հետաքրքիր, ակտիվ և սովորողակենտրոն ուսումնական միջավայր, սակայն միաժամանակ ուսուցիչներից պահանջում է դասերի առավել մանրակրկիտ և խորքային պլանավորում, ուսումնական նյութի նպատակային ընտրություն և ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառում։

Արաքսյա Առստամյանը կարևորեց նոր չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների հետևողական և արդյունավետ կիրառումը դասապրոցեսում՝ ընդգծելով, որ դրանց զարգացումը պետք է դառնա յուրաքանչյուր դասի պլանավորման և իրականացման առանցքային բաղադրիչը։ Նա նշեց, որ ուսուցման գործընթացը պետք է միտված լինի ոչ միայն գիտելիքների փոխանցմանը, այլև սովորողների ինքնաճանաչման, համագործակցության, հաղորդակցման, ստեղծարար մտածողության և սովորելու կարողության զարգացմանը։

Գայանե Գրիգորյանը կարևորեց փոխադարձ դասալսումների շարունակական իրականացումը՝ այն դիտարկելով որպես մասնագիտական փորձի փոխանակման, արդյունավետ մանկավարժական փորձի տարածման և ուսուցիչների մասնագիտական զարգացման կարևոր գործիք։ Նա նաև ընդգծեց սովորողների ինքնուրույն, վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը՝ նշելով, որ այս ուղղությամբ դեռևս առկա է կատարելագործման կարիք, և անհրաժեշտ է

առավել հաճախ կիրառել հետազոտական, նախագծային և համագործակցային ուսուցման մեթոդներ։

Ամփոփելով՝ արտահայտվողները շեշտեցին, որ նոր չափորոշչի պահանջների լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է շարունակական մասնագիտական զարգացում, մեթոդական աջակցություն և մանկավարժական փորձի համակարգված փոխանակում՝ ուսուցման որակի շարունակական բարձրացումն ապահովելու նպատակով։

Որոշեցին՝ 2-9-րդ դասարաններում օտար լեզուների մասով ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության արդյունքներն ընդունել ի գիտություն։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №10

«05» մայիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Լուսինե Հայրյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման արտահերթ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 10-րդ արտահերթ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը տեղեկացրեց, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի ծնողը դիմում է ներկայացրել՝ երեխաների ուսումը Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց համապատասխան դասարաններում շարունակելու նպատակով:
Նշվեց, որ ներկայացված փաստաթղթերի և գործող իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում, հիմք ընդունելով «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգի» 21-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ կետերի պահանջները, սովորողները ենթակա են ընդունման մեկ դասարան ցածր՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ դասարաններ:
Զեկուցողը ընդգծեց, որ գործընթացի պատշաճ և կարգին համապատասխան կազմակերպման նպատակով իրականացվել է սովորողների գիտելիքների մակարդակի գնահատում: Այդ նպատակով Մանե Դանիելյանը և Արթուր Դանիելյանը տվյալ դասարանների ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կատարել են գրավոր աշխատանքներ, որոնց արդյունքները

ենթարկվել են մասնագիտական վերլուծության։
Նշվեց նաև, որ գործընթացի հաջորդ փուլը կազմակերպվել է վերոնշյալ կարգի 30-րդ կետի պահանջներին համապատասխան։ Մասնագիտական խմբի կողմից սովորողների փաստացի առարկայական գիտելիքների վերաբերյալ ներկայացված գրավոր եզրակացության հիման վրա որոշում է կայացվել նրանց ընդունել համապատասխան դասարաններ։
Զեկուցողը հավելեց, որ անհրաժեշտ է հաստատել ուսումնական պլանով նախատեսված առարկաների անհատական ուսումնական պլանները, ինչպես նաև լրացուցիչ դասընթացների կազմակերպման ժամանակացույցը։ Այդ շրջանակում սովորողների համար կիրականացվի նպատակային աջակցող ուսուցում՝ բաց թողնված ծրագրային նյութի լիարժեք յուրացումն ապահովելու նպատակով։
Ընդգծվեց, որ մասնագիտական եզրակացությունը կազմվել է բոլոր առարկաներից իրականացված գրավոր ստուգումների արդյունքների համակողմանի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունը, թափանցիկությունը և գործող կարգի պահանջների լիարժեք պահպանումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին սովորողների կրթության անընդհատության և կրթական գործընթացում նրանց լիարժեք ներգրավվածության ապահովումը՝ դրական գնահատելով ընդունելության գործընթացի կազմակերպումն ու իրականացումը։ Նշվեց, որ գործընթացն իրականացվել է գործող իրավական կարգավորումների և սահմանված ընթացակարգերի պահանջներին համապատասխան՝ ապահովելով թափանցիկություն, օբյեկտիվություն և հավասար մոտեցում բոլոր սովորողների նկատմամբ։
Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ սովորողների գիտելիքների մակարդակի նախնական գնահատումը, ինչպես նաև մասնագիտական խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն են տվել ստանալ նրանց կրթական պատրաստվածության վերաբերյալ ամբողջական պատկերացում և առավել արդյունավետ պլանավորել հետագա ուսումնական գործընթացը։
Արտահայտվողները կարևորեցին նաև անհատական ուսումնական պլանների մշակման և լրացուցիչ պարապմունքների կազմակերպման անհրաժեշտությունը՝ նշելով, որ դրանք կնպաստեն բաց թողնված ծրագրային նյութի նպատակային յուրացմանը, գիտելիքների հնարավոր բացերի լրացմանը և սովորողների կրթական կարիքներին համապատասխան աջակցություն ցուցաբերելուն։
Միաժամանակ առանձնահատուկ կարևորվեց դպրոց–ընտանիք համագործակցության դերը՝ որպես սովորողների հաջող հարմարվողականության և առաջընթացի կարևոր նախապայման։ Արտահայտվողները համոզմունք հայտնեցին, որ դպրոցի և ծնողների միջև շարունակական ու կառուցողական համագործակցության շնորհիվ սովորողները կկարողանան արագ ինտեգրվել նոր կրթական միջավայրին, հաղթահարել առաջացած դժվարությունները և ապահովել կայուն ու պատշաճ ուսումնական առաջադիմություն։

Որոշեցին՝

- Հավանության արժանացնել 7-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված թեմաներից 7-րդ «Գ» դասարանի սովորող Մանե Դանիելյանի համար նախատեսված անհատական առարկայական պլանը (կցվում է էլ. տարբերակով)։ և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը (կցվում է) և ներկայացնել տնօրենին հաստատման։
- Հավանության արժանացնել 8-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված թեմաներից 8-րդ «Ա» դասարանի սովորող Արթուր Դանիելյանի համար նախատեսված

անհատական առարկայական պլանը (կցվում է էլ. տարբերակով)։ և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը (կցվում է) և ներկայացնել տնօրենին հաստատման։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

« 29» մայիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Լուսինե Հայրյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Լիանա Գրիգորյան
7. Թագուհի Գրիգորյան

Նիստին ներկա էին տնօրենի ԺՊ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ Մ. Պետրոսյան, նախագծային աշխատանքների ղեկավարներ)
4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկման մասին:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, ինչպես նաև ներկայացրեց կատարված աշխատանքները՝ նշելով, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ և

սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Մ. Պետրոսյան, նախագծային աշխատանքների ղեկավարներ)

Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահ Մարգարիտա Պետրոսյանը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից իրականացված նախագծային աշխատանքները «Ռուսաց լեզու», «Անգլերեն» և «Ֆրանսերեն» առարկաներից: Նախագծային աշխատանքները կատարել են 7-րդ «Ա», «Բ», «Գ», 8-րդ «Ա», «Բ», «Գ» և 9 «Ա», «Բ», «Գ» դասարանների աշակերտները: Ներկայացված աշխատանքները բավականին հետաքրքիր էին, բազմաբովանդակ և ուսուցանող: Զեկուցողը շեշտեց միջառարկայական նախագծերի կարևորությունը, քանի որ դրանք ավելի արդյունավետ և բովանդակային առումով ավելի հետաքրքիր նախագծեր էին: Բավականին հետաքրքիր էին նաև նախագծային աշխատանքների պրոդուկտները:

2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների ղեկավարները ներկայացրին իրենց հաշվետվությունները: Այնուհետև նախագծային աշխատանքների ղեկավարները հանգամանալից ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքների հաշվետվությունները, նաև անդրադարձան մի շարք հարցերի, որոնք առաջացել էին աշխատանքների իրականացման ժամանակ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները շեշտեցին ուսումնական նախագծերի իրականացման կարևորությունը աշակերտների համար, քանի որ այդ նախագծերի արդյունքում աշակերտներն այնպիսի գիտելիք և փորձ են ձեռք բերում, որոնք կարող են կիրառել հետագա կյանքի ընթացքում: Այդ իսկ պատճառով ուսուցիչները պետք է օժանդակեն սովորողների անհրաժեշտ կրթական կարողունակությունների և բովանդակային գիտելիքների ձևավորմանը, զարգացնեն համապատասխան հմտություններ, ձևավորեն կյանքի և աշխարհի մարտահրավերներն ընդունելու համար անհրաժեշտ արժեհամակարգ, ապահովեն սովորողների փոխհամագործակցությունը նախագծային աշխատանքի կատարման ընթացքում:

Լիանա Գրիգորյանը նշեց, որ նախագծերի շրջանակում սովորողներն ավելի խորն են ուսումնասիրում թեման, քան ստանդարտ դասերի ժամանակ և կարողանում են կապ ստեղծել տեսական և գործնական մասերի միջև: Խոսեց նաև խմբերի կազմման հետևողական աշխատանքների մասին՝ նշելով, որ անհրաժեշտ համարեց տարբեր կարողություններ ունեցող աշակերտներին ընդգրկել խմբերում, քանի որ այդպես հնարավոր կլինի սովորեցնել թիմային աշխատանքի հնարներն ու մեթոդները:

Լուսինե Բաղդասարյանը կարևորեց այն, որ նախագծային ուսուցումը աշխույժ է դարձնում երեխաների ուսումնական գործընթացը մեծացնում է տարբեր գիտությունների վերաբերյալ նորանոր տեղեկեկատվություններ ստանալու ցանկությունը: Այն հնարավորություն է տալիս գործնական հմտություններ ձեռք բերել, քանի որ կատարում են հետազոտություններ, տվյալների վերլուծություններ, զարգացնում են նորարարական մտածողություն և խնդիրները ինքնուրույն լուծելու հմտություններ:

Արտահայտվողները նշեցին, որ նախագծի մեջ կարևոր դեր է խաղում նախագծային աշխատանքի հիմնահարցի, խնդիրների ձևակերպումը, առաջնային նպատակի առանձնացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները:

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության իրականացման ընթացքում արձանագրված բացթողումներն ու թերությունները, ինչպես նաև տեխնիկական խնդիրների պատճառով որոշ գնահատականներ չեն պահպանվել: Իսկ նոր չափորոշչային դասարաններում նախագծային աշխատանքների մատենավարությունն իրականացվել է ճշգրտորեն՝ առանց շեղումների, թեև որոշ ուսուցիչների համար այն նորություն էր: Ամփոփելով մատենավարության ստուգման արդյունքները՝ մ/մ նախագահ Մարգարիտա Պետրոսյանը նշեց, որ ընթացիկ ուսումնական տարում ուսուցիչների կողմից արձանագրված թերությունները նախորդ տարիների համեմատությամբ էապես նվազել են:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Արաքսյա Առստամյանն ընդգծվեց, որ անհրաժեշտ է պարբերաբար ստուգել էլեկտրոնային մատյանները՝ նրանցում առկա թերացումները ժամանակին վեր հանելու, քննարկելու, շտկելու և դրանց խորացումը կանխելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում երկարօրյա ուսուցումը կազմակերպվել է երկու փուլով՝ առաջին կիսամյակում՝ հոկտեմբերից դեկտեմբեր, և երկրորդ կիսամյակում՝ փետրվարից մայիս ամիսներին: Երկարօրյա ուսուցման խմբակներում ընդգրկվել են 2-4-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների սովորողները:

Աշակերտների ընդգրկումը երկարօրյա ուսուցման խմբերում իրականացվել է «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի» 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջներին համապատասխան: Ըստ սահմանված կարգի՝ խմբերում ընդգրկվել են այն սովորողները, որոնք առաջադիմության բնութագրող գնահատման, ձևավորող և ամփոփիչ գնահատման արդյունքների, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական դիտարկումների հիման վրա ունեցել են լրացուցիչ աջակցության կարիք:

Զեկուցողը տեղեկացրեց, որ երկարօրյա ուսուցման կազմակերպման ողջ ընթացքում իր կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ և վերահսկողական աշխատանքներ՝ դասապրոցեսի արդյունավետությունը գնահատելու նպատակով: Դիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ աշխատանքներն իրականացվել են պատշաճ մակարդակով, իսկ ստացված արդյունքները գնահատվում են գոհացուցիչ:

Անդրադառնալով երկրորդ կիսամյակի աշխատանքներին՝ զեկուցողը կարևորեց դասապրոցեսի արդյունավետ կազմակերպումը, սովորողների անհատական առաջընթացի խթանումը և ուսումնական դժվարությունների հաղթահարմանն ուղղված նպատակային աշխատանքների իրականացումը: Նշվեց, որ երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչները պարբերաբար ներկայացրել են հաշվետվություններ, որոնց հիման վրա ամփոփվել են

կատարված աշխատանքները, արձանագրված արդյունքներն ու սովորողների ձեռքբերումները։

Զեկուցողը նաև տեղեկացրեց, որ ուսումնական տարվա ավարտին ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվել է երկարօրյա ուսուցման կազմակերպման և իրականացման գործընթացի վերահսկողություն։ Ուսումնասիրվել են համապատասխան փաստաթղթերը, հրամանները, ծրագրային և հաշվետվական նյութերը։ Վերահսկողության արդյունքները գնահատվել են գոհացուցիչ, իսկ իրականացված աշխատանքները՝ համապատասխան չափորոշչային պահանջներին և գործող կարգավորումներին։

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցման խմբերի գործունեությունը նպաստել է սովորողների ուսումնական առաջընթացի բարելավմանը, գիտելիքների ամրապնդմանը և կրթական գործընթացում նրանց առավել ակտիվ ներգրավվածությանը (կցվում է 2025-2026 ուսումնական տարվա երկարօրյա ուսուցման կազմակերպման աշակերտների անվանացանկը (հոկտեմբեր-մայիս))։

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները՝ անդրադառնալով իրականացված աշխատանքներին, ուսուցման գործընթացի ընթացքում արձանագրված ձեռքբերումներին, սովորողների առաջընթացին, ինչպես նաև ծագած խնդիրներին և դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված քայլերին։ Ներկայացվեցին սովորողների կրթական արդյունքների բարելավմանն ուղղված աշխատանքները, կիրառված մեթոդներն ու մոտեցումները, ինչպես նաև արձանագրված դրական փոփոխությունները։ Հաշվետվությունների ամփոփման արդյունքում արձանագրվեց, որ երկարօրյա ուսուցման խմբակների գործունեությունը նպաստել է սովորողների գիտելիքների ամրապնդմանը, ուսումնական դժվարությունների հաղթահարմանը և կրթական գործընթացում նրանց առավել ակտիվ մասնակցությանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Ներառական մասի համակարգող, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը զեկուցեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարվող աշխատանքները ընթանում են ըստ սահմանված ժամանակացույցի և գտնվում են ավարտական փուլում։ Աշակերտների համար ԱՈՒՊ-ով դրված նպատակները հիմնականում հաղթահարված են, իսկ չհաղթահարված նպատակները քննարկվել են մշտադիտարկման ժամանակ, փոփոխության են ենթարկվել և արձանագրվել արձանագրության թերթիկներում։ 4-րդ և 9-րդ դասարաններում սովորող բոլոր ԿԱՊԿՈՒ աշակերտները, ծնողների դիմումների համաձայն, ազատված են քննություններից։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին ուսուցիչների և ուսուցչի օգնականների համագործակցության մակարդակի բարձրացման հնարավորությունները, ըստ ԱՈՒՊ-ների՝ աշակերտների հետ աշխատանքի ճիշտ կազմակերպումը։ Այս գործընթացը պետք է ոչ միայն ձևական չլինի, այլև ծառայի իրական աջակցման նպատակին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը։

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա համար նախատեսված և իրականացված աշխատանքների հաշվետվությունը։ Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում նախատեսված բոլոր աշխատանքները հաջողությամբ իրականացվել, ստուգվել և ամփոփվել են։

Մայիս ամսվա ընթացքում հումանիտար առարկաների մասնախմբի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Վերահսկվել է ուսումնական ծրագրերի կատարողականը՝ ապահովելով թեմատիկ պլանների համապատասխան ընթացքը։
- Կազմակերպվել և անցկացվել են տնօրենության գրավոր և ամփոփիչ աշխատանքներ, իրականացվել է արդյունքների վերլուծություն։
- Իրականացվել են դասալսումներ և դասերի դիտարկումներ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով։
- Մշտական ուշադրություն է դարձվել սովորողների առաջադիմության, կարգապահության և հաճախումների վերահսկմանը։
- Ամփոփվել են ավարտական և փոխադրական քննությունների նախապատրաստական աշխատանքները, տրվել են համապատասխան հանձնարարականներ և ցուցումներ։

Կատարված աշխատանքների արդյունքները վկայում են, որ մասնախումբը մայիս ամսվա ընթացքում իրականացրել է իր առջև դրված խնդիրներն ու նպատակները՝ ապահովելով ուսումնական գործընթացի բնականոն և արդյունավետ կազմակերպումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումները և գործառույթները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ, ժամանակին և արդյունավետ ձևով։ Նրանց խոսքով՝ աշխատանքների իրականացման ընթացքում որևէ բացթողում կամ թերակատարություն չի արձանագրվել, ինչը վկայում է ուսուցիչների բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և մասնագիտական նվիրվածության մասին։

Ավելին՝ ընդգծվեց, որ մեթոդմիավորման գործունեությունը կազմակերպվել է համագործակցային և ստեղծարար միջավայրում, ինչը նպաստել է փորձի արդյունավետ փոխանակմանը, նոր մեթոդների ներդրմանը և կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը։ Արդյունքում ապահովվել է տարեկան պլանի նպատակային և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև դպրոցի մանկավարժական համայնքի միասնական աշխատանքը՝ համատեղ նպատակների հասնելու ուղղությամբ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ Մ. Պետրոսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №12

«19» հունիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մարգարիտա Պետրոսյան (մ/մ նախագահ)
2. Լուսինե Հայրյան
3. Շահանե Գյուրջյան
4. Լուսինե Բաղդասարյան
5. Գայանե Գրիգորյան
6. Թագուհի Գրիգորյան
7. Լիանա Գրիգորյան

Նիստին ներկա էին տնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, օտար լեզուների ուղղվածությամբ խմբակների ղեկավարներ, կաբինետների վարիչներ, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1 Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

2 Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

3 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

4 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

5 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

6 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան, ՄՄ անդամներ)

7 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

8 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն դպրոցի տնօրենին:
(զեկուցողներ՝ Մ. Պետրոսյան)

9 2026–2027 ուսումնական տարվա ընթացքում 1-5-րդ դասարաններում ամփոփիչ գնահատման իրականացման հարցի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

10 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝Ա. Գևորգյան)

11 «Օտար լեզու» («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») առարկայի դասաժամերի ընթացքում դասարանների խմբերի բաժանում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Լսեցին 1. Օտար լեզուների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Օտար լեզուների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին՝ նշելով, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ կերպով և սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Օտար լեզուների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ավարտական քննությունների արդյունքներն ընդհանուր առմամբ գնահատվում են դրական, քանի որ աշակերտների մեծ մասը կարողացել է հաղթահարել գնահատման սահմանված նվազագույն շեմը՝ ցուցաբերելով բավարար գիտելիքներ և կիրառական հմտություններ, արձանագրվել են նաև բարձր և գերազանց արդյունքներ, որոնք վկայում են սովորողների կողմից առարկայական նյութի ընկալման, ինչպես նաև նրանց պատասխանատվության և նպատակասլացության մասին:

Զեկուցողը շեշտեց, որ առաջիկա տարիներին անհրաժեշտ է շարունակաբար ապահովել ոչ միայն առարկայական գիտելիքների խորացմանը, այլև քննադատական և վերլուծական մտածողության զարգացմանը նպատակաուղղված և հետևողական աշխատանք, ինչպես նաև ընդգծեց հատկապես տարրական և միջին դասարաններում ինքնուրույն աշխատանքի կարողությունների՝ որպես բարձր դասարաններում հաջողության հասնելու հիմքի ձևավորման կարևորությունը:

Վերջում զեկուցողը ներկայացրեց ավարտական քննությունների արդյունքները «Ռուսաց լեզու», «Ֆրանսերեն» և «Անգլերեն» առարկաներից՝ նշելով արդյունքների համադրելիությունը նախորդ տարիների տվյալների հետ և ցույց տալով ոլորտային զարգացման հնարավոր ուղղությունները:

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյանը, Թ. Գրիգորյանը

Արտահայտվողները նշեցին, որ 2025-2026 ուսումնական տարվա ավարտական քննությունները բարձր մակարդակով կազմակերպելն ու արդյունավետ իրականացնելը պահանջեցին համալիր և համակարգված մոտեցում: Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ են քայլեր, որոնք կնպաստեն ինչպես աշակերտների առարկայական գիտելիքների խորացմանը, այնպես էլ բանավոր և գրավոր արտահայտման կարողությունների հետևողական զարգացմանը:

Պետք է նաև հատուկ ուշադրություն դարձնել լեզվական գրագիտության բարձրացմանը, որը քննությունների բարձր արդյունքների և աշակերտների ընդհանուր պատրաստվածության ամրապնդման հիմնական նախադրյալն է:

Շեշտվեց նաև միասնական մոտեցումների մշակման կարևորությունը թե՛ բանավոր, և թե՛ գրավոր քննությունների նախապատրաստական փուլերում, ինչը կնպաստի գնահատման համակարգի որակի բարելավմանը:

Վերջում ընդգծվեց, որ աշակերտների պատասխանատվության զգացումի ձևավորման, մոտիվացիայի բարձրացման ու նրանց ներուժի լիարժեք

իրացման համար անհրաժեշտ է ժամանակին ու նպատակաուղղված կիրառել մեթոդական գործիքներն ու տարաբնույթ կրթական ռեսուրսները և ստեղծել աջակցող միջավայրի։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների մասին տեղեկատվությունը (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում օտար լեզուներ դասավանդող ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի և բաց դաս-միջոցառումների ամփոփ վերլուծությունը՝ ընդգծելով, որ իրականացված միջոցառումները տարբերվել են իրենց նորարարական բովանդակությամբ և մեթոդական մոտեցումներով։ Դասերի ընթացքում ակտիվորեն կիրառվել են ստեղծագործական մեթոդներ, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինտերակտիվ ուսուցման գործիքներ, որոնք նպաստել են աշակերտների հետաքրքրության ու ներգրավվածության մակարդակի բարձրացմանը։

Ինչպես ուսումնական արդյունքների տեսանկյունից, այնպես էլ ուսուցիչների մասնագիտական զարգացման առումով բաց դասերն արդյունավետ էին և ստեղծել են հարթակ՝ համագործակցության և փորձի փոխանակման համար։ Աշակերտները դրսևորել են վերլուծական մտածողություն, գործադրել են քննադատական մոտեցումներ, կիրառել տեխնոլոգիական լուծումներ և ակտիվորեն ներգրավվել բանավեճային գործընթացներում՝ զարգացնելով նաև բանավոր արտահայտման ու հաղորդակցման կարողությունները։

Զեկուցողը ներկայացրեց նաև տեղեկատվություն նախապես հաստատված պլանով իրականացված բոլոր բաց դասերի և միջոցառումների վերաբերյալ՝ ընդգծելով դրանց համապատասխանությունը ուսումնական գործընթացի նպատակներին և չափորոշչային պահանջներին։

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը, Լ. Բաղդասարյանը։

Արտահայտվողները շեշտեցին աշակերտների ինքնագնահատման և միմյանց գնահատման հմտությունների ձևավորման՝ ուսուցման գործընթացի անբաժանելի բաղադրիչ լինելու կարևորությունը։ Ըստ իրենց դիտարկումների՝ նման մոտեցումները նպաստում են սովորողների ինքնագիտակցության, պատասխանատվության և քննադատական մտածողության զարգացմանը, ինչպես նաև խթանում են սովորող-սովորող արդյունավետ հաղորդակցությունն ու համագործակցային միջավայրի ձևավորումը։

Ըստ ներկայացված տեսակետների՝ բաց դասերը կարևոր գործիք են ոչ միայն աշակերտների ակտիվացման, այլև ուսուցիչների մասնագիտական առաջընթացի խթանման տեսանկյունից, քանի որ դրանք նպաստում են մեթոդաբանական կարողությունների զարգացմանը, նորարարական մեթոդների կիրառման փորձի տարածմանը և ուսուցչական համայնքի ներսում շարունակական մասնագիտական երկխոսության ձևավորմանը։

Ընդգծվեց, որ նմանատիպ դասերը պետք է կազմակերպվեն նպատակային, համակարգված և ժամանակակից մեթոդաբանությամբ՝ ուսուցման նորարարական ձևաչափերը դիտարկելը, մասնագիտական աճ ապահովելը և ուսուցիչների միջև արդյունավետ համագործակցությունը խթանելը հնարավոր դարձնելու համար։

Արաքսյա Առստամյանը հավելեց, որ բաց դասերի և միջոցառումների կազմակերպման գործընթացում պետք է խստորեն հետևել նախապես սահմանված նվազագույն չափանիշներին, դրանց լիարժեք կիրառումն ու գնահատման պրոցեսի թափանցիկությունն ապահովելու համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Արմիդա Գևորգյանը կարևորեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների գործունեությունը՝ մատնանշելով դրանց էական դերը կրթական գործընթացի բազմազանեցման, աշակերտների ունակությունների բացահայտման և ստեղծագործական հմտությունների զարգացման գործում: Նա ընդգծեց, որ արդյունավետ կազմակերպված խմբակային աշխատանքը խթանում է սովորողների հետաքրքրության աճը, նախաձեռնողականությունը և դասարանական ուսուցումից դուրս ինքնարտահայտման հնարավորությունները:

Գևորգյանը նշեց նաև մի շարք խնդիրներ՝ մասնավորապես այն, որ որոշ խմբակավարներ չեն պահպանել պարապմունքների ժամանակացույցը, ինչն ազդել է խմբակների գործունեության հետևողականության և որակի վրա:

Հատուկ ուշադրություն դարձվեց խմբակների գծով իրականացված աշխատանքի փաստագրության և մատենավարության գործընթացին: Գևորգյանը շեշտեց, որ առկա են թերացումներ ինչպես ընթացիկ գրանցումներում, այնպես էլ ամփոփման փուլում, և կոչ արեց հետևողականորեն կատարել մատենագրական աշխատանքը՝ հստակ ձևակերպված փաստաթղթային ձևաչափով և ըստ հաստատված չափանիշների:

Արմիդա Գևորգյանը նշեց, որ իր կողմից իրականացված դիտարկումների արդյունքները, որոնք կատարվել էին խմբակների պարապմունքների ընթացքում: Ըստ այդ դիտարկումների՝ ընդհանուր արդյունքները կարելի է համարել գոհացուցիչ, սակայն արձանագրվել են դեպքեր, երբ որոշ խմբակներ չեն իրականացվել պատշաճ ձևով և չեն բավարարել սպասվող որակական չափանիշներին:

Խմբակավարները ներկայացրեցին 2025-2026 ուսումնական տարում իրենց իրականացրած աշխատանքների հաշվետվությունները՝ նշելով դասընթացների բովանդակությունը, ներգրավված աշակերտների ակտիվությունը, ինչպես նաև ձեռք բերված արդյունքները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը բարձր գնահատեց 2025-2026 ուսումնական տարվա խմբակների աշխատանքի արդյունքները՝ կարևորելով դրանց դերը կրթական միջավայրի հարստացման, աշակերտների ներուժի բացահայտման և ստեղծագործական զարգացման գործում: Նա շեշտեց խմբակների գործունեության շարունակական վերլուծության և գնահատման անհրաժեշտությունը՝ նշելով, որ ի հայտ եկած խնդիրները պետք է մանրամասն ուսումնասիրվեն, ինչպես նաև պետք է մշակել կանխարգելիչ և բարելավող մեխանիզմներ՝ կանխելու համար նմանօրինակ բացթողումների կրկնությունը հաջորդ ուսումնական տարիներին:

Ավանեսյանը շեշտեց, որ նման իրավիճակները պետք է հաշվի առնել 2026-2027 ուսումնական տարվա խմբակների ժամերի պլանավորման և բաշխման ժամանակ, որպեսզի ապահովվի ռեսուրսների առավել նպատակային օգտագործում: Նա նաև առանձնահատուկ անդրադարձավ այն խմբակներին, որոնցում աշակերտների մասնակցությունն ու ներգրավվածության մակարդակը զգալիորեն բարձր են եղել: Ըստ նրա՝ սա վկայում է այն մասին, որ ճիշտ պլանավորված և հետաքրքիր բովանդակությամբ խմբակները կարող են ձևավորել աշակերտակենտրոն, մոտիվացնող և արդյունքատու կրթական մթնոլորտ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան, ՄՄ անդամներ)

Մեթոդմիավորման նախագահը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված գործունեության համապարփակ հաշվետվությունը՝ ընդգծելով և՛ ձեռքբերումները, և՛ թերությունները: Նա հատուկ անդրադարձավ ուսումնական տարվա սկզբին հաստատված աշխատանքային ժամանակացույցի կատարման ընթացքին՝ հստակ ներկայացնելով, թե որ միջոցառումները և գործողություններն են իրականացվել ըստ նախատեսված ծրագրի, իսկ որոնք չեն կայացել և ինչ պատճառներով:

Հաշվետու նիստի ընթացքում մեթոդմիավորման անդամները ներկայացրեցին իրենց կողմից կատարված աշխատանքների ամփոփումները՝ վերլուծելով արդյունքները և գնահատելով դրանց ազդեցությունը ուսումնական գործընթացի որակի վրա: Առանձնահատուկ ուշադրություն դարձրեցին առարկայական մեթոդների բարելավմանը, միջառարկայական կապերի զարգացմանը և համագործակցային ձևաչափով կազմակերպված մեթոդական քննարկումներին:

Ուսուցիչները մանրամասն ներկայացրեցին նաև ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ տարվող աշխատանքը՝ շեշտելով անհատական մոտեցման, լրացուցիչ խորհրդատվության և հարմարեցված մեթոդների կիրառման կարևորությունը: Ներկայացված տվյալները փաստեցին ուսուցիչների կողմից կատարված հետևողական աշխատանքի մասին, որն ուղղված էր ներառական կրթության ապահովմանը և բոլոր աշակերտների կրթական առաջընթացի աջակցմանը:

Արտահայտվեցին՝ Լ. Հայրյանը, Լ. Գրիգորյանը:

Արտահայտվողները կարևորեցին մեթոդական հանդիպումների և քննարկումների ընթացքում ներկայացված հաշվետվությունների վերլուծության դերը՝ այն դիտարկելով որպես վերանայման, գնահատման և առաջադեմ փորձի տարածման արդյունավետ գործիք: Հատուկ նշեցին այն մասին, որ նման ձևաչափով իրականացվող վերլուծական քննարկումները հնարավորություն են տալիս բացահայտելու ուժեղ և թույլ կողմերը, վեր հանելու առկա խնդիրները և մշակելու դրանց լուծման արդյունավետ ուղիներ:

Ուշադրություն դարձրեցին ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ տարվող աշխատանքի գնահատմանը, քննարկեցին այդ ուղղությամբ իրականացված քայլերի արդյունավետությունը՝ մասնավորապես անհատականացված մոտեցումների, ուսումնական նյութի հարմարեցման և աջակցող մեխանիզմների կիրառման տեսանկյունից:

Նշեցին ուսուցիչների և ուսուցչի օգնականների միջև փոխգործակցության կարևորությունը, քանի որ նրանց արդյունավետ համագործակցությունը ԿԱՊԿՈՒՀ աշակերտների՝ ներառական կրթական միջավայրում լիարժեք ներառման նախապայմանն է:

Ներկայացրեցին նաևուսումնական տարվա ընթացքում առաջացած մի շարք խնդիրներ՝ կապված ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ տարվող աշխատանքի կազմակերպման, ռեսուրսների հասանելիության և մասնագիտական պատրաստվածության հետ: Շեշտեցին, որ առաջիկա ուսումնական տարում անհրաժեշտ է մշակել ավելի հստակ քայլեր՝ ներառականության ապահովման գործընթացը կատարելագործելու նպատակով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները՝ առանձնացնելով և՛ ձեռքբերումները, և՛ առկա մարտահրավերները։ Նա նշեց, որ անգամ լավագույն ձևով պլանավորված դասերի ընթացքում կարող են ի հայտ գալ խնդիրներ, որոնք պահանջում են օպերատիվ և մեթոդական հիմնավորված լուծումներ։

Ամփոփելով դասալսումների արդյունքները՝ շեշտեց, որ ուսուցիչները կարողացել են նպաստել աշակերտների քննադատական մտածողության, համագործակցային հմտությունների և ինքնավստահության զարգացմանը, դասերի ընթացքում ապահովել են աշակերտների ակտիվ ներգրավվածություն, ձևավորել են բարձր պատասխանատվության զգացում և նախաձեռնողական մասնակցություն ուսումնական գործընթացին։

Զեկուցողն առանձնացրեց մի քանի հաջողված դասեր, որոնք աչքի են ընկել նորարարական մոտեցումներով, ինտերակտիվ մեթոդներով և ուսումնական նպատակների բարձր արդյունավետությամբ։

Կարևորեց նաև դպրոցի ղեկավար կազմի և մեթոդմիավորումների ակտիվ մասնակցությունը, ինչպես նաև տարբեր մեթոդմիավորումների ներկայացուցիչների ներգրավվածությունը դասալսումներին, մասնավորապես՝ տնօրեն Սերգեյ Ավանեսյանի, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանի մասնակցությամբ կազմակերպված քննարկումները նպաստել են կառուցողական հետադարձ կապի ձևավորմանը, միասնական մոտեցումների մշակմանը և ուսումնական գործընթացի շարունակական կատարելագործմանը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Լ. Բաղդասարյանը։

Սերգեյ Ավանեսյանն ու Լուսինե Բաղդասարյանը կարևորեցին դասալսումների դերը ուսուցիչների մասնագիտական աճի և դասավանդման որակի բարձրացման գործում։ Նրանց կարծիքով՝ դասալսումները հանդիսանում են ոչ միայն ուսումնական գործընթացի վերահսկման և գնահատման ձև, այլև ուսուցչական համայնքի զարգացման հզոր միջոց։

Լուսինե Բաղդասարյանը շեշտեց, որ դասալսումները հնարավորություն են տալիս ուսուցիչներին ծանոթանալու այնպիսի նոր մեթոդների և կիրառելի մոտեցումների հետ, որոնք կարող են արդյունավետորեն ներմուծվել ուսումնական պրակտիկա։ Այս փորձի փոխանակումը խթանում է ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, իսկ քննարկումների արդյունքում ձևավորվում են ընդհանուր որակական չափանիշներ, որոնք նպաստում են միասնական մեթոդաբանական մշակույթի ձևավորմանը։

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց դասալսումների կանոնավոր կազմակերպման անհրաժեշտությունը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս բացահայտել դասավանդման ուժեղ և բարելավման ենթակա կողմերը։ Նա նշեց, որ դասալսումները հատկապես արժեքավոր են երիտասարդ ուսուցիչների համար, եթե ներառում են փորձառու գործընկերների դասերը, որոնք կարող են ծառայել որպես ուղեցույց՝ ուղեկցվելով կառուցողական արձագանքով ու պրոֆեսիոնալ խորհրդատվությամբ։

Երկու արտահայտվողներն էլ կարևորեցին դասալսումներից հետո կազմակերպվող քննարկումները՝ որպես վերլուծության, թերությունների շտկման և փորձի փոխանակման կարևոր հարթակ։ Նրանց դիտարկմամբ՝ դիտողությունները պետք է արվեն կառուցողական և նպատակային և ուղղված լինեն ուսուցման որակի բարձրացմանն ու արդյունքների կատարելագործմանը։

Այսպիսով, դասալսումները և դրանց ուղեկցող քննարկումները դիտվում են

որպես ուսուցիչների մասնագիտական զարգացման, մեթոդական հմտությունների կատարելագործման և արդյունավետ դասավանդման ապահովման կարևորագույն գործիքներ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 8. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն դպրոցի տնօրենին։

(զեկուցողներ՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցող Մարգարիտա Պետրոսյանը ներկայացրեց նոր ուսումնական տարում 2-9-րդ դասարանների համար նախատեսված փոփոխությունները, որոնք պայմանավորված են նոր չափորոշչային պահանջների ներդրմամբ։ Նա մանրամասն անդրադարձավ հիմնական փոփոխություններին, որոնք կազդեն ուսումնական բովանդակության և գործընթացի վրա, և ընդգծեց ժամանակակից կրթական պահանջներին համապատասխանելոգ դրանց կարևորությունն ու անհրաժեշտությունը։

Մարգարիտա Պետրոսյանը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում 2-9-րդ դասարանների դասաժամերի նախնական բաշխումը պետք է իրականացվի նոր չափորոշիչների հիման վրա, և որ այս փոփոխությունները կազդեն ինչպես ժամաքանակի բաշխման, այնպես էլ առարկաների ընտրության վրա։

Զեկուցողն առաջարկեց վերջին հստակեցումներից հետո նոր ուսումնական տարվա սկզբին՝ օգոստոսի առաջին նիստի ընթացքում, մանրամասն քննարկել 2-9-րդ դասարանների համար նախատեսված փոփոխությունները։ Նրա խոսքով՝ նախատեսվում են ոչ միայն ժամաքանակին առնչվող, այլ նաև առարկայացանկի կառուցվածքին վերաբերող փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն կրթական ծրագրի արդիականացմանն ու աշակերտների ակադեմիական պահանջներին լիարժեք համապատասխանելու նպատակով։

Արտահայտվեցին՝ Գ. Գրիգորյանը, Շ. Գյուրջյանը։

Արտահայտվողները կարևորեցին 2025-2026 ուսումնական տարվա փորձի վերլուծությունն ու դրա հիման վրա կիրառելի եզրակացությունների կազմումը։ Նրանք ընդգծեցին, որ ձեռքբերված փորձը, ըստ արդիական կարիքների և առաջացող պահանջների պետք է ծառայեցվի ուսումնաօժանդակ գործընթացի բարելավմանը անհրաժեշտ շտկումների ու փոփոխությունների իրականացման միջոցով։

Մասնավորապես շեշտվեց, որ շարունակական գնահատման և վերագնահատման մեխանիզմների կիրառումը կօգնի ժամանակին հայտնաբերել թույլ և ուժեղ կողմերը, ինչն էլ կնպաստի կրթական ծրագրերի և գործունեության արդյունավետ օպտիմալացմանը։ Այդ կերպ հնարավոր կլինի բարելավել ուսուցման որակը, ավելացնել աշակերտների ներգրավվածությունը և առավել նպատակային դարձնել միջոցառումների կազմակերպումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխումը և ներկայացնել առաջարկություն դպրոցի տնօրենին (կցվում է)։

Լսեցին 9. 2026-2027 ուսումնական տարվա ընթացքում 1-5-րդ դասարաններում ամփոփիչ գնահատման իրականացման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցող տնօրեն Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ 2026-2027 ուսումնական տարվանից սկսած 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում բոլոր առարկաներից, ինչպես նաև «Ֆիզկուլտուրա», «Անվտանգ

կենսագործունեություն», «Առողջ ապրելակերպ», «Երաժշտություն», «Կերպարվեստ» և «Արվեստ» առարկաներից 5-12-րդ դասարաններում միավորային գնահատում չի իրականացվելու։ Սովորողի ամփոփիչ գնահատումն իրականացվելու է բնութագրման միջոցով։ Որպես կիսամյակային ամփոփիչ գնահատում՝ յուրաքանչյուր աշակերտի համար կազմվելու է սովորողի առաջադիմության բնութագիր։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Նրանք նշեցին, որ տարրական դասարաններում միավորային գնահատումը հանելը ճիշտ է, քանի որ այդ տարիքում երեխաները դեռևս չեն կարող լիարժեք հասկանալ միավորային գնահատման էությունը։ Իսկ 5-12-րդ դասարաններում նշված առարկաներից բնութագրման միջոցով գնահատելը նույնպես ընդունելի է, սակայն պետք է գործադրել բոլոր միջոցներն ու մեթոդները, որպեսզի սովորողները գիտակցեն, որ բնութագիրը միավորային գնահատումից պակաս կարևոր չէ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվա նոր գնահատման կարգը։

Լսեցին՝10. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) նախատեսված և իրականացված աշխատանքների հաշվետվությունը։ Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ իրականացվել են տարեկան պլանով նախատեսված ուսումնադաստիարակչական միջոցառումները, առարկայական և դաստիարակչական նախաձեռնությունները, բաց դասերը, նախագծային աշխատանքները, ինչպես նաև հայրենասիրական, մշակութային, ճանաչողական և այլ կրթադաստիարակչական միջոցառումներ։ Միաժամանակ հետևողական աշխատանքներ են իրականացվել սովորողների արժեհամակարգի ձևավորման, ուսումնական առաջադիմության բարձրացման, ստեղծագործական և ճանաչողական կարողությունների զարգացման, ինչպես նաև դպրոցական կյանքի տարբեր ոլորտներում նրանց ակտիվ մասնակցության խթանման ուղղությամբ։

Արտահայտվեցին՝ Ս.Ավանեսյանը, Մ. Պետրոսյանը։

Արտահայտվողները բարձր գնահատեցին ուսուցիչների նախաձեռնողականությունն ու պատասխանատու վերաբերմունքը՝ կարևորելով ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված միջոցառումների նպատակային և արդյունավետ իրականացումը։ Նշվեց, որ կատարված աշխատանքները զգալիորեն նպաստել են սովորողների կրթական, մշակութային և հայրենասիրական դաստիարակությանը, ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանը, ինչպես նաև նրանց ստեղծագործական, հաղորդակցական և համագործակցային կարողությունների զարգացմանը։ Ընդգծվեց նաև, որ իրականացված միջոցառումները նպաստել են սովորողների ակտիվ մասնակցության, նախաձեռնողականության և հասարակական պատասխանատվության բարձրացմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ աշխատանքների հաշվետվությունները, կատարված աշխատանքների արդյունքները (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին՝11. «Օտար լեզու» («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») առարկայի դասաժամերի ընթացքում դասարանների խմբերի բաժանման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարում «Օտար լեզու» առարկայի՝ («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») դասաժամերի ընթացքում դասարանների խմբային ուսուցմամբ կազմակերպելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը՝ հիմնվելով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, սովորողների անհատական ներգրավվածության ապահովման և լեզվական կարողությունների զարգացման պահանջների վրա։

Նշվեց, որ դասարանների խմբային բաժանումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կազմակերպել օտար լեզուների ուսուցումը՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունը խոսքային, լսողական, ընթերցողական և գրավոր հմտությունների զարգացման գործընթացում։ Ընդգծվեց, որ փոքր խմբերով ուսուցման պայմաններում ուսուցիչը կարողանում է առավել նպատակային վերահսկել սովորողների առաջընթացը, իրականացնել անհատական մոտեցում, ապահովել սխալների ժամանակին շտկում և նպաստել լեզվական կարողությունների ավելի խորքային ձևավորմանը։

Առանձնահատուկ կարևորվեց օտար լեզուների ուսուցման առանձնահատկությունը, քանի որ դրանք պահանջում են ինտենսիվ հաղորդակցություն, խոսքային ակտիվություն և մշտական փոխազդեցություն ուսուցչի ու սովորողների միջև։ Այդ համատեքստում խմբային ուսուցումը դիտարկվում է որպես առավել արդյունավետ կազմակերպչական ձև, որը նպաստում է սովորողների խոսքային ակտիվության բարձրացմանը և լեզվի գործնական կիրառման ընդլայնմանը։

Զեկուցողը առաջարկեց 2–9-րդ դասարաններում, այն դեպքերում, երբ դասարանում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի, «Օտար լեզու» առարկայի դասաժամերի շրջանակում դասարանը բաժանել երկու հավասար խմբի՝ ապահովելով ուսուցման առավել արդյունավետ կազմակերպում և բարձր արդյունքներ։

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ խմբային ուսուցման կիրառումը օտար լեզուների դասաժամերին կնպաստի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, սովորողների լեզվական կարողունակությունների զարգացմանը և կրթական արդյունքների բարելավմանը։

Զեկուցողը նաև ընդգծեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում գործող «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1–11-րդ դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցի» 5-րդ կետի համաձայն՝ 2–9-րդ դասարաններում «Օտար լեզու-1» և «Օտար լեզու-2» առարկաների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն իրենց ելույթներում կարևորեցին օտար լեզուների («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») դասաժամերին խմբային ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունը՝ ընդգծելով, որ այն պայմանավորված է առարկայի բովանդակային և մեթոդական առանձնահատկություններով։

Նշվեց, որ օտար լեզուների ուսուցման գործընթացում խմբային բաժանումը զգալիորեն բարձրացնում է սովորողների խոսքային ակտիվությունը, հաղորդակցական կարողությունների զարգացումը և ուսումնական նյութի գործնական կիրառման արդյունավետությունը։ Արտահայտվողները ընդգծեցին, որ փոքր խմբերում ուսուցչի կողմից իրականացվող անհատական մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի արագ արձագանքել սովորողների դժվարություններին, ապահովել սխալների ժամանակին ուղղում և բարձրացնել ուսուցման որակը։

Միաժամանակ նշվեց, որ նման կազմակերպման ձևը նպաստում է դասապրոցեսի առավել ինտերակտիվ անցկացմանը, սովորողների ներգրավվածության աճին և լեզվական հմտությունների՝ լսելու, խոսելու, կարդալու և գրելու համաչափ զարգացմանը։

Արտահայտվողները կարևորեցին նաև այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը համապատասխանում է գործող ուղեցույցի պահանջներին և հիմնավորված է ինչպես իրավական, այնպես էլ մանկավարժական տեսանկյունից։ Նշվեց, որ դասարանների բաժանումը 20 և ավելի սովորողների դեպքում լիովին արդարացված է և տարիների փորձով արդեն իսկ ապացուցել է իր արդյունավետությունը։

Ամփոփելով՝ արտահայտվողները համոզմունք հայտնեցին, որ օտար լեզուների դասաժամերին խմբային ուսուցման կիրառումը կնպաստի ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը, սովորողների լեզվական կարողունակությունների զարգացմանը և ավելի արդյունավետ ուսուցման կազմակերպմանը։

Որոշեցին՝ 1. Հիմք ընդունելով գործող կարգավորումներն ու ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ 2026-2027 ուսումնական տարում «Օտար լեզու» («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») առարկայի դասաժամերի ընթացքում խմբերի բաժանել այն դասարանները, որոնցում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի։

2. Ներկայացնել համապատասխան առաջարկությունը մանկավարժական խորհրդի նիստի ընթացքում։

Մ/Մ նախագահ՝ Մ. Պետրոսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում *Օտար լեզուների մեթոդմիավորումը* գումարել է *12 նիստ*, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն։*

Օտար լեզուների մեթոդմիավորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	19.08.2025	13
2	2	24.09.2025	7
3	3	20.10.2025	6
4	4	24.11.2025	6
5	5	22.12.2025	15
6	6	26.01.2026	8
7	7	23.02.2026	7
8	8	23.03.2026	6
9	9	27.04.2026	9
10	10	05.05.2026	2 (արտահերթ)
11	11	29.05.2026	7
12	12	19.06.2026	11

Օտար լեզուների մեթոդմիավորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է *91* էջից։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Պետրոսյան

«19» հունիսի 2026թ.